

ԷՋՄԻԱԾՆ

1982

Է



ԼԹ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յուլիս

1982

ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱՂԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱՋՆԱԳՈՑՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀՈՒԼԻՍ 14 ԹՎԱԿԻՐ ՆԱՄԱԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱՄՆ-Ի ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՎ ՊԱՏՎԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին վերջերս ուղղած իր նամակում ԱՄՆ-ի հայոց արևելյան տիրախնամ թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը հաղորդում էր, որ 1982 թվականի մայիսի 1-ին գումարված թեմի պատգամավորական տարեկան ժողովը ընդունել է «Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ միացման համար ուղեգիծ»-ը, որի նպատակն է միավորումը ԱՄՆ-ի Հայաստանյայց բոլոր Եկեղեցիների Ս. Էջմիածնի իրավասության ներքև գտնվող թեմական կազմակերպության մեջ:

Ինչպես հայտնի է, վերջին մի քանի տասնամյակների ընթացքում սփյուռքի մեր եկեղեցական կյանքում, ներքին պայքարների հետևանքով, ստեղծվել էին բաժանումներ:

Այդ եկեղեցական պառակտումը վերացնելու մտածումով վերջերս ԱՄՆ-ում ստեղծվել էր մի հանձնախումբ, ԱՄՆ-ի Հայ Եկեղեցու ներկայացուցիչների մասնակցությամբ, որի գործը պիտի լիներ պատրաստել «միության ուղեգիծ մը» և այն ներկայացնել պատկան թեմական ժողովներին ի քննություն, որպեսզի ԱՄՆ-ի հայոց թեմը լիներ «Հոգևոր և վարչական միավոր մը», «գերագոյն հոգևոր իրավասությանը ներքև Ամենայն Հայոց կաթողիկոս-Պատրիարքին ի Սուրբ Էջմիածին, որպէս Մայր Աթոռը Հայաստանեայց Եկեղեցւոյ, ինչպէս որ էր անցեալին»:

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Տ. Թորգոմ արքեպիսկոպոսին և թեմական խորհրդին գրած իր հուլիս 14 թվակիր նամակում ջերմորեն ողջունում էր երկու թեմերի միջև «Միության ի խնդիր տարված աշխատանքը և մաղթել, որ այն իրապես կյանքի կոչվի մոտ ապագային ի մխիթարություն Մեզ և համայն մեր Եկեղեցու»:

Հայոց Հայրապետը վերոհիշյալ «ուղե-

գիծ»-նախագիծը համարում է «ջարունակությունն ու հետևանքը բավմիցս հրապարակավ» իր «կատարած միության կոչերի»:

Ծանոթանալուց հետո «ուղեգիծ»-ի բովանդակությանը, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը կատարել է մի քանի կարևոր թելադրություններ «ուղեգիծ»-ի մասին և դարձյալ «յանուն մեր Եկեղեցու և ազգի գերագոյն ու տևական շահերի», վերընտին կոչ է արել «Միացեալ Նահանգաց բաժանեալ նկատուած Մեր կաւակներին, նրանց հոգևոր դասին և վարչական մարմիններին, որ մոռացութեան տան անցեալի տխուր դէպքերը և ապատ կամքով, առանց նախապաշարումների, առանց երկմտանքի, մաքուր սրտով և խանդավառ հոգով վերադառնան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքև: Մենք անհուն կարօտով և գրկաբաց սպասում ենք նրանց բոլորին անխտիր իբրև Մեր հարազատ կաւակների»:

Արժան և իրավ:

Այս մտածումների լույսի ներքո, «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի 14 հուլիս նամակը, ուղղված առաջնորդ Տ. Թորգոմ սրբազանին և թեմական խորհրդին հայոց Միացյալ Նահանգաց արևելյան շրջանի:

Ամսագրի սույն համարում հրատարակվում է նաև «Ուղեգիծ Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ միացման համար» «նախագիծը»:

ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ



ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԵՒ ՊԱՏՈՒԱՐԺԱՆ ԹԵՄԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՇՐՋԱՆԻ

ՆԻՒ ԵՈՐՔ

Սիրելի Սրբական և յարգարժան Տիարք,

Տարւոյս յունիս ամսի վերջերին ստացանք Ձեր առաքած՝ Տիրախնամ թեմիդ պատգամաւորական ժողովի որդեգրած 1 մայիս 1982 թուակիր՝ «Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ միացման համար ուղեգիծ»-ը: Ծանոթանալով նրա բովանդակութեան, Մեր առաջին մտածումը եղաւ ջերմօրէն ողջունել միութեան ի խնդիր տարուած աշխատանքը և մաղթել, որ այն իրապէս կեանքի կոչուի մօտ ապագային ի մխիթարութիւն Մեզ և համայն մեր Եկեղեցու:

Մենք ողջունում ենք, այո, վերջին քառորդ դարեա տագնապը մոռացութեան տալու և արտասահմանի մեր Եկեղեցու միութիւնը վերականգնելու ամէն ձեռնարկ, ամէն փորձ:

Վերացնել՝ 1956 թուականից, մեր եկեղեցական կեանքում սկիզբ առած պառակտումը և վերականգնել Հայաստանեայց Եկեղեցու կանոնական միութիւնը և հայ հաւատացեալ ժողովրդի հոգևոր միասնութիւնը, եկեղեցական տեսակէտից օրինական է և հրամայական, ազգային տեսակէտից անյետաձգելի և կենսական:

Հետևաբար Միացեալ Նահանգաց մէջ, ի խնդիր Հայ Եկեղեցու միութեան կենսագործման տարուած ամէն աշխատանք, Մենք ողջունում ենք սրտանց, այդ աշխատանքը նկատելով շարունակութիւնը և հետևանքը բազմիցս հրապարակաւ Մեր կատարած միութեան կոչերի:

Յիշենք այստեղ Մեր կոնդակը 25 ապրիլ 1960 թուակիր, որ միութեան մի կոչ էր ուղղուած յատկապէս Միացեալ Նահանգաց՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բաժանուած Մեր հոգևոր զաւակներին:

Յիշենք միութեան Մեր կոչը 10 յունիս 1968-ին, Նիւ Եորքում, անձամբ ուղղուած բաժանուած Մեր զաւակների առաջնորդ՝ Տ. Հրանդ արքեպիսկոպոս Խաչատուրեանին և նրան ընկերակցող ղեկավար մարմինների ներկայացուցիչներին:

Յիշենք նաև Մեր եղբայրական սիրոյ հրաւէրը 1963-ին Երուսաղէմում, ուղղեալ Տանն Կիլիկիոյ Գահակալ Տ. Տ. Խորէն Ա Կաթողիկոսին և Կիլիկեան Աթոռի պաշտօնական մարմիններին, հրաւէր միութեան և սիրոյ, որով առանց պայմանի, անտեսեցինք անցնող տարիների տխուր եղելութիւնները և եղբայրական ողջագուրումով ճանաչում տուեցինք Տ. Տ. Խորէն Ա Գահակալին իբրև կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռի:

Փաստ է, արդէն պատմութեան անցած, որ վերոյիշեալ առաջին և երկրորդ կոչերը ուղղեալ Միացեալ Նահանգաց բաժանեալ կողմին, մնացին անարձագանք, իսկ 1963-ի հոկտեմբերին Երուսաղէմի ողջագուրումով, Մեր եղբայրական հրաւէրի հետևանքը եղաւ հապիւ չորս ամիս անց 1964-ի փետրուարին Տ. Տ. Խորէն Ա կաթողիկոսի հրապարակաւ յայտարարումը՝ Ս. Էջմիածնի և Կիլիկեան Աթոռների «հաւասարակցութեան» տեսութեան, առաջին անգամ լինելով մեր եկեղեցական պատմութեան մէջ, իսկ մի քանի ամիս յետոյ, մի եպիսկոպոսի առաքումը Մարսիլիա, նպատակ ունենալով Կիլիկեան Աթոռի իրաւասութեան ենթարկել նաև հարաւային Ֆրանսիայի եկեղեցիները, մի ոտնձգութիւն, որի հետևանքով տագնապալի տխուր կացութիւն ստեղծուեց մարսիլահայ կեանքում եօթ տարիներ շարունակ, ինչպիսի կացութիւններ ստեղծուել էին 1956-ից յետոյ, պարսկահայութեան և յունահայութեան ծոցում, նոյնպիսի անջատողական հակականոնական արարքների հետևանքով:

Մենք մի պահ անցեալը յիշելով, կամեցանք միմիայն ցոյց տալ թէ Մայր Աթոռս տնապէս տառապել է պառակտումների և բաժանումների հետևանքով և տնապէս ըղձացել է և հետապնդել՝ բանիւ և գործով վերահաստատելու միութիւնը արտասահմանի մեր Եկեղեցու:

Այսօր, ի նկատի ունենալով արդի կացութիւնը Մայր Աթոռիս և Տանն Կիլիկիոյ Աթոռի միջև, Մենք գտնում ենք, որ Միացեալ Նահանգաց՝ Սուրբ Էջմիածնի իրաւասութեան ներքև գտնուող և Տանն Կիլիկիոյ Աթոռի իրաւասութեանը ենթարկուած եկեղեցական կազմակերպութիւնները կարող են վերականգնել իրենց ներքին միութիւնը, Ս. Էջմիածնի և Կիլիկեան Աթոռների ընդհանուր մէկ համաձայնութեամբ, որ ցարդ չի գոյացել սակայն: Ինչպէս գիտէք, վերջին երկու տարիների ընթացքում փորձեր կատարուեցին, և յոյս ունենք, որ յետագայում կը շարունակուեն ճիգեր ի գործ դրուել այդ ուղղութեամբ:

Ձեր ներկայացրած «Ուղեգիծ»-ը մի փորձ է Միացեալ Նահանգաց մէջ միութիւնը իրագործելու, անկախ երկու Աթոռների միջև եղած անհամաձայնութիւններից: Այս ճանապարհը Մեր կարծիքով կարող էր ընդունելի համարուել իբրև հիմք յետագայ բանակցութիւնների և գործնական միջոցառումների, եթէ, սակայն, այդ փաստաթղթից դուրս թողնուէին Կիլիկեան Աթոռին վերաբերեալ առնչութիւնները:

Ոչ տրամաբանական է և ոչ էլ գործնապէս հնարաւոր, այդ «Ուղեգիծ»-ի մէջ առնչութիւններ նախատեսել Անթիլիասի Կիլիկեան Աթոռի հետ, երբ այդ Աթոռը հիմնական կանոնական հարցերի նկատմամբ անհամաձայնութեան մէջ է գտնում Մայր Աթոռիս հետ: Միութեան «Ուղեգիծ»-ի մէջ առնչութիւններ նախատեսել Կիլիկեան Աթոռի և նրա միաբանութեան հետ, դա կը նշանակի Միացեալ Նահանգաց մէջ եկեղեցական միութեան հարցը փոխադրել Ս. Էջմիածին—Անթիլիաս յարաբերութեանց մակարդակի վրայ:

Ու այդ դէպքում անհրաժեշտօրէն Մեր առաջ կը դրուի՝ նախ այդ մակարդակի վրայ լուծել գոյութիւն ունեցող տարակարծութիւնները. այսինքն թէ՝ Անթիլիաս վերադառնայ մինչ 1956-եան դրութեան, ինչ որ նշանակում է՝

ա. Հրաժարուել՝ 1956-ից ի վեր գրաւած թեմերից, սկզբունքով:

բ. Հրաժարուել՝ 1964-ից սկսած որդեգրած «հաւասարակցութեան» գաղափարից և ընդունել կանոնական սկզբունքը, որ Մայր Աթոռի Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ընդհանրական Հայրապետն ու գլուխն է Հայ Եկեղեցու:

գ. Հրաժարուել՝ միջեկեղեցական էկումենիկ գործունէութեանց անջատ պատուիրակութեամբ մասնակցելուց:

Այսօր էլ, երբ Անթիլիասը պնդում է վերաքննութեան ենթարկել՝ Ամենայն Հայոց կաթողիկոսի Հայ Եկեղեցու Ընդհանրական Հայրապետ լինելու հանգամանքը և գրաւուած թեմերը վերադարձնելու սկզբունքը, դա նշանակում է, որ Անթիլիասը դեռևս չի փոխել՝ հայ սփիւռքի եկեղեցիները Ս. Էջմիածնից բաժանելու իր հիմնական ծրագիրը:

«Ուղեգիծ»-ի տրամադրութիւնները նոյնպէս ապացուցում են, որ Անթիլիասը, նաև Միացեալ Նահանգներում իրապէս չի հրաժարուել այդ մտածելակերպից: Բոլորովին անհասկանալի է թէ Միացեալ Նահանգաց բաժանեալ Մեր կաւակները, եթէ իրապէս կամենում են միանալ օրինական թեմին և պատրաստ են ընդունել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի իրաւասութիւնը, էլ ինչո՞ւ են ուզում առնչութիւններ պահպանել Անթիլիասի Աթոռի հետ:

Որպէսզի ոչ թէ երևութապէս, այլ իրապէս և տևապէս վերացուի ստեղծուած տագնապը, անհրաժեշտ է վերացնել տագնապի բուն պատճառը, այն է՝ սփիւռքը Ս. Էջմիածնից բաժանելու մտածումը և գործելակերպը: Միայն իրական, բուն պատճառը հեռացնելով, կարելի է վերացնել հետևանքը:

Այլապէս, ինչպէ՞ս հնարաւոր կը լինի մտածել, որ Մայր Աթոռս կամ Միացեալ Նահանգաց մեր թեմական իշխանութիւնները կարող են ընդունելի նկատել 1 մայիս 1982 թուակիր «Ուղեգիծ»-ի բ. կառուցուածքի թիւ 2 յօդուածի ա. բ. գ. դ. և ե. տրամադրութիւնները, երբ նոյն Կիլիկեան Կաթողիկոսութիւնը դեռևս մնում է 1956-ից ի վեր որդեգրած՝ Սփիւռքը Ս. Էջմիածնից բաժանելու և Անթիլիասին միացնելու իր ծրագրի հիմքերի վրայ, որով մերժում է ընդունել Ամենայն Հայոց կաթողիկոսի Հայ Եկեղեցու Ընդհանրական Հայրապետ և Եկեղեցու գլուխ լինելու հանգամանքը և մերժում 1956-ից ի վեր գրաւած թեմերը վերադարձնելու սկզբունքը, հիմնուելով հակականոնական այն մտածելակերպի վրայ, թէ մի թեմի պատկանելութիւնը այս կամ այն Աթոռի իրաւասութեան. կախուած է տուեալ թեմի վարչական մարմինների որոշումից: Յիշենք որ այս հակականոնական մտածելակերպը վերջերս մի անգամ ևս արտայայտուեց Բոստոնի «Հայրենիք» օրաթերթում, 19 մայիս 1982-ին, իր խմբագիրներից մէկի հարցազրոյցով, ուր անթիլիասեան տեսաբանը պատգամում էր թէ՝ «Թեմերը կալուածներ չեն, օրինական որևէ հարկադրանք չկա. որպէսզի այս կամ այն գաղութային շրջանը պարտադրուած լինի այս կամ այն Աթոռի սեփականութիւնը նկատել»:

Յիշենք նաև, որ հապիւ երկու տարի առաջ Պէյրութի ֆրանսերէն «L'Orian-Le Jour» թերթում, Լիբանանի առաջնորդ Տ. Արամ եպիսկոպոս Քէշիշեանը յայտարարում էր, թէ՝ Կիլիկեան Աթոռը, իսկական յաջորդն է Էջմիածնի Աթոռի 1441-ից ի վեր և թէ այսօր «Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը փաստօրէն հոգևոր կեդրոնն է հայ սփիւռքի» («L'Orient», «Le Jour» 24 ապրիլ 1980):

Հետևաբար այս իրողութիւնների և ճշմարտութիւնների լոյսի ներքև Մենք կրկին ողջունում ենք Միացեալ Նահանգաց հայոց եկեղեցական միութիւնը կենսագործելու նոր փորձը, և հնարաւոր ենք գտնում որդեգրուած «Ուղեգիծ»-ը ընդունել իբրև հիմք յետագայ բանակցութիւնների և միջոցառումների, վերացնելուց յետոյ վերոյիշեալ յօդուածի տրամադրութիւնները, որոնք վերաբերում են Տանն Կիլիկիոյ Աթոռին:

Ուղիղ և իրատես մտածելով չի կարելի չնախատեսել, թէ միևնոյն թեմի մէջ Մայր Աթոռիս և Կիլիկեան Աթոռի վերաբերեալ պաշտօնապէս նման առնչութիւններ ստեղծել, ոչ միայն իրաւ միութիւն չի իրագործի, այլ դառ բաց կանի բպում բարդութիւնների և անվերջանալի վիճաբանութիւնների, ի վերջոյ յանգելով քառասային մի վիճակի, ինչ որ անշուշտ ցանկալի չի կարող լինել հաւասարապէս երկու կողմերի համար էլ:

Օգտուելով այս առիթից, յանուն մեր Եկեղեցու և ազգի գերագոյն ու տևական շահերի, վերստին սիրոյ կոչ ենք անում Միացեալ Նահանգաց բաժանեալ նկատուած Մեր վաւակներին, նրանց հոգևոր դասին և վարչական մարմիններին, որ մոռացութեան տան անցեալի տխուր դէպքերը և ապատ կամքով, առանց նախապաշարումների, առանց երկմտանքի, մաքուր սրտով և խանդավառ հոգով վերադառնան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքև: Մենք անհուն կարօտով և գրկաբաց սպասում ենք նրանց բոլորին անխտիր իբրև Մեր հարազատ վաւակների:

Մենք այն խորը զգացումն ունենք այս պահին, թէ Մայր Աթոռիս սիրոյ և միութեան կոչը ձայնն է բազմադարեան հայոց պատմութեան, զի «ի վերայ աջոյն և Սրբոյ Էջմիածնի ամենայն ազգն հայոց կապեալ կայ» այժմ և յաւիտեան:

Մենք բոլորս, որ այստեղ հայրենի հողի վրայ ապրում ենք ու շնչում մեր վերածնուած ժողովրդի ծոցում, սրբազան Արարատի նայուածքի տակ, Միածնաէջ Մայր տաճարի աստուածային օրհնութեան ներքոյ, անհնար է որ այլ կերպ մտածենք ու գործենք, և խորապէս հաւատում ենք, որ նոյնպէս արտասահմանի մեր պանդուխտ ժողովուրդը չի կարող այլ կերպ մտածել, այլ կերպ գործել:

Խորապէս հաւատում ենք նաև որ ցարդ Մայր Աթոռից հեռու պահուած Մեր վաւակները ևս, զգում են ու ապրում բաժանուած լինելու վիշտը և հոգեպէս վաղուց պատրաստ են վերջ տալու ստեղծուած անիմաստ ու աղետալի պառակտումին և խոնարհուելու Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնի Խորանի առաջ, բազմադարեան գերագոյն խորհրդանիշը հայոց քրիստոնէական հաւատքի և ազգային խղճի:

Ձեզ, Գերաշնորհ Սրբազան Հայր, ձեզ յարգարժան անդամք Թեմական Խորհրդոյ, յղում ենք Մեր սրտագին գնահատանքը, քաջալերանքը, հայրական սէրն ու հայրապետական օրհնութիւնը:

«Եղբայրսիրութիւն հաստատեսցի առ ձեզ» և «յիշեցէք զառաջնորդս ձեր որ խօսեցան ձեզ զբանն Աստուծոյ. հայեցեալք յելս գնացից նոցա, նմանողք եղերուք հաւատոցն» (Եբր. ԺԳ 1, 7): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



ՈՒՂԵԳԻԾ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԷՋ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. ՆԱԽԱՄՈՒՏ

Միշտ եղած է, եւ է այսօր, միայն մէկ Հայաստանեայց Եկեղեցի: Պատմութեան ընթացքին Հայ ժողովուրդը գուրգուրանքով պահած է այդ մէկութեան գիտակցութիւնը:

Այստեղ Ամերիկայի մէջ անցնող մի քանի տասնամեակներուն ներքին պայքարի մը հետեւանքով բաժանում մը կորացած է Հայց. Առաքելական Եկեղեցւոյ մէջ:

Հասած է ժամանակը՝ Հայ ազգի գերագոյն շահին համար, եւ Քրիստոնէական սիրոյ եւ բարեկամութեան ոգիով յառաջ շարժելու նոր ժամանակաշրջանէ մը ներս, ստեղծումովը Ամերիկայի մէջ միացեալ թեմի մը: Թեմը պիտի հաստատուի միացումովը Ամերիկայի Հայաստանեայց Եկեղեցւոյ Առաջնորդարանի—Տայօսիկ—եւ Ամերիկայի Հայ Առաքելական Եկեղեցւոյ Վիճակին—Փրէլըսի—:

Բ. ԿԱՌՈՒՑՈՒԱԾՔ

1. Թեմը պիտի ըլլայ հոգեւոր եւ վարչական միաւոր մը, եւ պիտի ըլլայ անբաժան մէկ մասը Հայաստանեայց Եկեղեցւոյ, գերագոյն հոգեւոր իրաւասութեան ներքեւ Ամենայն Հայոց Կաթողիկոս—Պատրիարքին ի Սուրբ Էջմիածին, որպէս Մայր Աթոռը Հայց. Եկեղեցւոյ, ինչպէս որ էր անցեալին: Թեմական Առաջնորդի ընտրութիւնը եւ որեւէ օրինաւոր կերպով ընդունուած Թեմական Կանոնադրութեան բարեփոխումներ ենթակայ պիտի ըլլան վաւերացման Ամենայն Հայոց Ծայրագոյն Պատրիարքին եւ Կաթողիկոսին:

2. Թեմը պիտի ունենայ նշանակալից յարաբերութիւն Կիլիկիոյ Աթոռին հետ, յայտնաբերուած հետեւեալ կերպով.

ա. Կիլիկիոյ Աթոռի դպրեվանքը պիտի մնայ որպէս աղբիւր մը հոգեւորականներու՝ թեմին համար: Կիլիկիոյ Աթոռի միաբանութեան բոլոր անդամները եւ դպրեվանքի շրջանաւարտ հոգեւորականները, առանց խտրութեան, պիտի արժանանան հաւասար վերաբերմունքին թեմէն ներս պաշտօն ստանձնելու

կամ անդամակցելու թեմական պաշտօնական մարմիններու վարչութեանց, համաձայն Հայց. Եկեղեցւոյ կանոններուն եւ աւանդութեանց:

բ. Պիտի հաստատուի հիմնադրամ մը Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամին մէջ, յիշեալ Հայ Եկեղեցւոյ Հիմնադրամին յանձնելով վուտ հասոյթը Նիւ Եորքի մէջ գտնուող «փրէլըսի»ի շէնքի վաճառքին, ճանչցուելու համար որպէս «Անթիլիասի Հիմնադրամ», եւ յիշեալ հիմնադրամի տարեկան վուտ եկամուտը պիտի փոխանցուի Կիլիկիոյ Սուրբ Աթոռին:

գ. Երբ Կիլիկիոյ Կաթողիկոսը այցելէ Ամերիկայի Հայց. Եկեղեցւոյ թեմը, համաձայն Եկեղեցւոյ ընդունուած օրէնքներուն եւ կարգին, պատշաճ մեծարանք պիտի ընծայուի իրեն, ըստ իր բարձր աստիճանին ու դիրքին :

դ. Ընդառաջելով եղած հրաւէրին, թեմը կրնայ դիտողներ ղրկել Կիլիկիոյ Սուրբ Աթոռի Ազգային Ժողովներուն:

ե. Միացեալ Թեմի Առաջնորդի առաջին ընտրութենէն ետք՝ յանձնարարելի է որ նորընտիր Առաջնորդը իր փոխանորդը նշանակէ միւս կողմի հոգեւորականներէն, պաշտօնավարութեան առաջին շրջանին համար միայն:

3. Թեմական Պատգամաւորական Ժողովը ներկայացուցչական մարմինը պիտի ըլլայ թեմի ծուխերուն եւ պիտի կատարէ վերահսկողութիւն ու պիտի բանեցնէ հակակշիռ թեմի իրաւասութենէն ներս գտնուող բոլոր եկեղեցական եւ վարչական մարմիններուն վրայ:

Գ. ՄԻԱՑՄԱՆ ՅԱՅՏԱԳՐԻ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ

1. Հասկացողութեան այս յուշագիրը, զոր կը հաստատէ միացեալ յանձնախումբը պիտի ներկայացուի պատկան թեմական Պատգամաւորական Ժողովներուն:

2. Այս յուշագիրը վաւերացնելու եւ որդեգրելու պարագային՝

ա. Ընթացք պիտի տրուի գործակցական յայտագիրներու մեր եկեղեցիներու Կրօնական եւ Հայկական դպրոցներուն մէջ, հիմնուած պատկան Թեմական Խորհուրդներու հաւանութեան արժանացած ծրագիրներուն վրայ:

բ. Միացեալ Յանձնախումբը պիտի սկսի խմբագրել նոր Կանոնադրութիւն մը անմիջապէս երբ լրանան 1982ի պատկան Թեմական Պատգամաւորական Ժողովները, եւ պիտի ջանայ ամբողջացնել իր գործը ոչ աւելի ուշ քան նոյեմբեր 1, 1982, եւ ներկայացնելու վայն պատկան թեմական Առաջնորդներուն եւ Թեմական Խորհուրդներուն:

գ. Միացեալ Յանձնախումբը պիտի հովանաւորէ միացեալ խորհրդակցական ասուլիս մը, որ տեղի պիտի ունենայ ոչ աւելի ուշ քան Հոկտեմբեր 15, 1982: Ան պիտի բաղկանայ միացման Յանձնախումբի անդամներէն եւ իւրաքանչիւր կողմէ առ առաւելն 30 հոգեւորական եւ աշխարհական մասնակցողներէ, որոնք սահմանափակուած ըլլան ծխատէր հոգեւորականներու, ծխական խորհուրդներու անդամներու, թեմական խորհուրդներու անդամներու եւ թեմական պատգամաւորական ժողովներու պատգամաւորներու: Ասուլիսը ենթակայ է օրակարգի մը որ կանխաւ պատրաստուած եւ ընդունուած պէտք է ըլլայ Միացեալ Յանձնախումբին կողմէ:

դ. Մասնաւոր Թեմական Պատգամաւորական Ժողովներ պիտի գումարուին ոչ աւելի ուշ քան Յունուար 15, 1983: Իւրաքանչիւր Պատգամաւորական Ժողով պիտի գումարուի անջատաբար, սակայն միեւնոյն քաղաքին մէջ եւ միեւնոյն ժամանակ նկատի առնելու եւ ընդունելու համար միասնաբար պատրաստուած Կանոնադրութիւնը:

ե. Իրաքանչիւր Պատգամաւորական Ժողովի կողմէ Կանոնադրութեան վաւերացումէն ետք մկրտութիւններ, պսակներ եւ յուղարկաւորութիւններ կրնան միասնաբար կատարուիլ:

կ. Պատկան Պատգամաւորական Ժողովներու կողմէ Կանոնադրութեան վաւերացուելէն ետք Եղեռնի Օրուան տարեդարձի միացեալ յուշահանդէս պիտի կատարուի 1983 Ապրիլին, մասնակցութեամբ կոյգ թեմերու բոլոր հոգեւորականներուն:

3. Նոր Կանոնադրութեան Ս. Էջմիածնի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսներէն հաստատումէն ետք ընթացիկ թեմական պատգամաւորներու եւ ընտրեալ պաշտօնեաներու ժամանակաշրջանը պիտի դադրի անմիջապէս որ կատարուին նոր ընտրութիւններ համաձայն Նոր Կանոնադրութեան մէջ մասնատրուած կերպերուն: Իրաքանչիւր ժողովէ հաւասար թիւով ներկայացուցիչներէ բաղկացած յանձնախումբ մը պիտի կատարէ հսկողութիւն եւ պիտի վաւերացնէ ընտրութիւնը պատգամաւորներու, հիմ ունենալով Նոր Կանոնադրութիւնը եւ անդամներու թիւը իրաքանչիւր կողմի 1979ի պատգամաւորական ժողովի արձանագրութեանց հիման վրայ, եւ միացած թեմին նոր պատգամաւորական ժողով մը պիտի գումարէ:

4. Առաջին եւ յաջորդական Պատգամաւորական Ժողովները պիտի ընթանան համաձայն որդեգրուած Կանոնադրութեան կանոններուն եւ պայմաններուն, իբր առաջնահերթ օրակարգ ունենալով ընտրութիւնը Թեմական Խորհուրդի մը եւ Առաջնորդի մը, ինչպէս նաեւ պաշտօնական ճանաչումը Կանոնադրութեան:

5. Այն պարագային երբ պատկան Պատգամաւորական Ժողովները 1983 Յունիս 1ին կամ ատկէ առաջ չեն վաւերացուցած առաջարկուած Կանոնադրութիւնը, ներկայ վաւերաթուղթը պիտի դադրի եւ պարտաւորիչ պիտի չըլլայ կողմերէն մէկուն կամ միւսին համար:

6. Այն պարագային երբ Կաթողիկոսները չեն ընդունած եւ հաստատած նոր Կանոնադրութիւնը մինչեւ Դեկտեմբեր 31, 1983, ներկայ վաւերաթուղթը պիտի դադրի եւ պարտաւորիչ պիտի չըլլայ կողմերէն մէկուն կամ միւսին համար:

ԹԵՄԱԿԱՆ—«Տայոսիկ»—
ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ՎԻՃԱԿԱՅԻՆ—«Փրէլլսի»—
ՄԻՈՒԹԵԱՆ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ

Մայիս 1, 1982





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

ՆԻՒ ԵՈՐՔ

Սիրելի Սրբական,

Խոր գոհունակությամբ ողջունեցինք Ձեր ժամանումը Մայր Աթոռ, ուղեկցութեամբ Արժ. Տ. Մամբրէ քահանայ Գուլուեանի, ատենապետը տիրախնամ թեմիդ Թեմական Խորհրդի և յարգարժան տիար դատաւոր Ճան Նաճարեանի, ատենապետը թեմիդ Միութեան Յանձնաժողովի:

Այստեղ երկու նիստերու ընթացքին, լսեցինք Ձեր շահեկան վեկուցումը և մանրամասն տեղեկութիւնները ի մասին Միութեան Յանձնաժողովի գործունէութեան վերջին տարիներու շրջանին, կեանքի կոչելու համար Միացեալ Նահանգաց հայ եկեղեցիներու և համայնքներու միութեան ծրագիրը, որ իրապէս ըղձալի կը դառնայ հետզհետէ մեր բոլորիս և յատկապէս ամերիկահայ երիտասարդ սերունդի համար:

Ունկնդրելով Ձեզ և աւելի հանգամանօրէն տեղեակ դառնալով միութեան հարցի բոլոր երեսներուն և պատրաստուած «Ուղեգիծ»-ի հետ կապուած Ձեր և Ձեր ուղեկիցներու տուած լրացուցիչ բացատրութիւններուն, Մենք եկանք որոշ եզրակացութիւններու, զոր ներկայացուցինք Ձեզի Մեր հանդիպումներու վերջաւորութեան, եզրակացութիւններ՝ զոր նաև այս Մեր գրութեամբ կը յանձնենք Ձեր ուշադրութեան:

1. Մենք վերստին կ'ողջունենք Միացեալ Նահանգաց հայ եկեղեցեաց միութիւնը վերահաստատելու բարի գաղափարը, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի իրաւասութեան և օրհնութեան ներքև, այնպէս ինչպէս այն իբրև թեմական կազմակերպութիւն ստեղծուած էր անցեալ դարու վերջերուն, երջանկայիշատակ Տ. Տ. Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակով և գոյատևած մինչև 1957 թուականը:

2. Կ'ողջունենք նաև երկու Յանձնաժողովներու ջանքերը, իրականացնելու համար սպասուած միութիւնը, մաղթելով որ սկսուած գործը շարունակեն և հասցնեն իր լրումին, մեր եկեղեցւոյ կարգ ու կանոնաց համաձայն:

3. Սոյն Մեր գրութեամբ կը հաստատենք պատրաստուած «Ուղեգիծ»-ի մասին Մեր 14 յուլիս 1982 թուակիր նամակը, որ կ'արտայայտէր Մեր մտածումը և յորդորը ուղղեալ Ձերդ Սրբազնութեան և Ձեր միջոցաւ պատուարժան Թեմական Խորհուրդին, Միութեան երկու Յանձնաժողովներուն և թեմիդ եկեղեցական համայնքներուն:

4. Այսու անգամ մը ևս կը յայտնենք Մեր մտածումը, թէ միութիւնը կարելի է իրագործել երկու ճանապարհաւ՝ կամ Ս. Էջմիածնի և Տանն Կիլիկիոյ Աթոռներու համաձայնութեամբ և կամ ձեր երկրի մէջ տեղական մակարդակի վրայ, երկու կողմերու խորհրդակցութեամբ:

Եթէ ի նկատի ունենանք առաջին ճանապարհը, պէտք է սպասել որ նախ երկու Աթոռներու միջև համաձայնութիւնը գոյանայ: Իսկ եթէ ի նկատի ունենանք երկրորդ ճանապարհը, միութիւնը կարելի է կատարել տեղական մակարդակի վրայ, սակայն այդ պարագային յետագայ բոլոր փաստաթուղթերէն և ապագայ միացեալ թեմի կանոնագրութենէն դուրս թողելով Տանն Կիլիկիոյ Աթոռին հետ առնչուող բոլոր յօդուածները և նախատեսումները: Որովհետև, Տանն Կիլիկիոյ Աթոռի և Միաբանութեան հետ առնչուող պարագաներ նախատեսել, պիտի նշանակէ միութեան հարցը տեղական մակարդակէն փոխադրել Աթոռներու յարաբերութեանց մակարդակին, այլ խօսքով՝ պիտի նշանակէ հարցի լուծումը տանիլ վերոյիշեալ առաջին ճանապարհի մակարդակի վրայ, այսինքն սպասել, որ նախ Աթոռներու միջև համաձայնութիւն մը գոյանայ միութեան նկատմամբ:

Մէկ բան անհրաժեշտ է յստակ և օրինական ձևով հասկնալ՝ ինչքան ժամանամ Տանն Կիլիկիոյ Աթոռը կը մերժէ Ս. Էջմիածնի կաթողիկոսը ճանչնալ իբրև Ընդհանրական Հայրապետը և Գլուխը Հայաստանեայց Եկեղեցւոյ, ինչքան ժամանակ ան կը մնայ 1964-էն սկսեալ իր որդեգրած՝ մեր Աթոռներու «հաւասարաւորութեան» տեսակէտին վրայ, ինչքան ժամանակ կը մերժէ ընդունիլ գրատուած թեմերը Ս. Էջմիածնին վերադարձնելու սկզբունքը, բնականօրէն ոչ Մայր Աթոռս և ոչ ալ Մայր Աթոռիս իրաւասութեան ներքև գտնուող թեմական իշխանութիւն մը պաշտօնեապէս որևէ ձևով չեն կրնար առնչութիւններ ունենալ Անթիլիասի Տանն Կիլիկիոյ Աթոռի և անոր Միաբանութեան հետ:

Ահա թէ ինչու Մենք, իբրև Ձեր Հայրապետը և վերին պատասխանատուն Հայաստանեայց Եկեղեցւոյ նուիրապետական կարգ ու կանոնի պահպանման և գործադրման, Ձեր ամենալուրջ ուշադրութեան կը յանձնենք այս օրինական պարագաները և կ'ակնկալենք որ ի նկատի ունենանք Մեր 14 յուլիս 1982 թուակիր և սոյն Մեր գրութեանց յորդորները:

Այս առթիւ կը կրկնենք Մեր առաջադրանքը որ Մեր 14 յուլիս և սոյն 6 սեպտեմբեր թուակիր նամակներու պատճէնները հաճիք ուղարկել թեմիդ բոլոր եկեղեցական համայնքներուն ի գիտութիւն:

5. Ինչպէս կը նկատէք «Ուղեգիծ»-ի մասին Մեր կեցուածքը զուտ սկզբունքային է և օրինական, և Մենք առանձնապէս առարկութիւններ չունինք «Ուղեգիծ»-ի միւս տրամադրութիւններուն նկատմամբ, զանոնք նկատելով հնարաւոր հիմք Ձեր բանակցութեանց և յետագայ միջոցառումներու ըստ Ձեր հայեցողութեան, ի խնդիր միութեան իրականացման:

6. Մեր օրինական այս ճշդումներով և յորդորներով, համոզուած ենք թէ ոչ միայն օգնած պիտի ըլլանք Թեմական Խորհուրդիդ և Միութեան Յանձնաժո-

ղովներու յետագայ աշխատանքներուն, այլև նպաստած պիտի ըլլանք որ ըղձալի միութիւնը հաստատուի կանոնական ուղիղ և ամուր հիմքերու վրայ, կերծ ապագայ բարդութիւններէ և շփոթ կացութիւններէ:

Սիրելի Սրբազան Եղբայր, տարէք Ձեզի հետ Աստուծոյ օրհնութիւնը Միածնաէջ Մայր Տաճարէն և Մեր ջերմագին բարի մաղթանքները ձեր բոլոր գործակիցներուն և ամերիկահայ համայն հաւատացեալ ժողովուրդին:

Սիրով ի Քրիստոս՝

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

6 սեպտեմբեր
1982 թ.
Մայր Աթոռ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռիս Դիվանը ուրախ է հաղորդելու ի գիտություն մեր Սուրբ եկեղեցու և հատկապես մեր ամերիկահայ հավատացյալը ժողովրդին, թե Ամենայն Հայոց Հայրապետը սիրով ընդունեց Միացյալ Նահանգաց արևելյան թեմի պատվիրակությանը, բաղկացած՝ թեմական առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանից, Թեմական խորհրդի ատենապետ Տ. Մամբրե քահանա Գուլոյանից և Միության Հանձնաժողովի ատենապետ դատավոր Ճան Նաջարյանից, որոնք եղան Նորին Սրբության հյուրերը, սույն թվի օգոստոսի 28-ից մինչև սեպտեմբերի 6-ը:

Լսելով թեմական պատվիրակության մանրամասն զեկուցումը և լուսաբանությունները ի խնդիր իրագործելու Հայ Առաքելական եկեղեցիների միությունը Միացյալ Նահանգաց արևելյան թեմում Սուրբ Էջմիածնի օրհնության և իրավասության ներքև, Տ. Տ. Վազգեն Ա. Կաթողիկոսը Իր գոհունակությունը հայտնեց և Իր ցանկությունը, որ Միության Հանձնաժողովը իր ջանքերը շարունակի ի գործ դնել, Տ. Թորգոմ արքեպիսկոպոսին ուղղված՝ Իր 14 հուլիս և 6 սեպտեմբեր 1982 թվակիր կարևոր նամակներում արտահայտված հորդորների լույսի ներքև:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

7 սեպտեմբեր 1982 թ.
Ս. Էջմիածին



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հուլիսի 1-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոց Թարգմանչացն մերոց Սահակայ և Մեսրոպայ.

Այսօր Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, Թարգմանչաց տոնի առթիվ, ս. պատարագ է մատուցում Տ. Ստեփանոս վրդ. Զաքալյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «ճանաչել վիմաստութիւն և վխրատ, իմանալ վբանս հանճարոյ» (Առակաց Ա 1) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ ի հիշատակ հայ մշակույթի բոլոր երախտավորների:

*
* *

Նույն օրը ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

*
* *

Հուլիսի 2-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

Նիստին հրավիրված էին նաև Տ. Ներսես եպս. Պոլսպայլյանը և Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

Նիստում, Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ, Մայր Աթոռի դիվանապետ է նշանակվում Տ. Ներսես եպս. Պոլսպայլյանը:

Ապա Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը վեկուցում է Ավստրիայի, Արևմտյան Գերմանիայի և Շվեդիայի այսօրվա ազգային-եկեղեցական կյանքի և նրանց ապագա ծրագրերի մասին:

Վերջում Տ. Ներսես եպս. Պոլսպայլյանը և Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը, իրենց երկարամյա ազգանվեր եկեղեցական ծառայության համար, արժանանում են Վեհափառ Հայրապետի և Գերագույն Հոգևոր Խորհրդի բարձր գնահատանքին:

*
* *

Հուլիսի 3-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Հունաստանի հայրապետական պատվիրակ և Դամասկոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

*
* *

Հուլիսի 4-ին, կիրակի.—Տօն գիւտ տփոյ Սրբոյ Աստուածածնի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Հովնան աբդ. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն, որ սերմանիցէ սերմն բարի յագարակի իւրում ...» (Մատթ. ԺԳ 24) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հուլիսի 7-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին է այցելում ատոմային էներգիայի միջազգային գործակալության պատվիրակությունը՝ գլխավորությամբ ընդհանուր տնօրեն Հանս Բլիքսի:

Պատվիրակությանն ուղեկցում էր ՍՍՀՄ ատոմային էներգիայի օգտագործման պետական կոմիտեի նախագահ Ա. Մ. Պետրոսյանցը:

*
* *

Նույն օրը, ժամը 11-ին, Մայր Աթոռ և Վեհափառ Հայրապետին են այցելում Ասիայի բազմաթիվ երկրներից (Հնդկաստան, Վիետնամ, Լաոս, Կամբոջա, Նեպալ, Սիրիա, Պարսկաստան, Հորդանան, Թուրքիա և այլն) Հայաստան ժամանած դիվանագետների, նախարարների, գիտնականների և լրագրողների մի խումբ՝ շուրջ 60 հոգի:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

Հավաքույթի վերջում Վեհափառ Հայրապետը վարդապետական լանջախաչ է շնորհում Տ. Գարեգին վրդ. Ներսիսյանին և Տ. Ստեփանոս վրդ. Չաքալյանին, որոնք վերջերս պաշտպանեցին իրենց վարդապետական թեկնածությունները:

* *
*

Հուլիսի 8-ին, հինգշաբթի,—Այսօր, երեկոյան, ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ, և Ֆրանսիայի Հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

*
* *

Հուլիսի 10-ին, շաբաթ.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը:

*
* *

Հուլիսի 11-ին, կիրակի,—Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Օրհնեաց և եբեկ, և ետ ցաշակերտսն զնկանակսըն» (Մատթ. ԺԴ 19) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Նույն օրը, երեկոյան, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, Մայր Աթոռից մեկնում է Տ. Դավիթ եպս. Սահակյանը:

*
* *

Հուլիսի 13-ին, երեքշաբթի.—Այսօր, կեսօրից հետո, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում տեղի է ունենում Գերագույն Հոգևոր Խորհրդի հերթական նիստը:

*
* *

Հուլիսի 14-ին, չորեքշաբթի.—Այսօր, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Տ. Մեսրոպ ծ. վրդ. Գրիգորյանը:

*
* *

Նույն օրը Վիեննայից ուխտավորաբար Մայր Աթոռ է ժամանում Տ. Աբել աբդ. Օղլուգյանը:

*
* *

Հուլիսի 15-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հուլիսի 18-ին, կիրակի.—Վարդավառ: Պայծառակերպութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի.

Այսօր Մայր տաճարում, Ավագ խորանի վրա, ս. պատարագ է մատուցում Տ. Ներսես եպս. Պոպպայանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Վարդապետ բարոք է մեզ աստ լինել» (Ղուկ. Թ 33) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

* * *

Հուլիսի 22-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Բյուրականի «Հայկաշէն» հայրապետական ամառանոցում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ:

* * *

Հուլիսի 24-ին, շաբաթ.—Այսօր, կեսօրից հետո, Վեհափառ Հայրապետից հրաժեշտ առնելով, իր պաշտոնատեղին է մեկնում Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպ. Մանուկյանը:

* * *

Հուլիսի 28-ին, չորեքշաբթի.—Այսօր, առավոտյան, Վեհափառ Հայրապետը մեկնում է Կիսլովոդսկ՝ մոտ մեկ ամիս տեղի «Կրասնըե կամնի» առողջարանում հանգստանալու համար:

Այս առթիվ Նորին Սրբությանը ուղեկցում էր Շիրակի հայոց թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպս. Շաքարյանը:



ՄԱՆԿԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

Վերջերս արժեքավոր նվեր ստացան ամերիկահայ մանուկներն ու պատանի դպրոցականները: Մայիս ամսին, Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդարանի հովանավորությամբ, Նյու Յորքում լույս է տեսնում «Զարթի՛ր» մանկական պարբերականի անդրանիկ համարը: Մանկական այս թերթիկը իր առջև նպատակ է դրել՝ ծառայել սփյուռքի հայ մանուկների առավել հայեցի դաստիարակման սրբական գործին:

«Զարթի՛ր» պարբերականը բաղկացած է ութ էջից:

Անդրանիկ համարի առաջին էջը բացվում է Միացյալ Նահանգների հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանի՝ հայ մանուկին ուղղված կոչով:

Երկրորդ էջում «Զարթի՛ր»-ի հրատարակության առիթով վետեղված է մի խմբագրական, որի բովանդակությունը ցույց է տալիս պարբերականի նպատակը, այն է՝ «Հայ մանուկի հոգիին մեջ արթնցնել ու արթուն պահել սերը հանդեպ իր մայրենի լեզվին և հանդեպ իր ժողովրդի պատմության»:

Թերթիկի երրորդ էջում «Ո՞վ ես դուն» հարցում-վերնագրի տակ ներկայացված է հետևյալ պատասխանը.

«Դո՛ւն հայ ես: Քու ազգիդ առաջին հայրը Հայկ կկոչվի: Հայկ ապատասեր մեկը եղավ: Ան փոխադրվեցավ երկիր մը և իր ազգականներով, զինվորներով ու բարեկամներով հո՛ն բնակեցավ: Արդ եղկիրը կոչվեցավ **Հայաստան** և բնակիչները՝ **հայ**»:

Նույն էջում «Արդի Հայաստան» խորագրի տակ հայ մանուկին համառոտակի ծանոթություններ են տրվում Սովետական Հայաստանի աշխարհագրական դիրքի, նրա տարածության ու սահմանների, քաղաքամայր Երևանի մասին: Հոդվածում նշվում է, որ «Հայաստանի մեջ կգտնվի հայ ժողովուրդի առաջին եկեղեցին՝ Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսարանը, ուր կբնակի Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջին Սրբազնագույն Հայրապետը»:

Պարբերականի չորրորդ էջը ուսուցում է «Պատմություն Հայ Եկեղեցիի» հակիրճ հոդվածը, որտեղ շարադրված է.

«Հայաստանյայց Եկեղեցին հիմնեցին Քրիստոսի տասներկու աշակերտներեն՝ Սուրբ Թադեոս և Սուրբ Բարթողիմեոս առաքյալները, որոնք եղան մեր ազգին առաջին լուսավորիչները: Այս պատճառավ Հայոց Եկեղեցին կկոչվի Առաքելական Եկեղեցի:

Հայոց երկրորդ Լուսավորիչ Սուրբ Գրիգոր Հայրապետի ջանքով Տրդատ թագավոր հրաժարեցավ կռապաշտութենե և 301 թվականին քրիստոնեությունը հռչակեց Հայաստանի պետական կրոնքը:

Պաշտոնապես և ազգովին քրիստոնյա դարձող առաջին ազգը եղան հայերը:

Իսկ 303 թվականին շինվեցավ հայոց առաջին եկեղեցին՝ Սուրբ Էջմիածին, որ կնշանակե «Իջավ Միածին»-ը՝ այսինքն Հիսուս Քրիստոս»:

Թերթիկի հինգերորդ էջում «Հայկական ճարտարապետություն» վերնագրի տակ հայ մանուկին ընդհանուր տեղեկություն է տրվում հայ եկեղեցական ճարտարապետության յուրահատկության մասին և եզրակացվում, թե «Օտարներ ներշնչված են հայկական ճարտարապետութենեն: Հայերն են, որ առաջին անգամ մասնագիտացած են կոթական (կոթիկ) արվեստին»:

«Զարթի՛ր»-ի վեցերորդ էջի «Մենք մեր գիրերը ունինք» հոդվածում հայ մանուկը

կարող է տեղեկանալ հայոց գրերի գյուտին, Աստվածաշնչի հայերեն «Թագուհի թարգմանության»-ը և հայկական մշակույթի Ոսկեդարին (Ե դար): Վերոհիշյալ հոդվածը ավարտվում է հայ մանուկին ուղղված հետևյալ կոչով.

«Հպարտ եղի՛ր, որ դուն ունիս քու սեփական գիրերդ: Սորվե՛ և գործածե՛ կանոնք»:

Պարբերականի յոթերորդ էջը նվիրված է հայ նոր գրականության հիմնադիր, նշանավոր մանկավարժ, լուսավորիչ ու կրթական գործիչ, գրող Խաչատուր Աբովյանին: Հոդվածում մի քանի տողերի մեջ տրված է նաև գրողի ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը:

Մանկական թերթիկի առաջին համարը եկրափակվում է հայկական երգ ու պարի ուսուցմամբ:

«Զարթի՛ր»-ի տարբեր էջերում վետեղված են նաև մի քանի ուսուցողական հարցեր, հանելուկներ, խաղեր ու բառախաղեր:

Ճաշակով ու գեղեցիկ նկարազարդված հանդեսի յուրաքանչյուր հատվածի համեմատ վետեղված են համապատասխան գլխապարդեր, նկարներ ու քարտեզներ:

Սփյուռքահայ իրականության մեջ գնահատելի այս ձեռնարկը, հույսով ենք, իր լայն արձագանքը պիտի գտնի ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ հայոց աշխարհասփյուռ մյուս գաղթօջախներում:

Հանուն Հայոց Հայրապետի և «Էջմիածին» ամսագրի խմբագրության շնորհավորում ենք թեմական սրբազան առաջնորդի այս սքանչելի ձեռնարկը և «Զարթի՛ր»-ի խմբագրական կազմին ու բոլոր աշխատակիցներին մաղթում, որ նրանք նույն ոգևորությամբ շարունակեն իրենց ազգանվեր ծառայությունը, որպեսզի թերթիկը դառնա բարի այն սերմնացաններից մեկը, որը կարողանա սփյուռքահայ մանուկ հոգիներից ներս սերմանել հայեցի լույս ու գիտության առատ սերմեր:

ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ



ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՒՂԹ

ՉԱՐԹԻՐ

Ա. ՏԱՐԻ • ԹԻՒ 1 • ԱՌԱՋԻՆ ԹՈՒՂԹ

Սիրելի Հայ Առնուկ,

Ահաւասիկ քեզի համար նոր հրատարակութիւն մը:

Մեր փափաքն ու նպատակն է, որ դուն կարդաս այս նոր հրատարակութեան բովանդակութիւնը՝ որպէս զի ճոխացնես ու հարստացնես քու դիտութիւնդ Հայերէն Լեզուի, Հայոց Պատմութեան եւ Հայ Մշակոյթի:

Մեր լեզուն սքանչելի է, մեր պատմութիւնը՝ փառաւոր եւ մեր մշակոյթը՝ հարուստ:

Ոչ մէկ պատճառ ունիս ամչնալու Հայ լլլալուդ, այլ ընդհակառակն, դուն քեզ հպարտ պէտք է զգաս որ ժառանգորդն ես Հայ ժողովուրդի արժէքաւոր աւանդութիւններուն, լեզուին, պատմութեան եւ մշակոյթին:

Մեր մտադրութիւնն է որ քու ստացած այդ ժառանգութիւնը աւելի ճոխացուցած ու հարստացուցած փոխանցես քու յաջորդներուդ:

Որովհ՝ Մայրենի Լեզուդ, խօսէ՝, կարդա՝ ու գրէ՝ Հայերէն Լեզուով, ապրէ՝ ու գործէ՝ որպէս Հայ՝ որպէս զի մենք ապահովութիւնը ունենանք մեր ժողովուրդի պայծառ ապագային:

ԹՈՐԳՈՄ ԱՐՔ. ՍԱՆԱՐԿԵԱՆ
Առաջնորդ

ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱՉՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՄԲԻ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ ԵՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

Ավանդություն է:

Ամեն կենդանի շունչ իր հարազատին է փնտրում, որովհետև հարազատի մեջ բնակվում է իր ոգին, իր նախնիների ոգին: Եվ հարազատին հանդիպելով, փոխադարձ հոգևոր կապ ստեղծելով, վերանորոգվում է, ամրանում է իր մեջ իր ոգին, իր նախնիների ոգին:

Ավանդություն է:

Ամեն հայ, որտեղ էլ որ ծնված լինի, իր հայրենիքն է փնտրում, որովհետև այնտեղ բնակվում է իր ոգին, իր նախնիների ոգին: Եվ հայրենիքում՝ հայրենիք գալով, հայրենիքը վերապրելով՝ վերանորոգվում է իր մեջ իր ոգին, իր նախնիների ոգին՝ հայի ոգին:

Ավանդություն է:

Ամեն տարի, Հայաստանի վերածնունդով խանդավառված, հայրենիքի կարոտով տոչորված, դեպի Հայաստան են ձգտում հարյուրավոր սփյուռքահայեր, որոնք մեր ազգի դաժան ճակատագրի բերումով ծնվել են օտար ափերում, ապրել են օտար հողերում, որոնք երբեմն վատ են խոսում կամ չեն խոսում հայերեն, սակայն դեռ ապրում են հայերեն, դեռ շնչում են հայերեն՝ որոնց հոգիներում դեռ կայծկլտում է հայի ոգին, որոնց սրտերում դեռ հարատևում է հայոց հավատը:

Հայրենիքը անուշ է. հայրենիքը կախարդող, ձգող մոգական ուժ ունի: Հայրենիքը վերապարթևեցնում է, վերանորոգում է իր զավակների հոգին, վերականգնում է նրանց ազգային նկարագիրը:

Ավանդություն է, և սփյուռքահայերը գալիս են Հայաստան, և նրանց թվում...

Ավանդություն է...

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նախաձեռնությամբ, հայրենի կառավարության գործնական աջակցությամբ, ԱՄՆ-ի արևելյան թեմի Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Միության կազմակերպությամբ՝ ամեն տարի ավանդաբար Հայաստան են այցելում Միացյալ Նահանգներում ապրող հայ երիտասարդներ՝ հատուկ ծրագրով, որի նպատակն է՝ երիտասարդներին մերձեցնել մայր հայրենիքի հետ, ծանոթացնել նրանց հայրենի մշակույթին, զարգացնել գիտելիքները հայոց լեզվի, պատմության բնագավառում, սովորեցնել նրանց հայկական պարեր, երգեր և այն ամենը, ինչ հայեցի է, ինչ իր մեջ ամփոփում է մեր ժողովրդի հոգուց մի մասնիկ:

Այս տարվա Հայ Եկեղեցասիրաց Կազմակերպության խումբը թվով տասներկուերորդն էր, որ այցելեց Հայաստան: Խմբի ղեկավարն էր Մասաչուսեց նահանգի Հեվըրհիլ քաղաքի հայոց հոգևոր հովիվ Հայկազուն աբեղա Մելքոնյանը՝ իրեն օգնական ունենալով տիկին Ազատուհի Դադեկյանին: Երիտասարդների խումբը բաղկացած էր տասնհինգ երկսեռ անդամներից՝ հավաքված ԱՄՆ-ի չորս տարբեր նահանգներից, որոնք առաջին անգամ էին այցելում Հայաստան:

Խումբը Հայաստան ժամանեց հունիսի 11-ին: Կարելի՞ է նկարագրել, թե հայրենաբաղձ երիտասարդները ինչպիսի հուզումով առաջին անգամ ոտք դրեցին հայրենի հողի վրա: Գուցե նրանց ականջներում դեռ զնգում էր բարեկամների ձայնը՝ իրենց ճանապարհելու պահին. «Երանի՜ ձեզի, երանի՜ ձեր աչքերուն, որ Հայաստանը պիտի տեսնաք»:

Եվ ահա՛ եկել են, և ահա՛ տեսնում են, և ահա՛ զգում են Հայաստանը, ապրո՛ւմ են Հայաստանում, ապրո՛ւմ են հայրենիքում բարեկամների շրջապատում: Զգում են, այո՛, զգում են, որ լոկ խոսք չէ Հայաստանը, աշխարհագրական մի տեղանուն, վերացական, անմարմին մի գաղափար, այլ իրական, տեսանելի և ծաղկող մի հայրենիք: Կարծես նրանց հոգին թևածում էր հայրենի հարազատ և սիրելի հեռուներում և ձայնում հայտնի երգի հետևյալ բառերով. «Հայաստան

աշխարհ, դու մեր կարոտն ես նոր կյանքովդ անմար»:

Ամերիկահայ երիտասարդները տեղավորվեցին Բյուրականում՝ «Հայկաշեն» Վեհարանամառանոցում: Քառագագաթ Արագածի լանջին խարսխված «Հայկաշեն»-ը կարծես ինքն էլ ծնվել է լեռների հետ, նույն լեռներից: Առջևում բացվում է հրաշալի համայնապատկեր՝ Արարատյան դաշտի արգավանդ հեռաստանը, իսկ հեռվում, հակառակ ամառվա ջերմության, ճերմակին է տալիս հավերժաբար ձյունածածկ Արարատը: Օդը «Հայկաշեն»-ում կով է, իսկ տեսարանը՝ դյութիչ: Կարելի է օրերով անձանձրույթ նայել հայրենի կարմանահրաշ հեռուներին և այդ հեռուները եկրագծող հպարտ լեռներին:

Երիտասարդների հոգիներն էլ լեցվում էին հայրտությամբ: Ինչ-որ հարապատ մի բան ձգում էր, կապում էր նրանց սրտերը այս լեռնաշխարհին:

Մայր Աթոռում հունիսի 13-ին, կիրակի օրը, հավարտ սուրբ պատարագի, երիտասարդներին ընդունեց Վեհափառ Հայրապետը՝ հայտնելով Իր բարիգալատյան ողջույնը և տալով Իր օրհնությունը:

Ուսանողության անունից ջերմ խոսք ասաց Միքայել Պոլոյանը, որն իր սեղմ խոսքերի մեջ խտացրել էր խմբի բոլոր անդամների մտքերն ու զգացումները:

«Վեհափառ Տեր.

Հանուն ամերիկահայ եկեղեցասեր երիտասարդներու, կուգամ մեր երախտագիտությունը հայտնելու Ձերդ Սրբության: Ձեր հայրական հոգածությունը և հայրենական հյուրասիրությունը քշեց և անցավ մեր ակընկալությունները: Մենք եկանք Հայրենիք՝ սովորելու համար և կվստահեցնենք Ձերդ Սրբության, որ տիպար աշակերտներ պիտի ըլլանք:

Եկանք Սուրբ Էջմիածին և ներշնչվեցանք: Մեր հետ՝ օտար ափերուն պիտի տանինք Հայրենիքի, Ս. Էջմիածնի և Ձեր հայրական սերը: Այդ սիրով պիտի ապրինք, ուր որ ալ ըլլանք:

Դարձյալ՝ հանուն մեր կազմակերպության, ընդունեցեք մեր որդիական սերը և երախտագիտությունը Ձեր հայրական գուրգուրանքին համար»:

Այնուհետև ամերիկահայ երիտասարդներին սպասում էր մեկամսյա խիստ հագեցած մի ծրագիր. հանդիպումներ և դասախոսություններ Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեում և Մատենադարանում, սիստեմատիկ պարապմունքներ և ուսուցում՝ հայոց լեզվի, պատմության, հայ երգի ու պարերի. այցելություններ՝ հայ մշակույթի օջախներ, մայրաքաղաքի տեսարժան վայրեր, թանգարաններ, տուն-թանգարաններ, օպերա, Հայհամերգի դահլիճ, պատկերասրահներ, Էրեբունի. այցելություններ Հայաստանի տեսարժան վայրեր և պատմական հուշարձաններ. պտույտներ՝ դեպի Սևանա լիճ, Սարդարապատ, Գառնի, Գեղարդ, Դիլիջան, Ամբերդ, Խորվիրապ, Դվին, Գոշավանք, Հաղարծին, Կեչառիս, Ծաղկաձոր, Հաղպատ ու Սանահին:

Երիտասարդները աղոթեցին մեր սուրբ տաճարների մեջ. մասնակցեցին սուրբ պատարագների ու ժամերգությունների Մայր Աթոռում, Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե, Ս. Շողակաթ, Ս. Գեղարդ, Խորվիրապ վանքերում, Ս. Մեսրոպ Մաշտոց, Ս. Սարգիս, Ս. Աստվածածին եկեղեցիներում:

Հունիսի 27-ին Ս. Հռիփսիմե եկեղեցում պատարագ մատուցեց Տ. Հայկազուն աբեղա Մելքոնյանը, հոգևոր երգեցողության բաժինը կատարվեց մասնակցությամբ ամերիկահայ երիտասարդների:

Մեկ ամիս շարունակ նրանց աչքերը, ականջներն ու հոգիները լեցվում էին հայկական շնչով: Մեկ ամիս շարունակ նրանք սովորում էին, երբեմն ըմբոստանալով իրենք իրենց դեմ. «Կարճ ժամանակի մեջ այնքան շատ բան սորվեցանք և տեսանք Հայաստանի մեջ, որ չենք գիտեր, որը յուրացնել»:

Ակնթարթի պես անցան երիտասարդների խոնջացած, բայց երջանիկ օրերը մայր հայրենիքի մեջ: Երբեք չկացվեց ժամանակի ընթացքը, և վերջին օրերին ոչ ոք չէր ուզում հավատալ, որ պետք է բաժանվի հայրենիքից՝ հարապատ դարձած վայրերից, հարապատ դարձած բարեկամներից:

Բայց ահա նորից հավաքվել են Վեհափառ Կաթողիկոսի շուրջ, Վեհարանում, վերջին հրաժեշտը առնելու համար Հայոց Հայրապետից: Զգացումները խտացել են նրանց սրտերում և առատապես դուրս են հորդում:

Վեհափառ Հայրապետը բարի ճանապարհի մաղթանքից հետո մի կարճ պատգամ է ուղղում ուսանողությանը, Իր հայրական խոսքը տալով նրանց, որ՝ ուր էլ որ գնան, որտեղ էլ որ ապրեն, թող չմոռանան մայր հայրենիքը և Սուրբ Էջմիածինը: «Հայրենիքից լույս տարեք ձեր եղբայրներին,—ասում է Հայրապետը,—նորից եկեք Հայաստան, այս անգամ, ինչու չէ, ձեր կավակների հետ»:

Եվ ապա լսվում է խոսքը ի դեմս երիտասարդության:

«Նորին Սուրբ Օծություն, Վեհափառ Տեր.

Շուրջ մեկ ամիս մեր խումբը կգտնվի հայրենիքի մեջ: Մենք բազմաթիվ տեղեր եղանք, տեսանք գեղեցիկ Սևանը, Սարդարապատի հուշարձանը, Գառնու տաճարը և շատ մը եկեղեցիներ, հիացանք մեր ժողովուրդի

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ՝ ՇՐՋԱՊԱՏՎԱԾ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ԵԿԵՂԵՑԱՍԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ-ԱՆԴԱՄՈՒՀԻՆԵՐՈՎ, ՎԵՀԱՐԱՆԻ ՇՔԱՄՈՒՏՔԻ ԱՌԱՋ (1982 Թ. ՀՈՒՆԻՍԻ 27).

պատմության ու մշակույթի ստեղծագործությանց վրա:

Իսկական հրաշք մըն է Երևանը՝ մեր մայրաքաղաքը, իր վարդագույն շենքերով, թանգարաններով, հուշարձաններով, պաղ ջրի աղբյուրներով, թատրոնի ու օպերայի շենքերով և հրապարակներով:

Մենք մոտեն ծանոթացանք նաև հայ գրի և գրականության ստեղծման պատմությանը, սորվեցանք մեր ժողովրդի երգն ու պարը: Մեր այս այցելության ժամանակ հասկացանք, որ իրավ՝ Հայաստանը բաց թանգարան մըն է՝ երկնքի տակ:

Վեհափառ Տեր, շատ դժվար է քիչ խոսքով պատմել այն բոլորին մասին, ինչ որ տեսանք և, մանավանդ, ինչ զգացինք: Սուրբ Էջմիածինը միշտ եղած է մեր սիրտերուն մեջ, բայց հիմա, որ տեսանք մեր աչքերով, ավելի լավ կրնանք ըմբռնել այդ անհուն սերը, որ ունի մեր ժողովուրդը մայր հայրենիքի և Մայր Աթոռի նկատմամբ: Այդ սերը, որ արդեն իսկ ունեինք մեր մեջ, արմատավորված է մեր սիրտերուն մեջ:

Վեհափառ Տեր, թույլ տվեք մեր խումբի և համայն Հայաստանյայց Եկեղեցվո Ամերիկայի Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության կողմե համբուրել Սուրբ Աջդ և ետանալ Ձեր հայրական օրհնությունները:

Ընդունեցեք այս փոքր խոսքը որպես նվեր մեր խումբին կողմե, որ կընծայենք ձեվ, որպես Ձեր հարազատ զավակներ»:

Խոսողը խմբի ամենակրտսեր, ամենազգայուն անդամն էր՝ Լինա Պալուլյանը, որն, ի դեպ, բոլորից լավ էր խոսում հայերեն: Հիշում եմ իրենց մեկնումի նախորդ օրը, երբ խմբի անդամները վերջին լուռ աղոթքն էին մրմնջում Մայր տաճարում, ինչպես էին արցունքներից մշուշվել բոլորի աչքերը, իսկ փոքրիկ Լինան ոտղակի փղձկաց:

Մտովի հարցրեցի՝ ինչո՞ւ կու լաք: Եվ ինքըս էլ գտա պատասխանը.

«Դուք կու լաք երթալու ատենին, որովհետև երթալով՝ հայրենիք մը պիտի կորսընցընեք. պիտի կարոտնաք: Հոգիս մեջ՝ ես ալ կու լամ ձեր երթալու ատեն, որովհետև բարի հոգիներ պիտի կորսնցնենք, պիտի կարոտնանք...»:

Հուլիսի 7-ին Երևանի Արևմտյան օդանավակայանից ինքնաթիռը օդ բարձրացավ՝ իր հետ տանելով Հայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպության անդամներին: Նը-ռանք մեկնեցին՝ իրենց հետ տանելով հայրենի հիշատակներն ու բարեկամների սերը:

Ավանդություն է...

ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

ԾՆՈՐՀԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա.

Ս. Էջմիածին

Վեհափառ Տեր,

Հանուն Ամերիկահայոց Արևելյան Թեմի Երիտասարդաց Կազմակերպության 36-րդ տարեկան համաժողովին, որ տեղի ունեցավ Հարտֆորդ, Կոննեկտիկոտ, սեպտեմբեր 1, 2, 3-ին 1982 թ., կհայտնենք բոլորիս որդիական սերն ու հավատարմությունը Ձերդ Սրբության, ամերիկահայ երիտասարդներու հանդեպ Ձեր ցուցաբերած հայրական վերաբերմունքի, մասնավորի ամառային միամսյա դասընթացներու առթիվ Ձերդ Սրբության Բյուրականի ամառանոցում հյուրընկալության համար:

Ի սրտե կմաղթենք և խոնարհաբար կաղոթենք Ձեր արևշատության և մեր հավատքի կեդրոն Սուրբ Էջմիածնի անսասանության համար:

Ամերիկահայ Եկեղեցասեր Երիտասարդաց Կազմակերպություն

Ատենապետ՝ Հարութ Դավթյան
ԱԵԵԿ-ի վարիչ քարտուղար՝ Հակոբ Մակարյան

Սեպտեմբեր 8
1982 թ.



ՍՍՀՄ ԿՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀԱՎԱՔԸ ԶԱԳՈՐՍԿՈՒՄ

Ս/թ. հուլիսի 6-ին Մոսկվայի մոտ, Զագորսկի Ռուսաց մայրավանքի հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում, տեղի ունեցավ ՍՍՀՄ-ում գործող Եկեղեցիների և կրոնական հարանվանությանց ներկայացուցիչների համատեղ հանդիպում: Այն կայացավ Մոսկվայի և Համայն Ռուսիո Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքի հրավերով՝ նպատակ ունենալով քննարկել մայիսի 10-ից 14-ը Մոսկվայում կայացած «Կրոնական գործիչները միջուկային աղետից կյանքի սրբական պարգևը պաշտպանելու համար» համաշխարհային կոնֆերանսի արդյունքները:

Սույն հանդիպումին, հանուն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի և Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի, իրենց մասնակցությունը բերեցին Շիրակի թեմի առաջնորդ Տ. Նարեկ եպիսկոպոս Շաքարյանը և Վրաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Հանդիպումը տեղի ունեցավ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի նախագահությամբ: Նա ջերմորեն ողջունելով ներկաներին՝ հանգամանորեն խոսեց նաև Զագորսկում պարբերաբար գումարվող համատեղ հավաքների, օրվա հավաքի, ինչպես նաև վերջերս Նյու Յորք կատարած իր այցելության և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի վինաթափման երկրորդ հատուկ նստաշրջանում իր ունեցած ելույթի մասին:

Հանդիպման գլխավոր բանախոսն էր Մինսկի և Բելոռուսիայի միտրոպոլիտ Ֆիլարետը, որն անդրադարձավ սույն թվականի մայասին Մոսկվայում տեղի ունեցած կրոնական գործիչների միջազգային կոնֆերանսի արդյունքներին:

Ելույթներով հանդես եկան քրիստոնեական, մահմեդական, մովսիսական և բուդդայական կրոնների բարձրաստիճան ներկայացուցիչները:

Տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը ընթերցեց Նորին Սրբություն Պիմեն Պատրիարքին ուղղված Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ի հետևյալ ողջույնի խոսքը ռուսերեն թարգմանությամբ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
Տ. ՊԻՄԵՆ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ
ՌՈՒՍ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ

Մոսկվա

Սիրեցյալ եղբայր Մեր ի Քրիստոս,

Հանուն աշխարհի խաղաղ գոյակցության պահպանման և վինաթափման սրբական պայքարի, նոր մի հաղթանակ ևս արձանագրեց մայիսյան համաշխարհային համագումարը, որը տեղի ունեցավ Մոսկվայում Ձերդ Սրբության նախաձեռնությամբ ու հրավերով, համագումար, որին մասնակցեցին աշխարհի կրոնական բոլոր կազմակերպությունները՝ բոլոր ցամաքամասերից:

Եվ համագումարի տրամաբանական հետևանքը եղավ Ձեր արտասանած խաղաղության հուսիչ կոչը հունիս ամսին Միացյալ Ազգերի Կազմակերպության բարձր ամբիոնից: Ձեր խոսքը միջազգային մեծ իրադարձություն էր և առաջին անգամն էր, որ այդ բարձր ամբիոնից հնչում էր ոչ միայն մի Եկեղեցու անունից, այլ կարծում ենք նաև բո-

լոր այն Եկեղեցիների անունից, որոնք մասնակցեցին Մոսկվայի մայիսյան համագումարին:

Վստահ ենք, թե ինչպես Մենք, իբրև Գլուխ Հայ Եկեղեցու, այնպես էլ մայիսյան համագումարին մասնակցած բոլոր կրոնների ներկայացուցիչները և մանավանդ Սովետական Միության Եկեղեցիներն ու կրոնական կազմակերպությունները հոգեպես միաբանվեցին և երախտապարտ եղան Ձերդ Սրբության:

Նյու Յորքից Դուք վերադարձաք հոգևոր մեծ հաղթանակով, հաղթանակը Քրիստոսի ավետարանական ոգու, հաղթանակը Ռուս Պրավոսլավ Եկեղեցու մեր օրերի խաղաղասիրական առաքելության, հաղթանակը սովետական ժողովուրդների մարդասիրական իդեալների:

Դարեր շարունակ պատերազմների թատերադեմ եղած և բազմիցս նահատակված Հայ Եկեղեցին ու իր ժողովուրդը, որ մահվան անդունդից փրկվեց ռուս ազատարար բանակների շնորհիվ և իր վերածնունդի շրջանն է ապրում սովետական ժողովուրդների մեծ ընտանիքում, մի գերագույն իղձ ունեն, այն է, որ պատերազմի կրակը երբեք չմոտենա սովետական խաղաղ ու ազատ հայրենիքի սահմաններին, որ սովետական եղբայրացած ժողովուրդների ընտանիքը շարունակի իր շինարար, բարգավաճ ու արդար կյանքը, մշտական խաղաղության ու ծաղկման ճանապարհով:

Հանուն Հայ Առաքելական Եկեղեցու և Սովետական Հայաստանի ու արտասահմանի հայ ժողովրդի, Ձեզ ենք բերում Մեր շնորհակալությունը, Մեր բարձր գնահատանքը և Մեր հարգալից սերը:

Սրբազնագույն Պատրիարք Հայր, սիրեցյալ Եղբայր Մեր հարազատ, թող բարին Աստված Ձեզ պարգևի ևս բազում կենաց տարիներ լիակատար քաջառողջությամբ, ի գլուխ Ռուսաց Պրավոսլավ պանծալի Եկեղեցու և ի մխիթարություն մեզ բոլորիս:

«Այլ Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ առաւելով ձեզ յուսով զօրութեամբ Սուրբ Հոգւոյն» (Հռոմ. ԺԵ 13): Ամէն:

ՎԱԶԳԵՆ Ա
ԿՈԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

2 հուլիս 1982 թ.

Մտքերի փոխանակությունից հետո, հանդիպման ավարտին, խմբագրվեց ժողովի պաշտոնական հայտարությունը՝ ի նպաստ խաղաղության պաշտպանության, և մի հեռագիր՝ ուղղված ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Զինաթափման երկրորդ հատուկ նստաշրջանի նախագահ պրն. Իսմայիլ Կիտտանիին:

«Մենք՝ Սովետական Միությունում գործող Եկեղեցիների և կրոնական հարանվանությանց պետերն ու ներկայացուցիչներս, հավաքված Զագորսկի Երրորդության-Սերգիևսկ մայրավանքում՝ քննարկելու Մոսկայում սույն թվականի մայիսին կայացած «Կրոնական գործիչները կյանքի սրբական պարգևը միջուկային աղետից պաշտպանելու համար» համաշխարհային կոնֆերանսի արդյունքները, ինչպես նաև որոշելու մեր խնդիրները այդ կոնֆերանսի որոշումներն իրագործելու վերաբերյալ, մեր հայացքները հույսով ուղղում ենք ձեզ՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Զինաթափման երկրորդ հատուկ նստաշրջանի մասնակիցներիդ, սպասելով Ձեզանից միջուկային աղետը կանխելու, ըսպառազինությունների մրցավազքը դադարեցնելու և զինաթափման աշխատանքներն սկսելու որոշումների:

Հակառակ այն բանին, որ միջազգային սուր դրությունը դեռևս պահպանվում է, մենք չենք կորցնում այն հույսը, որ ՄԱԿ-ի մասնակից տերությունները զինաթափմանը նվիրված իրենց հատուկ նստաշրջանում կարողանան ընդունել զինաթափման համընդհանուր ստրատեգիա: Մենք չենք կորցնում այն հույսը, որ ձեր նստաշրջանը կօգնի դադարեցնելու տարաձայնությունների քաղաքականությունը, որ տանում է դեպի միջազգային լարված դրության խորացում, ռազմական դիմառնության ուժեղացում և միջուկային պատերազմի ծագման վտանգի մեծացում: Նստաշրջանի ամբիոնից այս բոլորի մասին դիմելով Ձեզ, ոչ շատ վաղուց խոսեցին ոչ պետական շատ կազմակերպությունների ներկայացուցիչներ: Դրան են կոչ անում Մոսկվայում կայացած միջկրոնական, խաղաղասիրական համաշխարհային կոնֆերանսի մասնակիցները, որոնց կոչը հունիսի 24-ին ներկայացվեց Հատուկ Նստաշրջանին Մոսկվայի և Համայն Ռուսիո Պատրիարք Պիմենի ելույթում: Գիտակցելով Ձեր առաքելության ողջ դժվարությունն ու պատասխանատվությունը՝ մենք, հանուն մեր երկրի միլիոնավոր հավատացյալների, կոչ ենք անում Ձեզ, անել հնարավորը՝ պահպանելու համար աշխարհը միջուկային հրդեհից, որպեսզի մահաբեր վենքի պաշարները երբեք ի գործ չդրվեն:

Լցված հավատով դեպի համընդհանուր, արդար և հաստատուն խաղաղության հաղթանակը, մենք նստաշրջանին ցանկանում

ենք օրինաբեր հաջողություններ և ջերմապես աղոթում ենք դրա համար:

6 հուլիսի 1982 թ.

Հուլիսի 6-ի երեկոյան Զագորսկի մայրավանքի սեղանատանը, ի պատիվ հանդիպման մասնակիցների, տրվեց պաշտոնական ճաշկերույթ՝ նախագահությամբ Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքի:

Ճաշկերույթին ներկա էին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական գործերի խորհրդի նախագահ Վ. Կուրոյեդովը և իր տեղակալը:

Հանդիպումն ավարտվեց խաղաղության գործի հաղթանակի ակնկալությամբ և բարի հույսերով:





ՖՐԱՆՍԱՀԱՅ ՈՒԽՏԱՎԱՐՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Սույն թվականի հուլիսի 23-ին Մայր Աթոռ այցելեցին Առնուվիլ քաղաքի (Ֆրանսիա) հայոց Վարագա Ս. Խաչ եկեղեցու վարչության անդամները՝ գլխավորությամբ Առնուվիլի հայկական համայնքի հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ քահանա Ժամկոչյանի:

Այցելուների խմբի հետ Մայր Աթոռ էին ժամանել նույնպես Առնուվիլի քաղաքագլուխ պրն. Կլոդ Բիժելը և նրա տեղակալ պրն. Ժիրայր Նիկողոսյանը՝ իրենց հարգելի տիկինների հետ:

Առավոտյան ժամը 10.30-ին Վեհարանում Մայր Աթոռի հյուրերին ընդունեց Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը: Նորին Սրբությունը ջերմորեն ողջունեց մեծարգո պրն. քաղաքագլխի, նրա տեղակալի և Առնուվիլի հայոց եկեղեցու պատվարժան վարչության անդամների ներկայությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում և բարի գալուստ մաղթեց նրանց:

Պատասխան ողջույնի խոսքով հանդես եկան պրն. Կլոդ Բիժելը և Տ. Մեսրոպ քահանան՝ Ամենայն Հայոց Հայրապետին հաղորդելով Առնուվիլի ողջ հայկական համայնքի հավատարմությունը և որդիական սիրո զգացումները դեպի Մայր Աթոռը և նրա արժանընտիր Գահակալը:

Ապա Նորին Սրբության և հարգարժան հյուրերի միջև տեղի ունեցավ ջերմ ու սրտագին զրույց, որի ընթացքում հուշանվերներ փոխանակեցին Ամենայն Հայոց Հայրապետը և Առնուվիլի քաղաքագլուխ պրն. Կլոդ Բիժելը:

Ընդունելությանը ներկա էին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Արևմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ և Ֆրանսիայի հայոց առաջնորդ Տ. Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոս Պողապայանը և Մայր Աթոռի միջեկեղեցական հարաբերությունների բաժնի ընդհանուր քարտուղար Պարգև Շահբազյանը:

Այնուհետև հյուրերն այցելեցին Մայր տաճար, ծանոթացան Մայր Աթոռի թանգարաններում ցուցադրվող եկեղեցական արվեստի թանկարժեք նմուշներին, ապա մեկնեցին Ս. Գայանե և Ս. Հռիփսիմե վանքերը, որտեղ նրանց տրվեցին հակիրճ տեղեկություններ այդ վանքերի հիմնադրման, նրանց պատմության և վերջին տարիներին այնտեղ կատարված վերանորոգչական աշխատանքների մասին:

Նույն օրը, կեսօրից հետո, ժամը 16-ին, Բյուրականի իր ամառանոցում Ամենայն Հայոց Հայրապետը, ի պատիվ հյուրերի, տվեց պաշտոնական ճաշկերույթ, որին ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի ատենապետ Տ. Սիոն արքեպիսկոպոսը, Տ. Սերովբե արքեպիսկոպոսը, Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Արսեն եպիսկոպոսը, Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպիսկոպոսը և այլ հրավիրյալներ:

Ճաշկերույթի ընթացքում Վեհափառ Հայրապետի և Առնուվիլի քաղաքագլխի միջև փոխանակվեցին բաժակաճառեր:

Հուլիսի 24-ին, առավոտյան ժամը 11-ին, ֆրանսահայ ուխտավորների խումբը, գլխավորությամբ քաղաքագլուխ պրն. Բիժելի, այ-

ցելեց Ս. Գեղարդ վանք, որտեղ նրանց ջերմորեն ողջունեց վանքի վանահայր Տ. Եղիշե ավագ քահանա Սարգսյանը: Մայր Աթոռի հյուրերն այցելեցին վանքի վիմափոր տաճարները և ծանոթացան վանքի պատմական հուշարձաններին: Ապա նրանց պատվին տրվեց մրգասեղան վանատան հյուրասրահում: Այստեղ վանահոր և Առնուվիլի քաղաքագլխի միջև փոխանակվեցին բարիգալստյան և ողջույնի ջերմ խոսքեր:

Հուլիսի 25-ին, կիրակի օրը, առավոտյան ժամը 11-ին, ֆրանսահայ ուխտավորների խումբը, որին մաս էին կազմում նաև ֆրանսիացի ուխտավորները, Էջմիածնի Մայր տաճարում ներկա եղավ սուրբ պատարագի արարողությանը: Սուրբ խորանի առաջ իր ուխտի պատարագն էր մատուցում Առնուվիլի հայոց հոգևոր հովիվ Տ. Մեսրոպ քահանա Ժամկոչյանը:

«Հայր մեր»-ից առաջ «Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր» բնաբանով քարոզեց Ամենայն Հայոց կաթողիկոսը: Իր քարոզի վերջում Նորին Սրբությունը Մայր տաճարում կրկին ողջունեց ներկայությունը Առնուվիլի քաղաքագլուխ պրն. Կլոդ Բիժելի, նրա տեղակալ պրն. Ժիրայր Նիկողոսյանի, Առնուվիլի հայոց Ս. Խաչ եկեղեցու հոգաբարձության մեծարգո անդամների՝ նախագահությամբ տիար Արա Շիրինյանի, ինչպես նաև ֆրանսահայ բոլոր ուխտավորների՝ Սուրբ Սեղանից նրանց բաշխելով հայ ժողովրդի քրիստոնեական հավատքի երկհազարամյա կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օրհնությունները:

Պատարագից հետո հարգարժան հյուրերը հրաժեշտ տվեցին Ամենայն Հայոց կաթողիկոսին և Մայր Աթոռից մեկնեցին գոհունակ սրտով և երախտագետ զգացումներով:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ, ԱՌՆՈՒՎԻԼԻ ՔԱՂԱՔԱԳԼՈՒԽ ՏԻԱՐ ԿԼՈՌ ԲԻՔԻԼԸ՝ ԻՐ ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿՆՈՋ ՀԵՏ, Տ. ՍԵՐՈՎԲԵ ԱՐՔԵՊ. ՄԱՆՈՒԿՅԱՆԸ, ՔԱՂԱՔԱԳԼԽԻ ՏԵՂԱԿԱԼ ՏԻԱՐ ԺԻՐԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆԸ ԵՎ ԱՌՆՈՒՎԻԼԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ (ՎԵՀԱՐԱՆ, 1982 Թ. ՀՈՒԼԻՍԻ 23).



ՍԻԴՆԵՅԻ ՀԱՅ ԿԵԴՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ

Մեր անմահ բանաստեղծներից մեկը՝ Վահան Թեքեյան, այսպես է գրած. «Անկարելին կարելի դարձնելը մեծ առաքինություն է», որ յուրաքանչյուր անձ պիտի յուրացնի և անպայման գործադրի իր կյանքի տևողության:

Այդպիսի հարցականի առջև էր գտնվում ավստրալահայ ընկերակցությունը երկու տարի առաջ, նախքան իր կեդրոնատեղի ունենալու և կառուցելու աշխատանքները: Հողը պատրաստ էր, բայց նյութական միջոցները շատ նվազ և ոչ նպաստավոր, վարչական կազմը սպասում էր հրաշքի... և իսկապես հրաշքը կատարվեց... հեռավոր Սինգապուր քաղաքից մի զույգ բարի ամուսիններ, Արշակ և Սոֆի Գալսթքներ, լսելով ընկերակցության բարի նպատակը, առատաձեռն կերպով օգնության են հասնում և պատճառ դառնում այս գեղեցիկ և հայ ժողովրդին պատիվ բերող հաստատության կառուցման:

Հայ կեդրոնի բացումը կատարեց Նիու Սաութ Վեյլզի նախարար տիար Էրիք Պետֆըրդ, շաբաթ 27 մարտ 1982: Ներկա էին թեմիս բարեխնամ առաջնորդ Տ. Աղան եպիսկոպոս Պալիոզյան, Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայան, տիար ճոն Մ. Սբենտր՝ ներկայացուցիչ Հյուսիսային Սիդնեյի կեդրոնական կառավարության, բարերարներ տեր և տիկին Արշակ Գալսթքն, Հայ հարանվանությանց հոգևոր առաջնորդներ, կրոնական և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, ավանդապահ մարմինն ու վարչական կազմը իրենց հարգելի տիկիններով, և բազմաթիվ պատվո հուրեր, մոտավորապես 600 հոգի:

Գործադրվեց պատշաճ գեղարվեստական հայտագիր, բոլոր մասնակցողները, լինի երգ, նվագ, արտասանություն և ժողովրդական պարեր, կատարվեցան անթերի, գոհ ձգելով ներկաներին: Բոլորը ոտնկայս ունկընդրում են պետական քայլերգն, զոր շատ վարպետորեն նվագեց ուսանող Մարկ Չոլաքյանը: Անմիջապես բեմ է հրավիրվում ավստրալահայ ընկերակցության նախագահ պրն. Արմեն Աբգար, նախ շնորհակալություն է հայտնում պրն. Պետֆըրտին և իր տիկնոջ, ապա բարիգալստյան խոսք ուղղում բարձրաստիճան եկեղեցականների, պետական, հասարակական և ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Պրն. նախարարը իր տիկնոջ հետ բեմ է հրավիրվում, հարգելի նախարարը փոխանցում է նահանգային նախարարապետ պրն. Բենի սրտագին շնորհավորություններն ու բարեմաղթությունները, ապա պատշաճ բառերով գովքը հյուսում աշխատասեր և ըստեղծագործ հայ ժողովրդի:

Հայկական գեղեցիկ տարազներով պարախումբը, որ կոչվում է «Աշոտ Պատմագըրյան Պարախումբ» ղեկավար տիկին Քնար Հարությունյանի, ամիսների քրտնաջան աշխատանքի շնորհիվ հրապարակ են գալիս և իրենց հեզաճկուն ու շնորհալի ժողովրդական պարերով հիացմունք պատճառում հանդիսականներին:

Բեմ է բարձրանում գաղութիս ծանոթ և

ընկերակցությանս ավանդապահ մարմնի անդամ պրն. Լևոն Շեռամեյան և խոսում օրվա առթիվ և քաջալերում նոր սերունդին պահել և պահպանել հայ ժողովրդի առաքինությունները և դիմագիծը: Սիրված երգիչ պրն. Ռուբիկ Խաբայան երգում է հայրենակարոտ «Բարի արագիլ» երգը, նվագի ընկերակցությամբ տիկին Մարիքա Մելքոնյանի:



Հայ կեդրոնի նորակառույց շենքը (Սիդնեյ)

Առանձին աշխատանք էր տարված հայտագրի գործադրմանը: Օրվա հանդիսավար, պրն. Ն. Չոլաքյանը գործադրության դրավ այն:

Հաջորդ խոսողն էր պրն. Ճոն Սփենտր, ներկայացուցիչը կեդրանական կառավարության, ծանոթ է մեր ժողովրդի դարավոր պատմության: «Աշոտ Պատմագրյան պարախումբը» կրկին բեմ է բարձրանում այս անգամ տղայոց խմբի հետ միասին, խանդավառ կերպով պարում են հայկական ու կովկասյան պարեր, մի պահ հանդիսականներին փոխադրում Հայաստանի անհաս լեռների գագաթներին ու Արարատյան դաշտը իր աննման գեղեցկությամբ: Կեցցեն մեր նորակազմ պարախումբի անդամները և շնորհակալության խոսք պարախումբի ղեկավար տիկ. Քնար Հարությունյանին, որ շարունակի այդ գովելի աշխատանքը: Այս առթիվ շնորհակալության խոսք նաև տիկ. Ժենիկ Հակոբյանին և տիրուհի Քնարիկ Միրզայանին, որոնք սիրով հանձն առին կարելու և պատրաստելու պարախումբի հայկական տարազները, որոնք շատ գեղեցիկ էին և ճաշակավոր:

Գաղութիս մեջ աշխույժ գործունեության են լծված մի քանի հայկական նվագախումբեր, այդպիսիներից է «Ա. Պատմագրյան» նվագախումբը, ղեկավարն էր պրն. Վահե Աղաջանյանը մասնակցությամբ պրն. Վազգեն Աղաջանյանի և պրն. Քրիս Եղյայանի: Առաջին անգամ հանդես գալով այդ երեկո ապացուցեցին, որ լավ են ըմբռնած հայկական ժողովրդական երաժշտությունը և լավ ապագա են խոստանում իրենց նոր ուժեր և նվագիչներ են հարկավոր, կար և կարողություն բոլորին:

Բեմի վրա է ընկերակցությանս բարերար պրն. Արշակ Գալսթըն, համեստությամբ և խորին հարգանքով հայտարարում է, թե ժամանակին եղած է Կալկաթայի Մարդասիրական ճեմարանի սան, ինչ որ ճեմարանն ու ապգը արած ու տված են իրեն, երախտապարտ է և մասամբ ցանկանում է հետ փոխարինել, խոսում էր շատ ազացված և հայտնում, թե իր տիկնոջ՝ Սոփիի և իր կողմից

տասը հայար ավստրալիական դոլլար են նվիրում Հայ Կեդրոնին առ ի գնահատություն, ավանդապահ մարմնի, վարչական կազմի և տիկնանց օժանդակ հանձնախումբի կատարած ու կատարելիք աշխատանքների:

Հեռավոր այս ցամաքամասի վրա քաղցը ու հուսիչ են հնչում Ալեքսանդր Դոլուխանյանի և Աշոտ Պատմագրյանի հորինած ու մշակած ժողովրդական երգերը: Հայ գաղութին շատ ծանոթ ու սիրված երգիչներ, տիկ. Լուիզ Յոգուպյան և պրն. Վազգեն Մարգարյան, որոնք ժամանակին Գահիրեում և Երուսաղեմում իրենց մասնակցությունն են բերած պրն. Ա. Պատմագրյանի կազմած երգչախումբերուն, այդ երեկո իրենց սրտառուչ, քաղցր և հուսիչ ձայներով մի անգամ ևս ապրեցրին հայ անվանի երաժիշտներին ու խմբավարներին: Պրն. Արա Վարդուկյան, անթերի նվագածությամբ ընկերացավ երգիչներին, խանդավառ մթնոլորտ ստեղծելով սրահում:

Առիթը տրվում է Տ. Արամայիս ավագ քահանա Միրզայանին, որը նշում է, թե կյանքի մեջ հաջողում են երկու տեսակ անձինք, իմաստուն խորհողը և համարձակ ու վճռական գործողը:

Հանդեսին մասնակցողները, բոլորը բեմի վրա են կրկին, երգում են դասական շարքը դասված «Էրեբունի» խոր ու իմաստ ունեցող երգը, այլ խոսքով մեր հավարամյա քաղաքամայր Երևանի, հայ ժողովրդի վերածնության երգը... նվագի ընկերակցությամբ տիկ. Մարիքա Մելքոնյանի:

Հանդիսավար պրն. Ն. Չոլաքյան բեմ է հրավիրում տիկ. Ս. Գալսթընին, տիկ. Պետֆըրտին, տիկ. Սբենտըրին և մի շարք համեստափայլ տիկիններ, որոնք ստանում են ծաղկյա կողովներ օրվա առթիվ:

Առաջնորդ սրբազան հոր եպրափակիչ ու քաջալերիչ խոսքերով, հանդիսությունը հասնում է իր ավարտին, գոհունակություն պատճառելով բարձրաստիճան պետական հյուրերին ու ներկա եղող հայ հասարակության: Մեծահարգ հյուրերն ու ներկաները առաջնորդվում են կեդրոնի վարի հարկը, ուր տիկնանց օժանդակ հանձնախումբի կողմից պատրաստված էր ճոխ սեղան հայկական համեղ ուտեստեղեններով: Բոլորը հեռացան լավագույն տպավորություններով:

ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ
ՄԻՐԶԱՅԱՆ



ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ՔԱՐՈԶՈՒԹՅԱՆ ՆՐԱ ՀԱՅԱՍՏԱՆ ԳԱԼՈՒ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԵՎ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԱՏՐՈՒԿ ՀԱՅՈՑ ԱՐՔԱՅԻ ԴՈՒՍՏՐ ՍԱՆԴՈՒԽՏԻ

Սուրբ Թադեոս առաքյալի և Սուրբ Սանդուխտ կույսի վկայաբանությունները հայ եկեղեցական մատենագրության հնագույն և արժեքավոր էջերն են կազմում:

Հայ Եկեղեցին Արևելքի պատմական հնագույն Եկեղեցիներից մեկն է, որը սկիզբ է առել, ըստ Ավետարանների, ապա հայկական ու ասորական պատմական աղբյուրների և եկեղեցական պատմիչ Եվսեբիոս Կեսարացու վկայությունների, Քրիստոսի համբարձումից անմիջապես հետո (Մատթ. ԻԸ 18—20):

Պենտեկոստեի դեպքից հետո (Գործք. Բ 1—12), երբ առաքյալները վերահաստատվեցին իրենց առաքելական կոչման և քարոզության մեջ Սուրբ Հոգու ստացումով, նրանցից երկուսը, Ս. Թադեոս ու Ս. Բարթողիմեոս առաքյալները, Ավետարանի լույսը բերեցին «Ի Հայս», աստվածաշնչական «յերկիրն Արարատայ» (Դ Թագ. ԺԹ 37) և լուսավորեցին իրենց քարոզությամբ «Թորգոմայ տունն» (Եզեկ. ԻԷ 14):

Ինչպես բոլոր առաքելական Եկեղեցիների, այնպես էլ Հայ Եկեղեցու առաքելականության հիմքը **սուրբ ավանդությունն է,** որը անսուտ արձագանքն է պատմական իրողության:

Ս. Թադեոս և Ս. Բարթողիմեոս առաքյալները կոչվում են Հայաստանի առաջին լուսավորիչները:

Նրանց անձնական քարոզության և նահատակության վրա էլ հիմնվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին:

Երկու լուսավորիչ առաքյալների գերեզմաններն էլ մինչև այսօր սրբավայր-ուխտատեղիներ են հայ ժողովրդի համար: Ս. Թադեոս առաքյալի գերեզմանը գտնվում է Արտապ գավառում (Մակու, Արևմտյան Հայաստան), որտեղ և նահատակվում է, իսկ Ս. Բարթողիմեոս առաքյալի գերեզմանը՝ Աղբակում (Վասպուրական, Արևմտյան Հայաստան):

Սուրբ Թադեոս առաքյալը Քրիստոսի 12 առաքյալներից էր: Նա Ավետարաններում կոչվում է նաև Հուդա Հակոբյան (Ղուկ. Զ 16) կամ «Ղեբէոս, որ անուանեցաւ Թադէոս» (Մատթ. Ժ 3): Նրա գրչին է պատկանում Նոր Կտակարանի «Յուդա առաքեալի ընդհանրական թուղթը» (Էջմիածին, 1975, էջ 658—66):

Ս. Թադեոս առաքյալի անունը հաստատուն կերպով կապված է մնում Հայաստանում առաքելական քարոզության սկզբնավորության հետ, ինչ որ ընդունում են քրիստոնեական բոլոր Եկեղեցիները: Հայոց Ընդհանրական Հայրապետության Աթոռը կոչվում է «Աթոռ Թադէի»: Ս. Թադեոս առաքյալի քարոզության վիճակն է եղել Հայաստան աշխարհը:

Այս մասին շատ հետաքրքիր ավանդու-

թյուններ կան հայկական և ասորական աղբյուրներում: Ս. Թադեոս առաքյալի քարոզությունը Հայաստանում տեղի է ունենում Ա դարի 50-ական թվականներին, հետևյալ հանգամանքների ներքո: Եդեսիայի Աբգար թագավորը, որը հայկական աղբյուրներում համարվում է Հայոց թագավոր, պատգամավորներ է ուղարկում Ասորիքի՝ այժմյան Բեյթ-Ձիպրին քաղաքը փարատելու Համար Հռոմի կասկածը, հռոմեացի կուսակալին, բացատրելու համար իր արևելք՝ պարսիկների մոտ գնալու խաղաղասիրական պատճառը, ինչպես պատմում է Մովսես Խորենացին (Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն», Երևան, 1981, էջ 173): Աբգարի պատգամավորության կազմի մեջ են լինում երկու հայ իշխաններ՝ Աղձնիքի Բդեշխը և Ապահունյաց տոհմի նահապետը և Աբգարի հավատարիմ Անանը:

Աբգարի պատգամավորությունը դեպի Եդեսիա իր վերադարձի ճանապարհին ցանկանում է այցելել նաև Երուսաղեմ, Քրիստոսին տեսնելու, որի քարոզության և սքանչելագործությունների մասին լսել էր Ասորիքում: Աբգարի պատգամավորության այցը Երուսաղեմ կուգադիպում է հրեական պասեքի կամ Զատկի մեծ տոնին: Երուսաղեմի Սողոմոնյան տաճարում պատգամավորությունը հանդիպում է Քրիստոսին, որը շրջապատված հրեա ուխտավորներով քարոզում էր: Աբգարի պատգամավորները չեն համարձակվում մոտենալ Քրիստոսին, որովհետև իրենք հեթանոսներ էին: Նրանց մոտենում են Փիլիպպոս և Անդրեաս առաքյալները: Պատգամավորները աղաչում են նրա, որ ցանկանում են տեսնել Հիսուսին: Երկու առաքյալները պատգամավորների ցանկությունը հայտնում են Հիսուսին, որը և ասում է. «Հասել է ժամը, որ փառավորվի մարդու Որդին»: Աբգարի պատգամավորների հանդիպման մասին Հիսուսի հետ կա մի ակնարկություն Հովհաննու Ավետարանի ԺԲ գլխի 20—23 համարներում: Իսկ Անանը, որը նկարիչ էր, փորձում է նկարել Հիսուսին: Այդ չի հաջողվում նրան: Հիսուս վերցնում է նրա ձեռքից նկարչական պաստառը, կպցնում է իր դեմքին, և այնտեղ տպվում է Հիսուսի նկարը: Այդ նկարը եկեղեցական պատմության մեջ կոչվում է «անձեռագործ դաստառակ» կամ «թաշկինակ» որը երկար դարեր որպես քրիստոնեական սրբություն պահվում է Եդեսիայում, ապա միջին դարերում խաչակիրների կողմից տարվում է Ձենովա, որտեղ և մնում է մինչև այժմ Ս. Բարթողիմեոսի տաճարում: Պատգամավորները ուրախությամբ դառնում են Եդեսիա, և այդ բոլորի մասին պատմում՝ Աբգարին, որը երկար ժամանակ տառապում էր նաև բորոտության հիվանդությամբ և ցանկանում էր բուժվել այդ սպվելի հիվանդությունից:

Աբգարը իր պատգամավորների պատմածների հիման վրա հավատում է Քրիստոսին և ընդունում է որ նա ճշմարիտ Աստծու Որդին է: Այս առթիվ, ինչպես Խորենացին է պատմում, Աբգարը մի թուղթ է գրում Փըրկչին և նրան հրավիրում Եդեսիա (Պատմություն հայոց, նույնը, էջ 174—175):

Աբգարի նամակը հասնում է Երուսաղեմ, Հիսուսի ձեռքը: Այս գեղեցիկ ավանդությունը ավարտվում է նրանով, որ Հիսուսը պատասխանում է Աբգարի նամակին և խոստանում իր համբարձումից հետո, առաքյալներից մեկին ուղարկել Եդեսիա, կյանքի խոսքը քարոզելու և բուժելու Աբգարի հիվանդությունը (Խորենացի, նույնը, էջ 176):

Արդարև, Հիսուսի համբարձումից հետո Թադեոս առաքյալը գալիս է Եդեսիա, որպես նվիրական սրբություն իր հետ բերելով Ս. Գեղարդը, որով հռոմեացի զինվորը խոցեց Հիսուսի կողը նրա խաչելությունից հետո (Հով. ԺԹ 34):

«Այդ Գեղարդը Թադեոսը միասին բերած է Հայաստան և այնտեղ պահված է Գառնիի մոտ Այրի վանքը, որ Գեղարդա վանք ալ կոչված է, ուսկից վերջին տարիները փոխադրված է Էջմիածին, ուր և կպահվի մինչև այսօր, և մյուռոնի օրհնության ժամանակ գործածված երեք սրբություններեն մեկն է» (Մաղաքիա արքեպս. Օրմանյան, Ազգապատում Ա հատոր, 1959, Բեյրութ, էջ 34):

Թադեոսը քարոզում և բուժում է Աբգարին: «Թադեոսը Աբգարի արքունիքը կտարվի, անկե կհիանա և անոր երկրպագություն կընե և իբր Հիսուսե խոստացված բժիշկը կընդունի: Թադեոս կքարոզե: Աբգար կհավատա և հրաշքով կբժշկվի» («Ազգապատում», նույնը, էջ 22):

Այնուհետև, Հայ Եկեղեցու առաջին լուսավորիչը, Եդեսիայից անցնում է բուն Հայաստան, ըստ ավանդության Աբգարի քրոջ որդի Սանատրուկ թագավորի մոտ քարոզելու. Արտաշի Շավարշան քաղաքագլուխը, որտեղ և գտնվում էին հայոց թագավորների ամառանոցները (Սոփերք հայկական, Ը գիրք, 1853, Վենետիկ, էջ 13): Այստեղ էլ Թադեոս առաքյալի քարոզություններն ու բժշկությունները ունենում են իրենց բարերար ազդեցությունները և շատեր հավատում են Քրիստոսին, որոնց մեջ էր նաև Սանատրուկի 18-ամյա դուստրը՝ Սանդուխտը, որը ի վերջո Թադեոս առաքյալի հետ նահատակվում է Սանատրուկ թագավորի հրամանով:

Հայ Եկեղեցին ամեն տարի, դեկտեմբերի 4-ին կատարում է հիշատակը Ս. Թադեոս և

Ս. Բարթողիմեոս առաքյալների, որպես Հայաստանի առաջին լուսավորիչների, իսկ Աբգար թագավորի տոնը դեկտեմբերի 4-ին, որպես «նախավկա և անդրանիկ հայ թագավոր»:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հրատարակած Տոնացույցի մեջ («Էջմիածին», 1774) «հիշատակված բուն ապգային տոնը, Սուրբ Սանդուխտ կույսի հիշատակն է (Ապգապատում, նույնը, էջ 36): Սանդուխտը նահատակվել է հայկական հին տոմարի Քաղոց ամսի 13-ին, և նրա հիշատակը միացվել է Սուրբ Թադեոս առաքյալի տոնին՝ որը կատարվում է հուլիսի 24-ին:

Ընդհանրական Եկեղեցու «վկայուհի լինելու փառքը կրնանք իրավամբ մեր Սանդուխտին սեփականել» (Ապգապատում, նույնը, էջ 30): Հայ Շարակնոցի մեջ կա գեղեցիկ, մասնավոր մի Մանկունք շարական նվիրված Սուրբ Սանդուխտին, որը սկսվում է հետևյալ տողով.

«Քև պարծի այսօր Սուրբ Եկեղեցի,
Ո՛վ վկայուհի Սուրբ Սանդուխտ»: (Զայնքաղ շարական, Էջմիածին, 1888, էջ 332).

Հայաստանում Ս. Թադեոս առաքյալի քարոզության և վկայաբանության հետ են կապված նաև Արտապում նահատակված Սամվել իշխանի, Զարմանդուխտ իշխանուհու, Ոգուհի արքայաքրոջ և Ոսկյանց և Սուքիասյանց նահատակությունները, որոնց հիշատակները անցել են Հայսմավուրքի և Հայ Եկեղեցու Տոնացույցի մեջ: Ս. Թադեոսի հետ նահատակվել են 3583 վկաներ, իսկ Ս. Բարթողիմեոսի հետ 2000 (Սոփերք հայկականք, Ը, էջ 26, 57, 75, ԺԹ 29):

«Այս մարտիրոսաց քարոզությունն է, որոնց արյունով աճած են Հայաստանի մեջ Ավետարանի սերմերը... Մեկի բավական է դիտել, կանական կողմերե հավաքված ավանդություններ՝ միաձայնությամբ կհաստատեն Հայոց Եկեղեցվոյն առաքելական հիմնարկությունը» (Ապգապատում, նույնը, էջ 38):

Այժմ, «Էջմիածին» ամսագրի ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում Ս. Թադեոս առաքյալի և Ս. Սանդուխտ կույսի վկայաբանությունների աշխարհաբար թարգմանությունները, մասնակի հապավումներով, աչքի առաջ ունենալով «Սոփերք հայկականք»-ի Ը հատորում, 1854-ին Վենետիկ հրատարակված, նրանց վարքագրությունները:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ



ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԵՎ ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՅՍԻ

Սուրբ և Աքանչելագործ Թադեոս առաքյալի քարոզության վիճակը Հայաստան աշխարհն էր: Նա կյանքի խոսքի քարոզիչ էր և առաջին ընծայալը մարտիրոսական պսակի արժանացած նահատակների մեջ:

Նա Հայաստան գալով, բոլորին հրավիրում էր երկնավոր ընթրիքի. նա ուղարկվել էր մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից, նրա երկինք համբառնալուց հետո:

Հիսուսը իր Սուրբ Աչը դնելով առաքյալների վրա, նրանց փոխանցում էր ճշմարտության լույսը, այսինքն մխիթարիչ Սուրբ Հոգին և օրհնելով նրանց քաջալերում էր լուսավոր խոսքերով և առաքում նրանցից յուրաքանչյուրին տարբեր վիճակներ՝ երկրներ, քարոզելու կյանքի խոսքը:

Իսկ Սուրբ Թադեոսը լցվել էր լուսավոր խորհուրդով: Նրան վիճակվել էր գալ Հայաստան, քարոզելու հայ ազգին:

Նա նախապես գալիս-հասնում էր ասորիների Միջագետք երկիրը, քարոզելու կյանքի խոսքը: Այնտեղ սուրբ առաքյալը կատարում էր նաև զորավոր գործեր և աքանչելի հրաշագործություններ:

Այնուհետև, նա այդ տեղից գնում է Ուրհա (Եդեսիա) քաղաքը և մտնելով Տուբիա (հրեա) բժշկի տունը, բուժում է բոլորի ախտերն ու հիվանդությունները և ամենքին լուսավորում երկնային լույսով:

Ապա սուրբ առաքյալը Եդեսիա քաղաքում գալիս է և մտնում Աբգար թագավորի տունը: Թագավորը տառապում էր բորոտության հիվանդությամբ: Սուրբ առաքյալը նրան բուժում է հանուն մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի, նրան ու նրա ողջ ընտանիքը լուսավորում է երկնային լույսով:

Աբգար թագավորը լսելով Թադեոս առաքյալի և նրա կատարած հրաշագործությունների մասին, հավատում է, որ նա է ուղարկվել Քրիստոսի կողմից:

Այնուհետև սուրբ առաքյալը գալիս-մտնում է Աբգար թագավորի պալատը: Աբգարը տեսնելով սուրբ առաքյալի դեմքի վրա երկնային լույսի նշանը, երկյուղի է մատնվում և ընկնելով նրա ոտքերի առաջ՝ երկրպագում է նրան: Իսկ սուրբ առաքյալը մոտենալով նրան, իր ձեռքը դնում է թագավորի վրա և բուժում է նրան, մեր տեր Հիսուս Քրիստոսի անունով և լուսավորում է նրան ու նրա ողջ ընտանիքը երկնային լույսով: Աբգար թագավորը, այնուհետև, ինքն անձամբ դառնում է իր բուժվելուց հետո, քարոզիչը կյանքի խոսքի և հայտնի է լինում իր բարի բաղում գործերով:

Սուրբ Թադեոսը ամբողջ քաղաքը իր քարոզությամբ լուսավորելուց, իր աշակերտներից մի քանիսին այնտեղ թողնելուց հետո, շտապում է դեպի Հայոց աշխարհը, Սանատրուկ թագավորի մոտ, Արտապ գավառի Շավարշան գյուղաքաղաքը, որտեղ գտնվում էին հայոց թագավորների ամառանոցները և արքունի պալատը:

Սուրբ առաքյալը այստեղ ևս քարոզում է կյանքի խոսքը, կատարում բազում աքանչելի հրաշագործություններ, բուժում ամեն տեսակի ախտեր ու չարորակ հիվանդություններ:

Արքունիքից շատ-շատեր գալիս են սուրբ առաքյալի մոտ, լսելու նրանից քաղցրաբարբառ Ավետարանի քարոզությունը: Նրանք տեսնում էին նաև նրա կատարած աքանչելագործությունները, այն՝ որ նա բորոտներին մաքրում ու բուժում էր, կաղերին քայլեցնում,

դներին հալածում և բոլոր տեսակի չարորակ ախտերը բուժում առողջացնում: Շատ-շատեր այս բոլորը տեսնելով հավատում էին Քրիստոսին:

Սուրբ առաքյալին մոտ է գալիս նաև Սանատրուկ թագավորի դուստրը, որի անունն էր Սանդուխտ: Նա մանկահասակ էր, գեղեցիկ տեսքով, վայելուչ դեմքով, որի նմանը չէր գտնվի երկրի վրա:

Սանդուխտը գիշերները գալիս էր սուրբ առաքյալի մոտ՝ լսելու նրանից Ավետարանի քարոզության խոսքը, լսելու երկնային զորքերի ձայնը. նա ընդունում էր այդ բոլորը և ընկնում Թադեոս առաքյալի սուրբ ոտքերի առաջ և արցունքներով համբուրում դրանք: Նա բազում օրեր աշակերտում էր նրան և զոր ու գիշեր առաքյալից չէր հեռանում և այսպես իր սիրտը կապում, ամրացնում մեր Աստծու՝ Քրիստոսի հանդեպ ունեցած իր սիրով:

Թադեոս առաքյալը տեսնելով այնուհետև Սանդուխտի ջերմեռանդ սերը դեպի Քրիստոսը, նրան մկրտում է «յանուն Հօր և Որդւոյ և Ս. Հոգւոյ»: Նույն պահին սուրբ կույսի վրա իջնում է լուսեղեն մի նշան և այդ լույսի միջից լսվում է երկնային հրեշտակների ձայնը: Այդ նշանի վրա նույն ժամին շատեր հավատում են Քրիստոսին:

Կատարված այս գործերը տեսնելով քրմերի դիցապաշտ պաշտոնյաները գնում և իրենց խստասիրտ և անօրեն Սանատրուկ թագավորին պատմում են:

Չարությամբ լցված թագավորը հրամայում է սրամահ անել բոլոր հավատացյալներին: Նույն պահին երկնքում մի հրաշք է կատարվում նահատակվածների հետ, և շատեր հավատում են Քրիստոսին:

Սաստիկ ահ ու սարսափ է ընկնում անօրենների վրա և նրանցից շատերը խուճապի են մատնվում լույսի ճառագայթների առատությունից և սաստկությունից: Անօրենները չեն համարձակվում այնուհետև ձերբակալել սուրբ առաքյալին: Այդ պահին Փրկիչը երևում է Թադեոս առաքյալին և նրան ասում. «Պի՛նդ կաց, Թադեո՛ս, ես քեզ հետ եմ և կփրկեմ քեզ: Վե՛ր կաց և երևցիր նրանց: Պիտի համբերես բազում նեղությունների, որոնք պիտի պատահեն քեզ, որովհետև, շատեր այստեղ չեն ընդունելու իմ Ավետարանի քարոզությունը, այլ միայն՝ քչեր որոնք պիտի նահատակվեն իմ անվան համար: Ես նրանց կպաշտպանեմ և ինձ մոտ կկանչեմ և նրանց տեղ կտամ իմ Հոր տանը»: Թադեոս առաքյալը պատասխանում է. «Իսկ ես շտապում եմ հասնել քո աստվածության լույսին և լցվել՝ քո փառքի երկնային լույսի սիրով»: Իսկ Տերը ասում է. «Ուրախացի՛ր, Թադեո՛ս, որովհետև կատարելու եմ քո խնդրանքը»: Եվ Տերը օրհնելով նրան՝ համբառնում է: Իր հոր՝ Սանատրուկ թագավորի հրամանով Սանդուխտը ձերբակալվում և բանտարկվում է: Գիշերը սուրբ առաքյալը այցելում է բանտում Սանդուխտին և բանտարկված մյուս հավատացյալներին: Բանտի դռները բացվում են իսկույն սուրբ առաքյալի առաջ: Նա ներս է մտնում և ասում. «Խաղաղություն ձեզ, Քրիստոսի սիրելիներ»: Բանտարկված հավատացյալները տեսնելով սուրբ առաքյալին, նրանից ուժ և ներշնչում են ստանում: Նա մոտենալով Սուրբ Սանդուխտին, համբուրում է նրա շղթաները և ասում է նրան. «Երանի՜ քեզ երկնավոր թագավորի դուստր»: Սուրբ առաքյալը քաջալերում է բանտարկյալներին և ամրապնդում Սուրբ Ավետարանի խոսքերով, ի սեր Քրիստոսի: Ապա Թադեոս առաքյալը նշանացի թելադրում է հավատացյալներին լռել և աղոթել: Աղոթում է նաև ինքը՝ սուրբ առաքյալը, որ Աստված զորացնի Սանդուխտին և նրա բանտակից ընկերներին, այս անհավասար պայքարի մեջ, որպեսզի հավատացյալների վրա ծագի աստվածային ճշմարտության լույսը, և ամոթահար լինի խավարամիտ թշնամին, որովհետև, միայն դու ես, ասում է սուրբ առաքյալը, Աստված՝ աստվածների և Տեր՝ տերերի: Ցո՛ւյց տուր, Տե՛ր, քո զորության նշանը հավատացյալների վտանգի ենթակա մարմինների վրա, որովհետև նրանք քո՛նն են քո ահեղ անվան զորությամբ անպարտելի և հզոր թող մնան հավիտյան:

Աղոթքի այդ ժամին, բանտում լսվում է ուժգին մի թնդյուն, բացվում է բանտի ձեղունը և երկնքից լույս է ծաթում բանտի մեջ, լույս՝ որը ավելի պայծառ էր քան արևի ճառագայթները. և լսվում է երկնային ավետավոր մի խոստում, որը ասում էր դատապարտվածներին. «Քաջալերվեցե՛ք և պի՛նդ կացեք, որովհետև ես շուտով գալու եմ և ձեզ վերցնելու ինձ մոտ: Իսկ քեզ, Սանդո՛ւխտ, որ եկար իմ ետևից, արհամարհեցիր երկրային պատիվները և ինձ հայր անվանեցիր, տալու եմ գերագույն լույսը»: Երկնավոր այդ ձայնը լսելիս բանտարկյալների կապանքները քանդվում են, նրանց մարմնի անդամները առողջանում, և նրանք ոտքի են կանգնում, փառավորում Աստուծուն և ասում. «Մեր Աստված Հիսուս Քրիստոս, գոհություն քո մարդասիրության համար որ եկար մեզ՝ կորըստյան մատնվածներիս, փնտրելու, և փրկելու մեզ դիվապաշտ մոլորությունից, և մեզ զորացրիր հաղթելու աներևույթ թշնամու. մեր կապանքները փշրեցիր, մեր վիրավոր մարմինները առողջացրիր, մեզ քաջալերեցիր քո աստվածության ավետիսի երկնավոր ձայնի

լուսեղեն ճառագայթներով: Արդ, մենք ինչո՞վ կարող ենք, հա՛յր, հատուցել քո այդ աստվածային մարդասիրությանը, եթե ոչ մեր անձերի պատարագով, որպես անուշ հոտ»:

Աղոթքից հետո, լույսի ճառագայթների փարատումով, տեսնում են որ աղոթում է նաև սուրբ առաքյալը: Նա աղոթքից վեր կենալով օրհնում է նրանց և համբուրում սիրո երկնային համբույրով:

Այս բոլորը տեսնելով՝ բանտապահները նոր միայն գլխի են ընկնում որ բանտի դուռը բաց է, և Թադեոս առաքյալը, կանգնած՝ նրանց մեջ: Բանտապահները սարսափի մատնված լույսից, ներս են խուժում, և դողալով ընկնում սուրբ առաքյալի ոտքերին և ասում. «Մենք էլ հավատում ենք քո Աստուծուն, որի մասին դու քարոզում ես, սո՛ւրբդ Աստուծո, ընդունիր մեզ էլ հավատացյալների մեջ»: Բանտապահները փարվում էին սուրբ առաքյալների ոտքերին և արտասվելով՝ ասում. «Ների՛ր մեզ, սո՛ւրբդ Աստուծո, ոչ թե կամովին, այլ ակամա պահպանում էինք սուրբ հավատացյալներին նեղության մեջ, անօրեն թագավորի ահի պատճառով: Իսկ երբ տեսանք ձեր շուրջը լույսի ծագումը բանտի մեջ, տեսանք որ ձեր կապանքները քանդվեցին, և քեզ ճանաչեցինք նրանց մեջ որպես նրանց վարդապետն ու առաջնորդը, և հաստատապես հավատացինք և իմացանք, նա՛ որի մասին դու քարոզում ես, նա՛ է երկրի և երկնքի արարիչը. խոստովանում ենք, որ նա Աստված է, և ոչ ոք կարող է մեզ բաժանել քո Աստծուց»: Բանտապահների այս վկայության վրա սուրբ առաքյալը իմանալով որ այդ բոլորը կատարվել է Աստծու կամքով, ասում է նրանց. «Ի՛մ եղբայրներ, մի՛ վախեցեք, քանի որ դուք ձեր անձերը նվիրեցիք Աստծուն, և հավատացիք նրա Միածին Որդուն և Սուրբ Հոգուն, ես կխնդրեմ Քրիստոսին որ ների ձեզ, որովհետև ինչ որ անում էիք, անգիտությամբ էիք անում այդ: Արդ, պի՛նդ մնացեք և զորացե՛ք Քրիստոսի նկատմամբ ձեր ունեցած հավատի մեջ, և մոռացեք անցյալի ձեր սնոտի և խաբեական մոլորությունները»: Ապա բոլորը միասին աղոթքի են կանգնում, իսկ սուրբ առաքյալը, նույն գիշերն իսկ բանտապահներին մկրտում է «յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ»: Մկրտվածները երեսուներեք հոգի էին:

Իսկ անիծված սատանան մարդկային կերպարանք առած, և բանտի մի անկյունը կանգնած հեռվից լրտեսում է այդ բոլորը: Ապա իր ձայնը բարձրացնելով ասում է բանտապահներին. «Ձեր ի՞նչն էր պակաս, որ լքեցիք մեծ աստվածներ Անահիտին և Արմազդին և մոլորվեցիք մի հրեայի ետևից գնալով, որ ձեզ նոր ուսմունք է քարոզել, և մոլորեցնելով ձեր մտքերը՝ ձեզ կորստյան է մատնել: Արդ, ե՛տ դարձեք ձեր մոլորություններից և երկրպագեցեք Անահիտին: Ես կաղոթեմ բոլոր աստվածներին, որ ներեն ձեզ»: Իսկ Թադեոս առաքյալը, լսելով սատանայի այս խորամանկությունը, ասում է նրան. «Ո՛վ դու չարության բանսարկու, պիղծ ու անամոթ, սրանից հետո էլ կմնաս թշվառական, մինչև ե՞րբ չես ամաչելու Աստծուց, ետիս գնա չարագուխ վիշապ, և վախեցի՛ր Աստծու զորությունից»: Սուրբ առաքյալի այս հանդիմանության և սաստի վրա չքվում և անտեսանելի է դառնում չարը և սուրբ հրեշտակների ձեռքով տանջանքի է ենթարկվում: Իսկ նորադարձները տեսնելով այդ չարագործին այդպիսի անխնա տանջանքների մեջ, Քրիստոսի նկատմամբ իրենց ունեցած հավատի մեջ ամրապնդվում էին:

Չար սատանան ձայնը բարձրացնելով լալիս էր դառնապես և ասում. «Վա՜յ ինձ՝ թշվառականիս, հաղթվեցի խաչեալից և կորստյան մատնվեցի: Բայց, գիտեմ թե ինչ եմ անելու. գնալու եմ իշխանների և թագավորների մոտ, մտնելու եմ նրանց սրտերը՝ գրգռելու, որպեսզի սրամահ անեն սրանց»: Սուրբ առաքյալը նրան ասում է. «Ետիս գնա սատանա, Տերը քեզ սաստելու է»: Իսկ չարագործը երբ լսում է այս, աներևույթ է լինում այդ տեղից, և՛ հասնում է արքունիք և հեթանոսներին գրգռում սրբերի դեմ:

Երբ առավոտ է լինում, թագավորը մտածում է իր դստեր՝ Սանդուխտի մասին, թե ինչ պետք է անել նրան: Նա իր աղջկա դեմ սպանության հրաման չէր կարող տալ, նրա նկատմամբ ունեցած իր հայրական զգացմունքի համար, որովհետև նրան շատ էր սիրում և այդ մասին մտածելով՝ դառնապես լալիս էր: Ապա բանտ է ուղարկում իր իշխանի, որպեսզի պալատ բերի Սուրբ Սանդուխտին: Իսկ Թադեոս առաքյալի ետևից էլ մարդիկ է ուղարկում հրամայելով, որ նրան ևս փնտրեն երկրի բոլոր վայրերում և ճանապարհների վրա, և գտնելով արքունիք բերեն, նրան՝ որ մոլորեցրել էր իր դստերը:

Երբ իշխանը հասնում է բանտ, մի մեծ բազմության հետ, նա բաց է գտնում բանտի դուռը և շատ է զարմանում: Իսկ բանտից ներս նայելով՝ այնտեղ, բանտարկյալների շուրջ տեսնում է ուժեղ լույս, բազում ժողովուրդ, և սուրբ առաքյալը կանգնած, կյանքի խոսքը ուսուցանելիս: Իշխանը, երբ տեսնում է այդ բոլորը և լույսը, որ ավելի էր պայծառանում, լսում էր բանտարկյալների շուրջը ահեղ մի ձայն, վախեցած գետին է ընկնում, տանջվում՝ աներևույթ, անհասկանալի տանջանքներով: Սուրբ առաքյալը, լսելով այդ մասին, դուրս է գալիս բանտից և տեսնում,

որ իշխանը և նրա հետ եղողները թավալվում են գետնի վրա: Նա իր ձեռքը դնում է նրանց վրա և բուժում նրանց: Իշխանը հավատում է այդ դեպքերին, ինչպես նաև նրա հետ եղող հիսուն մարդիկ: Այդ իշխանը կուռքերի վրա կարգված մի մեծ անձնավորություն էր և ամբողջ արքունի տան հրամանատար-վերակացուն: Նա Հայոց տերության երկրորդ մարդն էր, տեսել էր նաև սատանային որ պալատ հասնելով երկու ձեռքի մատներով ծունկն էր բռնել, դառնապես լաց լինում:

Երբ գիշեր է լինում նույն օրը, երկնավոր այդ լույսը կանգնած մնում է բանտարկյալների վրա: Իսկ Սուրբ Սանդուխտը իր հորից գաղտնի պալատ մարդ է ուղարկում և բերել է տալիս նուրբ կտավներ, նահատակ իր սուրբ ընկերների մարմինները «փաթաթում է այդ կտավների մեջ և թաղել տալիս ապարանքի մոտ և ասում. Երանի՜ ձեզ, իմ սիրելի քույրեր և եղբայրներ, որ արժանի եղաք երկնային ուրախություններին, հիշեցե՛ք նաև ինձ, ձեր աղախնուն»:

Իր սուրբ ընկերների մարմինները թաղել տալուց և նրանց շիրիմների պահպանության համար ամեն կգուշություն կատարելուց հետո Սուրբ Սանդուխտը վերադառնում է բանտ, իր կենդանի մնացած ընկերների մոտ և սուրբ առաքյալին տեսնում՝ աղոթելիս, իսկ մի մեծ լույս՝ նրա վրա:

Հավատացյալները սուրբ առաքյալի աղոթքից հետո հաց են մատուցում: Սուրբ առաքյալը վերցնում է հացը, օրհնում և բաժանում Սուրբ Սանդուխտին և նրա ընկերներին: Մի կտոր հաց էլ ինքն է ճաշակում, ապա բոլորը ոտքի են ելնում, օրհնում սեղանը և գոհություն մատուցում Սուրբ Երրորդությանը և խաչակնքելով իրենց երեսները սուրբ խաչի նշանով՝ քնում են: Քրիստոսը նրանց քնի մեջ երևելով քաջալերում է, օրհնում և կրկին երկինք համբառնում:

Երբ առավոտ է լինում, իշխաններ և այլ մեծամեծներ պալատից գալիս-հասնում են բանտի դուռը: Սուրբ առաքյալին, Սուրբ Սանդուխտին և այլ քրիստոնյաներին հանում են բանտից և շղթայակապ տանում թագավորի պալատը: Սուրբ Սանդուխտը միայն շղթայված չէր: Նա բարձր ձայնով և ցնծությամբ ասում է իր շղթայված հավատացյալ ընկերներին. «Իմ եղբայրներ և քույրեր, հաստա՛տ մնացեք ձեր հավատի վրա և կորացե՛ք Քրիստոսով. ոչինչ են երկրավոր թագավորների սպառնալիքները, նայեցե՛ք միայն երկնավոր թագավորին, որին հավատացիք: Նրա՜ն նվիրեցե՛ք ձեր մտածումներն ու սրտերը և նա ձեզ կորություն և ուժ կտա, որովհետև նա՛ է միայն Աստված, և չկա մեկ ուրիշը. նա կպահի ձեզ սնոտի և խաբեպատիր պատրանքներից»:

Մինչ Սուրբ Սանդուխտը խոսում և քաջալերում էր իր ընկերներին, Սանատրուկը հրամայում է ներս բերել նրան:

Թագավորը նրան ասում է. «Մոտեցի՛ր, դո՛ւստր իմ»: Իսկ Սուրբ Սանդուխտը ո՛չ նրա՛ն է նայում և ոչ էլ նրա մոտ է գնում: Իսկ թագավորը ասում է. «Ուրացա՛ր ինձ և այդ մոլորեցուցիչ մարդուն սիրեցի՛ր: Եթե քո համառ մտքերից չհրաժարվես, երդվում եմ բոլոր աստվածների անունով, քեզ և նրան դաժան մահվան կմատնեմ»: Սուրբ Սանդուխտը պատասխանում է. «Նա, որին դու մոլորեցուցիչ ես անվանում, նա՛ ինձ խավարից դեպի լույս է առաջնորդել, ինձ ճանաչացրել իմ Տիրոջը, որ արարիչն է երկնքի և երկրի, Միածին Որդուն և Սուրբ Հոգուն: Ես շտապում եմ գնալ, իմ Տեր Քրիստոսի մոտ, որովհետև նա է տերը տերերի և թագավորը թագավորների, լույսն ու կյանքն է բոլոր արարածների»: Թագավորը հարցնում է Սանդուխտին. «Ո՞վ է նա, որին դու Աստված և Հայր ես անվանում»: Սուրբ Սանդուխտը պատասխանում է և ասում. «Աստվա՛ծ, Աստվա՛ծ է նա, որ ոչնչից ստեղծել է ամեն բան և իր բերանի խոսքով հաստատել է բոլոր արարածներին: Իսկ ձեր մթագնած մտքերով ու խավար խորհուրդներով ուրանալով ձեր արարիչ Աստծուն, որ ոչնչից ստեղծել և հաստատ է պահել ամեն բան, դուք մեռոլոտի կուռքերի ուրվականներին եք երկրպագում, կուռքեր՝ որոնք ո՛չ տեսնում են, ո՛չ լսում և դրանց մեջ դևեր են բնակվում, որոնք մթագնելով ձեր մտքերը՝ ձեզ դարձրել են գեհենի որդիներ: Արդ, դուք գնալու եք դեպի արտաքին խավարը, ձեր գործակից սատանայի հետ, որտեղ կա միայն աչքերի արցունք և ատամների կրճտում»:

Այս խոսքերի վրա Սանատրուկ թագավորը խիստ բարկացած հրամայում է կապել և նրա մարմինը գգգվել տանջանքներով և ապա այրել: Մոտենում է դահճապետը և շղթայում Սուրբ Սանդուխտին: Սուրբ առաքյալը երբ լսում է Սանդուխտի երդվի մասին, հասկանում է, որ նա այդ օրը այս աշխարհից փոխադրվելու է երկինք, հագնելու է լուսեղեն դասերի փառքը, և գլխի վրա ընկնելու է լույսի պսակը: Նա ուրախության արցունքների մեջ Սուրբ Սանդուխտին ասում է. «Երանի՜ է քեզ Սանդուխտ, որովհետև նա, որ երևացել է քեզ, ինքը Քրիստոսն է, նա տեսել է իր հանդեպ ունեցած քո ջերմեռանդ սերը, և դրա համար էլ երևացել է քեզ, որպեսզի առավել ևս քեզ հաստատի իր աստվածության լույսի մեջ: Նա քեզ հագցրել է մի նոր լույս որպես վերարկու և դրել է քո գլխին

լուսեղեն պսակը, վասնզի թողնելու ես քո թանձրամած մարմինը այստեղ, հագնելու ես երկնային լույսը, արժանի ես լինելու մարտիրոսության և քո գլխին կրելու ես հաղթական նահատակության լույսի պսակը, կարդարվելու ես վերնագույն լույսով, բնակվելու ես աստվածության լույսերի մեջ և միշտ մնալու ես գերագույն լույսի ուրախության մեջ: Քրիստոսը անբաժանելի է իր սիրելիներից և նա ուրախացնելու է բոլոր նրանց, որոնք կմնան իր աստվածային սիրո մեջ»:

Իր տեսիլքի մասին սուրբ առաքյալի այդ մեկնությունը լսելով Սուրբ Սանդուխտը ուրախության արցունքներ թափելով, ընկնում է նրա ոտքի առաջ և ասում. «Երանի՜ է քեզ, իմ Հայր, որ վերստին ծնունդ տվեցիր ինձ և սովորեցրիր ճշմարիտ լույսը որ Քրիստոսն է: Դու ինձ համար եղար կենդանի ճանապարհն ու անմահության դեղը: Արդ, խնդրի՛ր Քրիստոսին, որ փութով ինձ կանչի իր մոտ»:

Սուրբ առաքյալը Սուրբ Սանդուխտի այս խոսքերի վրա, նրան ասում է. «Շուտով հասնելու ես կենդանի լույսին, որին այնքա՜ն տենչում ես: Ով Տեր, հիշի՜ր քո աղախնուն և նրան համբերություն տուր այդ օրվա պատերազմի մեջ: Ամաչեցրո՛ւ թշնամուն, որպեսզի բոլոր հավատացյալները ճանաչեն, որ միայն դո՛ւ ես երկնքում և երկրի վրա ճշմարիտ միակ Աստվածը»: Ապա դառնալով դեպի Սուրբ Սանդուխտը, օրհնում է նրան և ասում. «Պինդ կաց և թող Քրիստոսը զորացնի քեզ»: Այս խոսքերի վրա, հանկարծակի բանտի դռներին են հասնում հեթանոս իշխանները իրենց զորականներով: Իսկ մինչ այդ սուրբ առաքյալը, վեր էր կացել և անվտանգ անցել նրանց միջով:

Երանելի Սանդուխտին հեթանոսները տանում են սպանության վայրը: Նա ասում է իրեն տանողներին. «Մի քիչ համբերեցեք, որ ես աղոթեմ իմ Տիրոջը և Աստծուն, նրա սիրելի Որդուն՝ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Ո՜վ Հայր, երկնքից՝ քո սրբության բարձունքից նայի՛ր և ցո՛ւյց տուր քո մարդասեր շնորհներն ու սերը, և ընդունի՛ր քո աղախնու նահատակությունը, որպես անուշ հոտ հանուն քո սիրելի Որդու, և ինձ արժանացրու քո աստվածության երկնային լույսին, վայելելու համար անսպառ և հավիտենական քո բարիքները, որ խոստացար քո սիրելիներին»: Ապա հրաժեշտ տալով սուրբ առաքյալին և բոլոր հավատացյալներին՝ համարձակությամբ մոտենում է իր սպանության վայրին և անօրեններին ասում. «Եկեք կատարելու ձեր հոր՝ սատանայի կամքը», և ինքնահոժար սիրով երկարում է իր պարանոցը դահճի առաջ ու ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, ընդունի՛ր ինձ քո հավիտենական հարկերից ներս. ցանկանում եմ դրան և ուրախ եմ իմ չարչարանքների և մահվան համար: Այս պահին դու ինձ ուժ տուր հաղթելու նրանց, որոնք մարտնչում էին իմ դեմ, հաղթությունը քո՛նն է և քե՛զ է վայել հավիտենական փառքը. ամեն»:

Նույն րոպեին մի պատանի սրով խփում է երանելի կույսի կրծքին, իսկույն արյուն է ժայթքում և բուրում է նահատակության անուշ հոտը: Սուրբ Սանդուխտը ավանդում է իր հոգին Քրիստոսին բարի խոստովանությամբ, հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Նույն պահին երկնքից երևում է լույսի մի սյուն, ապա տեղի է ունենում ուժեղ մի ցնցում, և լսվում է ահեղ ձայնը երկնային զորքերի, որոնք օրհնում և փառաբանում էին Աստծուն: Լուսեղեն սյունը գալիս-հանգչում և մնում է և երեք օր ու գիշեր մնում երանելի Սանդուխտի մարմնի վրա: Այդ օրերին երկու հավար հոգի, տղամարդ ու կին, հավատում են Քրիստոսին: Նորադարձ հավատացյալները չեն հեռանում սուրբ կույսի նահատակության վայրից, որտեղ դրված էր նրա մարմինը: Գիշերը սուրբ առաքյալը գալիս և մկրտում է բոլորին, հանուն Հոր, Որդու և Սուրբ Հոգու: Սուրբ առաքյալը և հավատացյալները, այնուհետև, վերցնելով Սուրբ Սանդուխտի մարմինը, թաղում են նույն վայրում՝ ձեռք առնելով ամեն զգուշություն և երանելի սուրբ Տիկնոջ հանգստարան-գերեզմանը դարձնելով անտեսանելի թշնամիների համար: Սուրբ Սանդուխտի նահատակությունից երեք օր հետո, առավոտյան դեմ, սուրբ առաքյալը աղոթում էր: Փրկիչը երևելով նրան ասում է. «Խաղաղություն քեզ, իմ սիրելի, այսօր հասնելու ես քո նահատակության մարտին, համբերի՛ր, որովհետև բազում չարչարանքներ ես կրելու, իսկ ես չեմ լքելու քեզ»: Փրկիչը օրհնելով նրան աներևույթ է լինում: Իսկ սուրբ առաքյալը կրկին անգամ աղոթելով ասում է. «Գոհությո՛ւն քեզ, մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, որ ինձ չես լքել այս երկրի հեթանոսների ձեռքը և ինձ ցույց ես տվել քո առավել գութը: Արդ, ընդունի՛ր իմ նահատակությունը որպես անուշ հոտ և զորացրու ինձ այս պատերազմի մեջ: Ընդունի՛ր և հիշի՛ր, ով Տեր, քո աղախին Սանդուխտին, որ փոխադրվեց այս աշխարհից քեզ մոտ և նրան խառնի՛ր քո սրբերի գնդերի մեջ, որոնք քո անվանդ համար պատարագվեցին: Շնորհի՛ր նրանց քո աստվածության լույսը և պահի՛ր-պահպանիր քո հավատացյալներին, որոնք քեզ ապավինեցին: Այժմ լսիր նրանց պաղատանքներն ու խնդրվածքները, նրանց՝ որ զոր ու գիշեր քեզ օգնության են կանչում: Հեռացրու նրանցից չար բանսարկուին և ամաչեցրու թշնամուն, որ չի համարձակվի մոտենալ

քո հավատացյալների գնդին: Զորացրու քո ծառաներին, հանուն քո պատվիրանների, որպեսզի նրանք համբերատար ընթացքով հասնեն մինչև վախճանը»: Այնուհետև, նա օրհնելով հավատացյալներին՝ ասում է. «Որդյակնե՛ր, քանի որ դուք ձեր անձերը Աստծուն նվիրեցիք, և ձեր անունները գրեցիք Քրիստոսի գնդերի մեջ, պի՛նդ պահեցեք ձեր հավատը և թող ձեզ զորացնի Քրիստոս Աստվածը և ձեր թիվը բազմացնի ու ամաչեցնի չարիքի բանսարկուին, հեթանոսների մոլորեցուցչին, նետելով նրան ձեր ոտքերի ներքո՝ հավիտյան: Եվ ես ահա փոխադրվում եմ Տեր Հիսուս Քրիստոսի մոտ և խնդրելու եմ նրանից ուղարկի իր զորության հրեշտակը, որպեսզի նա պահի-պահպանի ձեզ հեթանոսական չար լծի ծառայության մոլորությունից, որից ձեզ փրկել և մաքրել է նա իր աստվածության լույսի բովում, որպեսզի դուք դառնաք իր համար սեփական ժողովուրդ: Արդ, նա՛ է ձեր հայրը, տերն ու թագավորը: Թող նա պահի-պահպանի ձեզ և երբեք ձեզ չլքի»:

Հավատացյալները երբ լսում են սուրբ առաքյալի այս խոսքերը և մանավանդ այն, որ նա շուտով փոխադրվելու է երկինք, ընկնում են նրա ոտքերի առաջ, լաց են լինում, համբուրում նրա ոտքերը և ասում. «Մեր հոգիների տերն ու կեցուցիչը, աղոթի՛ր մեզ համար և խնդրի՛ր Քրիստոսին որ նա մեզ չլքի»: Իսկ սուրբ առաքյալը աղոթում էր և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, ձեռքդ բաց մի թող քո այս մի ափ ժողովրդին, որը սրտով քեզ փարել է և նրան պահիր քո աջով»:

Երբ հավատացյալները հեռանում են սուրբ առաքյալի երկնային օրհնությունը ստանալուց հետո, երկու իշխաններ մոտենում են մեծ ամբոխի հետ և անօրեն թագավորի հրամանով ձերբակալում-տանում նրան թագավորի առաջ: Թագավորը նրան տեսնելով՝ հարցնում է. «Դո՞ւ ես Թադեոսը»: Սուրբ առաքյալը ասում է՝ ես եմ: Թագավորը նայելով նրան, տեսնում է սրբի դեմքը պայծառագույն և ահեղ, և երկյուղով լցված հարցնում է. «Ինչպե՞ս գողացար իմ չքնաղ կույս դստեր միտքը, գրավեցիր նրան քեզ և հեռացրիր հայրական իմ իշխանությունից, կըրկեցիր ծիրանապգեստ և ոսկեհուռ պատիվներից, նրան դարձրիր ատելի մեր աստվածներին և ողորմելի մի աղքատ, մինչև որ իմ սրտմտության ցասումը նրան մատնեց անողորմ սրի»:

Սուրբ առաքյալը պատասխանում և ասում է թագավորին. «Ասացիր սուրբ կույսի մասին որ ես գողացա նրան, այո՛, արդարև ես գողացա նրան և ազատեցի ձեր մոլար պաշտամունքներից, խավարածին, չարաչար սպանող, անդնդային գործերի շրջապտույտներից և սառնամանիքներից, դուք՝ որ նվիրվել եք Անահիտի կռապաշտ կուռքերին: Ես գրավեցի նրա միտքը ի Քրիստոս, կրկին ծնունդ տալով նրան սուրբ ավազանի երկնային ծննդով, և հեռացրի նրան քո հայրենական պղծությունից: Քրիստոսը նրան հագցրել է երկնային ճառագայթներ և լուսեղեն փառքեր: Դու կարծեցիր նրան սպանել, բայց նա մահից դեպի կյանք է փոխվել, թև առած բարձրացել լուսեղեն բանակների մոտ, ընդունել անթառամ պսակը և միացել աստվածային սիրո հետ: Այժմ նա ամեն ժամ փառավորում է երկնային սերովբեների դասի հետ Սուրբ Երրորդությունը, քանի որ այնտեղ երկնքում է անսպառ լույսը, հավիտենական կյանքը: Ձեր մտքերը մոլորված են և ձեր խորհուրդները՝ խավար, որովհետև, դուք թողել եք երկնքի և երկրի արարչին, որը ձեզ ստեղծել է ոչնչից և հաստատել երկրի վրա, մինչդեռ նրանից է ձեր կյանքն ու շունչը, իսկ դուք մոլորվելով երկրպագում եք մեռելոտի կուռքերին:

Ձեզ մոլորեցրել է չար ու անիծյալ սատանան և ձգել ձեզ մահվան կապանքների և որոգայթների մեջ: Այդ պատճառով դուք գնալու եք դեպի արտաքին խավարը, որտեղ կա աչքերի լաց ու ատամների կրճտումը»:

Սուրբ առաքյալի այս՝ խոսքերի վրա սըրտմտելով թագավորը ասում է. «Պետք չէ, որ այս մարդը ապրի»: Իսկույն նրան կապելով տանում-բանտարկում են դղյակի պարսպից ներս, որտեղ մարդակեր գազաններ կույին: Անօրենները արձակում են սուրբ առաքյալի վրա երկու առյուծներ, որոնք գալիս-ընկնում են նրա ոտքերին, լիզում՝ նրա ոտքերի հողաթափները, և քծնելով մռմռում: Ապա սրբի աղոթքներով քանդվում են նրա կապանքները: Իսկ անօրեն թագավորը էլ ավելի գըրգռված իր չարության մեջ, հրամայում է կրակի հնոցը վառել, ուժգին բորբոքել և սուրբ առաքյալը կրկին կապկպելով՝ նետել հնոցի կրակների մեջ: Այդ պահին սուրբ առաքյալը աղոթում էր և ասում. «Տեր Հիսուս Քրիստոս, հասի՛ր ինձ օգնության»: Նույն պահին հանկարծակի ուժգին մի քամի է բարձրանում ամպախառն ցողով, հրախառն հնոցի մոտ, և անօրեն հեթանոսներին շպրտում հնոցի կրակների մեջ: Իսկ երկնային ձայների ահը էլ ավելի է բազմապատկում նրանց սարսափը՝ մատնելով բոլորին ստույգ կործանման: Անօրեն թագավորը փախստական դարձած հպիվ հասնում է իր ապարանքը և չար հիվանդությամբ բռնված, ընկնում է ծանր տարակուսանքների և մտատանջությունների մեջ:

Իսկ սուրբ առաքյալը երկնային հույսով

լցված՝ վվարթ էր ինչպես լույսը: Այդ օրերին երբ պատահում էին այս դեպքերը, Քրիստոսին հավատում են 430 հոգի, որոնք և աղաղակում և ասում էին. «Մեծ է քրիստոնյաների Աստվածը»: Սուրբ առաքյալը նույն ժամին մկրտում է բոլորին: Իսկ գավազած անօրեն թագավորը հրամայում է բոլորին սրով սպանել: Այնուհետև, սուրբ առաքյալին տանում են փոքր ձորակից մի քիչ հեռու, մի բարձրավանդակ տեղ, ժայռերի մոտ: Նույն պահին սուրբ առաքյալը կրկին աղոթում է և ասում. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր Աստվածը, ընդունի՛ր ինձ այժմ և ցո՛ւյց տուր քո ահեղ աստվածության նշանը, որպեսզի իմանան բոլորը թե՝ դո՛ւ ես միայն բոլոր արարածների Աստվածը: Խնդրում եմ քեզ, մի՛ լքիր քո ձեռքից այս վիճակը և դրանց այս արածները մեղք մի՛ համարիր, որովհետև չեն հասկանում, թե ինչ են անում: Փոխի՛ր նրանց հեթանոս մտքերը, որպեսզի ճանաչեն քո աստվածությունը, ո՛վ մարդասեր և քաղցր Տեր»:

Ավարտելով իր աղոթքը՝ սուրբ առաքյալը սուրբ խաչի նշանով խաչակնքում է իրեն և ասում իր դահիճներին. «Ինչ ուզում եք՝ արեք»: Դահիճը իր սրով հարձակվում է սրբի վրա, բայց նրա հարվածը վրիպում է հրաշքով, և նա վիրավորում է իր Զեմենտոս եղբորն ու սպանում նրան, որը իշխանն էր արքունական բոլոր ճանապարհների և հավատարիմը արքունիքի: Սուրբ առաքյալը, երբ տեսնում է որ իշխանը մահացավ, տրտմում է, որովհետև նա հավատացյալների կարիքները հոգացողն էր և բոլոր օտարներին խնամողը և ընդունողը: Սուրբ առաքյալը մոտենում է մահացած իշխանին, նայում է դեպի երկինք և ասում. «Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հայր, նայի՛ր երկնքից, քո Սուրբ Աթոռից և կենդանացրո՛ւ այս մեռած մարդուն, որպեսզի բոլորը իմանան որ միայն դո՛ւ ես Աստված»: Եվ ապա բռնելով մեռած իշխանի ձեռքից՝ ասում է. «Քե՛զ եմ ասում, ոտքի՛ ելիր հանուն Հիսուսի Քրիստոսի»: Մեռյալը ոտքի է ելնում ու կանգնում, և ընկնելով սրբի ոտքերին՝ ասում է. «Հավատում եմ քո Աստծուն, որովհետև նա՛ է միայն Աստված և բացի նրանից չկա մեկ ուրիշը»: Սուրբ առաքյալը ձեռքը դնում է նրա վերքերի վրա և բուժում է դրանք: Նույն ժամին հավատում են 720 հոգի: Նորադարձ քրիստոնյաների առաջնորդն էր Զեմենտոսը, որին Քրիստոսը կենդանացրել էր սուրբ առաքյալի միջոցով: Նա ասում է Զեմենտոսին. «Ահա քեզ կենդանացրել է Քրիստոսը, Աստված, Որդին, և քեզ ազատել հայրենի քո մոլորությունից և արժանացրել երկնային լույսին: Արդ, զորացի՛ր և պի՛նդ մնա Քրիստոսի նկատմամբ քո ունեցած հավատի մեջ, նա կպահի քեզ և բոլոր հավատացյալներին»: Սուրբ առաքյալը ապա մկրտում է բոլորին և համբուրում նրանց, երկնային սիրով օրհնում է բոլորին և հանձնում Սուրբ Հոգու պաշտպանությանը: Ապա նորից է աղոթում և օրհնում բոլորին: Երբ նա ավարտում է իր աղոթքը, թագավորը խիստ բարկանալով հրամայում է սպանել նրան: Եվ նույն պահին նահատակում են նրան: Երբ բուրում էր նրա նահատակության անուշ հոտը, և ահեղ սաստկության մի ձայն է լսվում, երկնքից նահատակ առաքյալի վրա մի լույս է ցաթում, լինում է սաստիկ մի ցնցում, և ճեղքված ժայռից Աստուծու զորությամբ դուրս է գալիս սուրբ առաքյալի մարմինը: Անօրենները այս հրաշքի վրա փախչում են, մինչ հավատացյալները նոր ուժ են ստանում ցաթող լույսի ճառագայթներից, որովհետև սուրբ առաքյալը նրանց մեջն էր որպես լույս: Հավատացյալները միաբերան աղաղակում են և ասում. «Սուրբ առաքյալդ Աստծու՝ մեր հայրը, հիշի՛ր մեզ և մի՛ մոռանար»: Հավատացյալները կարծում էին, որ նա մարմնով երկինք է համբարձել: Նրանք վեր են կենում և իջնում նրա սպանության վայրը: Տեսնում են, որ սուրբ առաքյալը սրով է սպանվել՝ և ճեղքված ժայռի միջից վերցնում են նրա մարմինը ու լաց են լինում նրա վրա: Նույն այդ օրը Քրիստոսին հավատում են երեք հազար չորս հարյուր երեսուն հոգի, տղամարդ և կանայք, փառավորելով բարձունքներում բնակվող Սուրբ Երրորդությունը:

ՓԱՌՔ ՄԵԾԱԾ

ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳԻՐՆԵՐ

«Վասն որոյ բաց ընկեցէք կստութիւն, խօսեցարուք կճշմարտութիւն իւրաքանչիւր ընդ ընկերի իւրում»:

«Դրա համար դեն գցեցեք ստահոսությունը, յուրաքանչյուրը թող ընկերոջն ասի ճշմարտությունը»: (Եփես. Դ. 25)

«Որովհետև մենք ջանում ենք ոչ թե անիրավությամբ հաղթել, այլ իրավունքով ճշմարիտն ուսուցանել»:

(Եղնիկ Կողբացի)

ԵՂՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ

Ս. Գրքի թարգմանությունից անմիջապես հետո, ընդամենը 30—40 տարիների ընթացքում, Ս. Մեսրոպը և նրա աշակերտները հայերենի թարգմանեցին Փիլոն և Կյուրեղ Ալեքսանդրացիների, Արիստիդես Աթենացու, Որիգենեսի, Եվսեբիոսի, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Մեծի, Եպիփան Կիպրացու երկերը, որոնց որոշ մասը քրիստոնյա աշխարհին այսօր հայտնի է միմիայն մեզ հասած հայ ձեռագրերի շնորհիվ: Դրանցից հիշատակելի են Եվսեբիոսի «Ժամանակագրությունը», Արիստիդեսի «Ջատագովությունը», Իրենեոս Լիոնացու «Առաքելական քարոզության ապացույցները» և այլն:

Հայ գիտնական հայրերը իրենց մայրենի լեզվով թարգմանեցին նաև անտիկ փիլիսոփաների՝ Արիստոտելի, Զենոնի, Հերմեսի կարևորագույն աշխատությունները: Ավելացնենք դրանց վրա հինգերորդ դարի Մովսես Խորենացու, Ղազար Փարպեցու, Ագաթանգեղոսի, Եղնիկի, Եղիշեի, Կորյունի գործերը, հայ ճարտարապետական հուշարձանների (Էջմիածին, ավելի ուշ՝ Հռիփսիմե, Զվարթնոց), կառուցումը, նկարչության, Հա-

րանց վարքի, հոգևոր երգերի մշակումն ու կարգացումը և մենք կստանանք հայ ոսկեդարի իրական պատկերը:

Հայ Եկեղեցու պատմության մեջ հինգերորդ և նրան հաջորդող դարերը ուշագրավ են նաև այլ պատճառներով: Ճիշտ այս ժամանակ էր, որ Հայաստան ներթափանցեցին Վալենտիանոսի, Մարկիոնի, Պողոս Սամոսատցու աղանդներն ու հերետիկոսական ուսմունքները:

Հայ Եկեղեցին ելնելով տիեզերական ուղղափառության իր դիրքերից արժանի հակահարված էր տալիս հերետիկոսներին:

Այս բոլորի կողքին, գաղափարական պայքարից բացի, Հայ Եկեղեցին և հայ ժողովուրդը պարտավոր էին նաև քաղաքական պայքար մղելու Բյուզանդիայի և Պարսկաստանի դեմ: Երկու պետությունների միջև Հայաստանը, Շապուհ Բ-ի խոսքերով ասած՝ մի «կռվախընձոր» էր հանդիսանում: Եվ եթե Բյուզանդիայի, որպես քրիստոնյա մի պետության, լուծը դեռևս տանելի էր, ապա նույնը չէր կարելի ասել Պարսկաստանի վերաբերյալ, պետություն, որ հայ ժողովրդի համար կատաղի մի թշնամի էր թե՛ քաղաքական և թե՛ կրոնական իմաստով:

Հայերի համար առանձնապես ատելի էին պարսկական մոգերը, որոնք փորձում էին ստիպել նրանց ընդունելու զրադաշտական կրոնը[1]:

Համագործակցելով միմյանց հետ, պարսկական կրոնի ներկայացուցիչները և պետական ղեկավարները աշխատում էին ձուլել և որպես ազգ վերացնել հայերին:

Հայերը դիմադրում էին: Սակայն վինված դիմադրությունից բացի հարկավոր էր ցույց տալ նաև գաղափարական դիմադրություն, այսինքն՝ հասկանալ և հերքել զրադաշտականությունը: Հարկավոր էր ունենալ գաղափարական մի ուժեղ զենք: Եվ այն հայտնվեց:

Դա «Եղծ աղանդոցն» էր, հայ մտածող, աստվածաբան և փիլիսոփա Եղնիկ Կողբացու սքանչելի աշխատությունը:

Եղնիկ Կողբացին և նրա «Հակաճառությունը»

Եղնիկ Կողբացու կյանքի մասին քիչ տեղեկություններ կան: Նրա մասին ամփոփ կերպով գրում են նրա ժամանակակիցները միայն, հիգերորդ դարի հայ պատմագիրները:

Ծնվել է, ըստ Մովսես Խորենացու տվյալների, Արարատյան դաշտի Կողբ գյուղում: Ծննդյան ճիշտ թվականը հայտնի չէ: Հավանաբար 398—400 թթ., կրթությունը ստացել է Վաղարշապատի հայագիր դպրոցում:

Այն բանից հետո, երբ ս. Մեսրոպը ավարտելով իր առաքելական քարոզությունը ի Վրաստան, վերադարձավ հայոց երկիրը, նա ժամանակի կաթողիկոսի՝ ս. Սահակի համաձայնությամբ երկու աշակերտներով ուղարկվում է Եդեսիա՝ ասորերեն լեզու սովորելու, ինչպես նաև՝ եկեղեցական ս. հայրերի աշխատությունները թարգմանելու համար[2]:

Այդ աշակերտներից մեկն էր պատանի Եղնիկը:

Կատարելով ս. Սահակի և ս. Մեսրոպի հանձնարարությունը Եղնիկն ու նրա հոգևոր եղբայր Հովսեփը Եդեսիայից մի քանի թարգմանություններ ուղարկելով Հայաստան ուղևորվում են Կոստանդնուպոլիս:

Կորյուն պատմիչը գրում է, որ Եղնիկն այնտեղ մնաց մինչև 431 թ.: Նա Հայաստան վերադարձավ Եփեսոսի Տիեզերական ժողովից հետո միայն՝ իր հետ բերելով սույն ժողովի որոշումները[3]:

Եղնիկն ու իր ընկերները (Կոստանդնուպոլսում նրանք դառնում են 6 հոգի, որոնց թվում և Կորյուն պատմիչը) իրենց հետ Հայաստան են բերում Աստվածաշնչի հունարեն Յոթանասնից թարգմանության ընտիր մի օրինակ: Հանձնելով այն ս. Սահակին և ս. Մեսրոպին, Եղնիկը նրանց հետ միասին վերանայում և խմբագրում է մինչ այդ կատարված հայերեն թարգմանությունը: Եղնիկը կատարում է նաև մի շարք թարգմանություն-մեկնություններ Աստվածաշնչից[4]:

Եղնիկի հետագա գործունեությունը մինչ 449 թ. անհայտ է: Ավարայրի ճակատամարտից ոչ շատ առաջ նրա մասին խոսում է մեկ այլ պատմիչ՝ Եղիշեն[5]:

449 թ. Հավկերտ Բ-ը պահանջում է հայերից ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտական կրոնը: Հավկերտ Բ թագավորի նամակին պատասխանելու համար հայ ավագանին և հոգևորականաց դասը ժամանակի Հովսեփ կաթողիկոսի գլխավորությամբ հավաքվում են Արտաշատում:

---

[1] —Զրադաշտ—Իրանի հնագույն բնակիչների կրոնը: Հիմնադիր է համարվում Զարատուստրան, հույն գրողների մոտ՝ Զորաստը: Զորադաշտի սրբազան գիրքն է Զանդ-Ավեստան: Հիմնական արարողությունն է կրակապաշտությունը: Աշխարհի վրա գոյություն ունեն երկու սկիզբ՝ բարին և չարը: Նրանց միջև գոյություն ունեցող պայքարն էլ պահպանում է համաշխարհային ընթացքը: Զրադաշտը այլ կերպ կոչվում է Մազդեականություն:

[2] *Մ. Խորենացի*, Պատմություն Հայոց, Երևան, 1961 թ., գիրք 3, էջ 337:

[3] *Կորյուն*, Վարք Մաշտոցի, Երևան, 1911, էջ 74:

[4] *Կորյուն*, նույնը, էջ 76:

[5] *Եղիշե*, Վարդանի և Հայոց պատերազմի մասին, Երևան, 1971, էջ 38:

Հավաքվածների թվում էր նաև Բագրևանդի եպիսկոպոս Եղնիկը: Կաթողիկոսի, հոգևորականների և նախարարների կողմից Միհրներսեհին հասցեագրված պատասխանի մեջ մենք նկատում ենք «Եղծ աղանդոց»-ի հեղինակ Եղնիկի ոճն ու մտքերը: Ավելին, պատասխան նամակում գործածված մի քանի նախադասություններ բառացի կերպով համընկնում են «Եղծ աղանդոց»-ի երկրորդ գրքի «Եղծ քէջին պարսից» գրքում օգտագործված մտքերի հետ, որով և միանգամայն հաստատվում է այն կարծիքը, թե Եղնիկը իր մասնակցությունն է բերել հիշյալ նամակը խմբագրելուն: Եվ հետո, եթե Եղնիկը այդ ժամանակ դեռևս կենդանի էր, ապա նաև որպես պարսկական կրոնի մեծ գիտակ դժվար թե բացակայեր նման հավաքից:

Եղնիկը վախճանվել է 451 թ. Ավարայրի ճակատամարտի նախօրյակին:

«Եղծ աղանդոց»-ը ամենայն հավանականությամբ գրվել է 431—449 թթ., այսինքն՝ Եփեսոսի ժողովից մինչ Ավարայրի ճակատամարտ ընկած ժամանակահատվածում: Սա պարզորոշ կերպով երևում է գրքի բովանդակությունից:

Օրինակ՝ ընդդեմ Մարկիոնի իր չորրորդ գրքում Եղնիկը գրում է մծղնյա աղանդավորների մասին:

Մծղնեականները ունեին նույնիսկ իրենց ս. Գիրքը, որ կոչվում էր «Ասկետիկ» (մենակյաց), որը բանադրվեց Եփեսոսի սուրբ ժողովում: Եղնիկը իր ձեռքում ուներ հիշյալ ժողովի որոշումները և բնական է, որ ընդհանրական եկեղեցու կողմից մծղնեականների վրա դրված բանադրանքը (աղանդ, որը տարածվում էր նաև Հայաստանում) չվրիպեր նրա ուշադրությունից, որի վաղ ապացույցը հանդիսանում է նրա չորրորդ գիրքը:

Այսպիսով, պարզ է դառնում, որ «Եղծ»-ը գրվել է Տիեզերական երրորդ ժողովից անմիջապես հետո՝ 431—449 թթ. ընթացքում:

«Եղծ»-ը բաղկացած է չորս գրքից:

Առաջին գրքի սկզբում կա նախաբան, ուր խոսվում է ամեն ինչի պատճառ հանդիսացող հավիտենական Միակ էության մասին: Առաջին գիրքը՝ «Պատճառ չարեաց», մեկ պատկերացում է տալիս չարի ծագման և ապատ կամքի մասին: Սույն գրքում կա նաև հակաճառություն՝ ուղղված Վալենտինյան աղանդավորների դեմ, որոնք աշխարհի ստեղծման հիմքում ընդունում էին հյուլեների մասնակցությունը:

Երկրորդ գրքում՝ «Եղծ քէջին պարսից» խոսվում է պարսկական կրոնի երկու նախասկզբների (բարի և չար) ուսմունքի, քաղդեական աստղաբաշխության և ժողովրդական սնոտիապաշտության դեմ:

Երրորդ գրքում՝ «Եղծ կրօնից յունաց իմաստնոցն»՝ հիմնականում խոսում է Պլատոնի, ստոյիկյան բնապաշտության, Պյութագորասի և Էպիկուրեսի փիլիսոփայական ըմբռնումների դեմ, ուր Եղնիկը ելնելով քրիստոնեական ուսմունքի դիրքերից խոսում է հոգիների տեղափոխության, աշխարհաճանաչման և առաքինության մասին:

Չորրորդ գիրքը գրվել է Մարկիոնի (Բ դար) աղանդի դեմ:

«Եղծ աղանդոց»-ի վերջում կան Եղնիկի խրատները, ուր նա խոսում է վանականների սիրո, հավատքի և քրիստոնեական առաքինության մասին: Ըստ բովանդակության նրանք տարբեր են և հետաքրքիր նրանով, որ տալիս են տիպար հոգևորականին՝ քրիստոնյա մարդու ճշմարտացի կերպարը:

Գիրքը տեղիք է տալիս շատ վիճաբանությունների ոչ միայն հայ, այլ նաև օտար գիտնականների միջև: Պատճառն այն է, որ այն մեկ է հասել 1280 թ. արտագրված մի ձեռագրով: 1762 թ. այն տպագրվել է Զմյուռնիայում: Երկար ժամանակ կարծվում էր, որ 1845 թ. Զմյուռնիայի մեծ հրդեհից հետո ձեռագիրը ոչնչացվել է, սակայն 1902 թ. այն գտնվեց Էջմիածնի վանքի գրադարանում: Այժմ այդ միակ ձեռագիրը գտնվում է Երևանի Մատենադարանում 1097 համարի տակ: Ձեռագիրը թերի է: Տեղ-տեղ պակասում են որոշ տողեր, երբեմն խանգարվում է մտքերի ներքին հաջորդականությունը:

Եղնիկի գրքով հետաքրքրվել են ոչ միայն հայ, այլ նաև օտար գիտնականներ: Դրանցից կարելի է թվել գերմանացի Շմիդտին, ֆրանսիացի Մարիեսին, Մերսիեին և ուրիշների: Նրա մասին խոսվում է նաև Patrologie Orientale-ի մեջ:

Ռուսերեն լեզվով թարգմանվել է երկու անգամ՝ 1858 թ. Պետերբուրգում (ոչ լրիվ) և 1968թ.՝ Հայկ. ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կողմից՝ Վ. Զալոյանի թարգմանությամբ:

Եղնիկի աշխատությունը ունի նաև իր գրական աղբյուրները: Դրանց թվում հիշատակելի է ս. Մեթոդիոս Ողիմպիացու «Աստուծո, նյութի և ապատ կամքի» մասին գիրքը:

Եղնիկը քաղվածաբար օգտվել է նաև Եպիփան Կիպրացու «Տապան», Արիստիդեսի «Ջատագովություն», Բարսեղ Մեծի «Վեցօրյա» և Գրիգոր Լուսավորչի «Յաճախապատում» գրքերից: Այդ մեջբերումներով մեկ լրիվ պատկերացում են տալիս Եղնիկ աստվածաբանի և փիլիսոփայի աշխարհայացքի խորության մասին: Կողբացու «Հակաճառությունը» ինքնուրույն և ամբողջական մի աշխատություն է, որը հանդիսանում է 5-րդ

դարի հայ դավանաբանական և փիլիսոփայական մտքի պայծառ վկայությունը:

Կողբացու «Հակաճառություն»-ը և նրա «Եղծ քէշին պարսից» երկրորդ գիրքը.

428 թ. Հայաստանում վերացավ Արշակունիների հարստությունը: Մեր հայրենիքի համար սկսվեց վշտի և տառապանքների մի ժամանակաշրջան:

Հայաստանի մի մասը ընկավ Բյուզանդիայի տիրապետության տակ, իսկ մյուս մասը՝ Սասանյան հարստության, որի հիմնադիրը՝ Արտաշիրը իր երկրում վերականգնեց հին զրադաշտական կրոնը: Միանգամայն հասկանալի է, որ հայերի ամեն մի ձգտում՝ պահպանելու քրիստոնեական կրոնը, պիտի բորբոքեր և առաջ բերեր պարսիկների վրդովմունքն ու անվստահությունը, որոնք ամեն կերպ աշխատում էին հայերին հեռու պահել իրենց թշնամիներից՝ հույներից:

Այս նպատակից ելնելով, պարսիկ կառավարիչներն աշխատում էին արգելել հունարեն լեզվի և գրքերի օգտագործումը Հայաստանում: Մյուս կողմից նրանք ջանում էին երկրում քրիստոնեությունը փոխարինել կրակապաշտությամբ:

Պարսից Հավկերտ Բ թագավորը Տիզբոն է հրավիրում հայ, աղվան և վրացի նախարարներին: Այդ հրավերն ուներ իր գաղտնի նպատակը, այն է՝ համոզել իշխաններին հրաժարվելու քրիստոնեությունից և ընդունել զրադաշտական կրոնը: Սակայն քրիստոնյա նախարարներից շատերը չդավաճանեցին իրենց հայրերի հավատքը: Այն ժամանակ Հավկերտը որոշեց գործել ուժի միջոցով: Պարսկաստանում գերի գտնվող շատ իշխաններ զրկվեցին կյանքից: Հայաստան ուղարկվեցին պարսկական կորքեր, որոնք Զրադաշտի սպասավորների՝ մոգերի հետ քարոզանդ արեցին քրիստոնեական տաճարներն ու նրանց փոխարեն հիմնեցին ատրուշաններ:

Հավկերտն ու նրա կողմնակիցները Հայաստան ուղարկեցին Եղիշեի պատմությունից մեկ հայտնի նամակը[6]:

Արտաշատի ժողովում խմբագրված հայ եպիսկոպոսների և իշխանների պատասխանը Միհրներսեհի նամակին հայտնի է: Հայտնի են նաև հետագա իրադարձությունները՝ ընդհուպ մինչև Ավարայրի ճակատամարտը: Ուստի մենք կարող ենք ուշադրություն դարձնել Եզնիկի՝ Զրադաշտի վերաբերյալ արժեքավոր դիտողություններին:

Իր գլխավոր նպատակը Եզնիկը տեսնում է միաստվածության գաղափարների պաշտպանության մեջ, այսինքն՝ ապացուցելու երկու նախասկզբների՝ բարու և չարի համագոյությունը:

Աստված պատճառն է ամենի:

Այս դիրքերից ելնելով էլ, Եզնիկը պայքարում է բարու և չարի համագոյության վերաբերյալ ուսմունքի ջատագովների դեմ՝ ցույց տալով բարու և չարի իսկական փոխհարաբերությունները:

Պետք է ասել, որ բարին և չարը Զրադաշտի մոտ, ինչպես նաև հեթանոսական այլ կրոններում հասկացվում էր ոչ թե որպես մի բարոյական չափանիշ, այլ նախապատճառներ:

Ընդունելով դրանք որպես էություն, կարելի է հեշտությամբ հարել ճակատագրապաշտության: Եզնիկը հարձակվում է այս գաղափարի վրա՝ հերքելով չարի էական գոյությունը: Նա հերքում է չարի և նյութի միջև եղող ամեն մի կապ: Նյութը, ըստ Եզնիկի ինքնիրեն չի կարող ստեղծել չարը, առավել ևս, երբ այն (նյութը) Աստուծո ձեռքում դառնում է այն, ինչ Նա է ցանկանում[7]: Եթե ընդունենք, մտածում է նա, որ բարին ու չարը երկու տարբեր նախասկզբներ են, ապա, ստիպված պետք է ընդունենք, որ գոյություն ունեն երկու առանձին, իրարից անկախ աստվածներ, ինչ որ ճիշտ չէ: Ինչո՞ւ: Նախ և առաջ այդ երկու հակառակ ուղղությունները կոչնչացնեն միմյանց: Այն դեպքում, երբ այդ ուժերից մեկն ու մեկը գերակայեր մյուսին, ապա նա կոչնչացներ վերջինս: Սակայն մինչ այժմ, գրում է նա, մենք չենք տեսել, որ նրանցից մեկն ու մեկը (բարին ու չարը) ոչնչանա[8]: Հիմնվելով ուղղափառ հայրաբանական գրականության վրա Եզնիկը ի հայտ է բերում հետևյալ բանաձևը՝ բարին և չարը ոչ թե բնածին հատկություններ են, այլ ձեռքբերովի[9]:

Նշանակում է՝ չարը էություն չէ: Ի՞նչ է սակայն:

Ապացուցելով նաև, որ չարը ենթակա չէ, Եզնիկը հանգում է այն մտահանգման, որ չարը ենթակայի գործողությունն է: Ոչ ոք չի ասում, թե սպանությունը անձ է, այլ՝ անձի միջոցով կատարված գործողությունը:

---

[6] *Էպոմ.* Պարսից մոգերի ուսմունքի մասին, Պետերբուրգ, 1858 թ., էջ 18: (Ռուսերեն և Եղիշեի «Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին». Երևան, 1957, էջ 24:

[7] *Եզնիկ Կողբացի,* Եղծ աղանդոց, Երևան, 1968, էջ 140 (ռուսերեն):

[8] Նույն միտքը տես *Բասեղ Մեծ,* Վեցօրեայ, Մոսկվա, 1845, Ա մաս, էջ 104 (ռուսերեն):

[9] *Եզնիկ,* նույնը, էջ 53:

Բնութագրելով չարը որպես գործողություն, Եվնիկը ջանում է ապացուցել նաև, թե որտեղից է ծագում այն. «Արդ արև իսկ չարիքըն որ լինին՝ ի տարակուսի կացուցանեն զբաղումս, և բաղում արք աւագք վասն նորին խնդիրս մեծամեծս արարին: Կէսք անսկզբնակից ինչ ընդ Աստուծոյ կամեցան դնել. և կէսք՝ ըստ նմանէ նիւթ ինչ, զոր հիւղն անուանեն, թէ ի նմանէ արար զարարածս. և կէսք հրաժարեցին բնաւ ի խնդրելոյ, որպէս թէ ամենևին այնմ խնդրոյ չիք սպառուած: Բայց մեկ հարկ եղև ի սիրոյ բարեկամաց, և յոչ ուղիղ հայելոյ ընդիմակացն, ըստ մերում տկարության ապաւինեալ յԱստուծոյ շնորհսն, մխել ի խնդիր ճառիցն»[10]:

Որպեսզի պարզենք, թե որտեղից է ծագում չարը, նախ պետք է որոշենք, թե ինչ է այն:

Եվնիկը մտածում է հետևյալը. այն բոլորը, ինչ օգտակար է մարդուն՝ բարի է, ինչ վնասակար՝ չար:

Եթե մարդու համար օգտակար ամեն մի բան բարի է, ուրեմն Աստված բարու արարիչ է, քանի որ Այն չարիք չի կարող ստեղծել: Նա՝ բարության աղբյուր է, իսկ բարի արարչից չարիք չի ծնվում: Նյութից նույնպես չարիք չի կարող ծնվել, քանի որ բնությունը մեկ տալիս է միայն բարին: Խոսելով բնության մեջ եղող բարու և չարի մասին, Եվնիկը ցույց է տալիս, որ այնտեղ բացարձակ իմաստով բարին կամ չարը գոյություն չունեն: Օձը, օրինակ՝ որ չար է կարծվում, օգտակար է նրանով, որ նրա թույնից մարդկանց համար օգտակար դեղ է պատրաստվում: Եթե վերցնենք տիեզերքի չորսի տարրերը (ջուր, օդ, կրակ, հող), մենք կտեսնենք, որ նրանք հանդես են գալիս թե՛ որպես բարու և թե՛ չարի գործոններ: Ջուրը օգտակար է, սակայն այն երբեմն ջրհեղեղի պատճառ է հանդիսանում: Արևը նույնպես, սակայն այն երբեմն այրում է ու ոչնչացնում[11]: Եվ այսպես բաղում օրինակներով Եվնիկն ապացուցում է, որ մի երևույթ կարող է և բարի լինել և չար:

Վերջապես նա հանգում է այն եզրակացության, որ բանականությամբ գործող արարածը միայն (որ է մարդը) ընդունակ է բացարձակ չարի կամ բարու՝ շնորհիվ իր ազատ կամքի դրսևորման. «Որպէս և երկաթ մերթ ի բարիս պաշտի, և մերթ ի չարիս. զի եթէ խոփ և գերանդի և մանգաղ ոք գործիցէ, ի բարուք իրս պաշտեցաւ. ապա եթէ սուսեր և գեղարդի և սլաք. և այլ ինչ զէն՝ որ վնասակար մարդն է, գործ չարութեան գործք. և պատճառ չարութեանն՝ գործելին, և ոչ երկաթն»[12]:

Մարդն ազատ է իր ընտրության մեջ: Նա կարող է ընտրել և՛ բարին, և՛ չարը: Նա ազատ կամքի տեր է: Ի տարբերություն բնության երևույթների և երկնային մարմինների, որոնք ղեկավարվում են Աստուծո կողմից, մարդն ընդունակ է ինքն իրեն ղեկավարելու: Մանրակրկիտ կերպով քննելով Զրադաշտի ուսմունքը բարու և չարի մասին որպես երկու նախապատճառների, Եվնիկը գալիս է այն եզրակացության, որ մեկ է Աստված և նրանից բացի չկա ուրիշ արարիչ մի ուժ, առավել ևս՝ չար[13]: Ըստ Եվնիկի պարսկական երկվության (դուալիզմ) ուսմունքի հիմնական թերությունը նախ և առաջ նրա ներքին հակասության և գաղափարների նախնականության մեջ է: Մի տեղում նա ասում է, որ պիտի աշխատի օգտվել հենց այդ հակասություններից, ինչը և նրան հաջողվում է:

Զրադաշտում ասվում է, որ Զրվանը բոլորից առաջ գոյություն ուներ:

Շատ լավ, մտածում է Եվնիկը, եթե Զրվանը բոլորից առաջ կար, այդ դեպքում նա ումի՞ց էր որդի խնդրում: Եթե նա կատարյալ էր, ապա մի՞թե կատարյալը խնդրելու կարիք ունի[14]: Ապա ասվում է, որ Զրվանը թագավորեց հազար տարի, իսկ մյուս կողմից՝ թե Զրվանի ժամանակ դեռ չէին ստեղծվել ոչ արևը, ոչ լուսինը, ոչ աստղերը և ոչ էլ բուսականությունը: Եթե այդ այդպես է, ապա ինչպե՞ս էին հաշվվում օրերը, ամիսներն ու տարիները[15]:

Եվնիկը մեղադրում է Զրադաշտին տգիտության մեջ, քանի որ նրա ուսմունքը հակասում է բնության տարրական ճանաչման անգամ: Ու այսպես քայլ առ քայլ քննադատելով Զրադաշտի ուսմունքը, նա այն համարում է «տգետների անխոհեմ և հնարովի գաղափարների արդյունք»[16]:

Ցույց տալով զրադաշտականության մեջ գոյություն ունեցող հակասությունները, Եվնիկը տրամաբանորեն հասնում է Զրվանի աստված լինելու հերքմանը՝ ուղղակի հայտարարելով. «Յայտ է՝ թէ ոչ էր երբեք Զրուանն և ոչ է... Արդ սա քանզի ոչ արարիչ է և

---

[10] Գարեգին եպիսկ. Տրապիզոնցի, «Եղծ աղանդոց», Բուենոս Այրես, 1951, էջ 10:

[11] *Եվնիկ*, նույնը, էջ 42 (ռուսերեն):

[12] Գ. Ե. Տ., նույնը, էջ 18:

[13] Նույնը տես Իրենիոս Լիոնացի, «5 գիրք աղանդների մասին», Մոսկվա, 1871 թ., գ. 5, էջ 585 (ռուսերեն:

[14] *Եվնիկ*, նույնը, էջ 87 (ռուսերեն):

[15] Նույնը, էջ 87:

[16] Նույնը, էջ 86;

ոչ արարած, ոչ երբեք նա Աստուած, և ոչ է և ոչ լինի»[17]:

Եղնիկն ապացուցում է նույնպես, որ բարի Որմիզդը և չար Ահրիմանը չէին կարող միասին գոյատևել Զրվանի արգանդում. հակառակ դեպքում նրանք կոչնչացնեին միմյանց, ինչպես ջուրն ու կրակը:

Մանրամասնորեն մերկացնելով և քննադատելով Զրադաշտի ուսմունքը Եղնիկը ցանկանում է հայերի մոտ այն դարձնել ծիծաղելի ու անհեթեթ, հեռացնել հայերին նրանից, հաստատել նրանց սրտերում վստահություն դեպի քրիստոնեական հավատքի ճշմարտացիությունը և վերջապես՝ նախապատրաստել նրանց հայրենի երկրի ապատության համար մղվող գալիք պատերազմին:

Հայ ժողովրդի գոյատևման ժամանակաշրջանը, նրա հաղթանակները իր անկախության համար մղած դժվարին պայքարներում, միանգամայն ապացուցում են մեծ հայրենասեր քրիստոնյայի՝ Եղնիկ Կողբացու հայացքների ճշմարտացիությունը:

ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ

[17] Գ. Ե. S., նույնը, էջ 62:



ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅ ԿԱՆԱՅՔ

ԱԶԻԶ

Ապրել է 15-րդ դարի առաջին կեսում Միջագետքում, Ամիդում:

15-րդ դարի սկզբներին Ամիդը կռվախնձոր էր դարձել շրջակա մուսուլմանական իշխանությունների միջև և ձեռքից ձեռք էր անցնում, ավերվում: Տուժում էին հատկապես քրիստոնյաները, քաղաքում ապրող հայերը:

1431 թվականին մի նոր խորշակ անցավ քաղաքի վրայով: Ժամանակակից գրիչն այսպես է նկարագրում կոտորածը. «առաւել ևս բարկութիւնն Աստուծոյ տեղեաց յԱմիթ մայրաքաղաքի և իսպառ կոտորեաց զամենեսեան առհասարակ»: Գրիչը հայտնում է, որ կոտորվել է 6000 տղամարդ, իսկ կանանց, երեխաների թիվն անհամար է:

Ահա այս 1431 թվականի մահտարաժամին վոհ է գնում քաղաքի հայ ընտանիքներից մեկը: Զոհվում են Վահրամ երեցը, նրա որդի Կարապետը, թոռներ Հովհաննեսը, Հիսեն, Սադաթը, եղբայրներ Աբրահամը, Մուսեսը, եղբորորդիներ Հորդանանը, Վասիլը, Սարգիսը, բարեկամուհի Մարիամը:

Մահտարաժամից փրկվում է միայն Վահրամ երեցի կինը՝ մահդասի Ազիզը, որ «ծեր անձամբ մնաց իբրև զբու յաւերակի միայնացեալ՝ լալագին աչաւք և խոցեալ սրտիւ, անմխիթար յամենայն կողմանց, վերջացեալ ի վաւակաց և յազգականաց»:[152]

Դժբախտ մայրը հոգու մեծ վեհությամբ կարողացել է ապրել և անգամ իր կորած գերդաստանի հիշատակը հավերժացնել: 1431 թվականին նա գրիչ Գրիգորին պատվիրում է մի շքեղ Ավետարան ընդօրինակել: Գրիգորը կատարում է տարաբախտ կնոջ խնդրանքը: Ավետարանը բավական մեծ և ստվարածավալ հատոր է, գրվել է 311 մեծադիր թերթերի վրա, երկսյուն բոլորգրով: Ձեռագիրը ծաղկել է Աբրահամը: Նա նկարել է 14 տերունական մանրանկար, 10 խորան, տասնյակ լուսանցազարդեր, գլխագրեր: Մանրանկարչական աշխատանքն ավարտելուց հետո Աբրահամն ինքն էլ կապմել է Ավետարանը: Կապմի Ա փեղկին ամրացված են արծաթյա յոթ խաչեր, որոնցից երկուսը ականակուռ են:

Ձեռագրի 8ա էջում Աբրահամը կանգնած դիրքով նկարել է Ազիզ մահդասու վաղամեռիկ թոռներին՝ Հովհաննեսին և Հիսեին: Խիստ ուշագրավ են պատանիների հագուստներն ու գլխարկները:

Ազիզ մահդասին Ավետարանը նվիրել է Ամիդի Թորոս վորավարի և Մարիամ Աստվածածնի եկեղեցուն և հետագա սերունդներից խնդրել է, որ ոչ մեկը չփորձի «հեռացուցանել զսուրբ Աւետարանս ի դրանէ սորայ»:

Շուրջ մեկուկես դար անց, 1595 և 1616 թվականներին, ձեռագրի 309ա և բ էջերում ավելացվել են նոր հիշատակագրություններ:

1616 թվականին Բարսեղ վարդապետը գրել է. «Յիշատակ է Սուրբ Աւետարանս Աթխայ Սուրբ Առաքելոցն Ս. Թորոսի առնելոյն ի վեր: Յիշատակ է Սուրբ Առաքելոցն և ես՝ մղրցի Բարսեղ վարդապետս ի թվականին ՌԿԵ (1616) դրի Բ (2) տարուեն ամանաթ.

---

[152] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Ա, էջ 403:

ի դասմակին կրկին դառնայ ի վանքն. բաւ է»[153]:

Ապիպ մահդասու սերունդը չապրեց, չըտեսավ հաջորդ դարերը, բայց և անհետ ու անհիշատակ չմնաց պատմության ծալքերում: Այդ սերունդն ապրում ու հարատևում է, Ապիպ մահդասու Ավետարանը սերունդներին ներկայանում է որպես դարեր առաջ նահատակված այդ գերդաստանը:

Ձեռագիրն այժմ պահվում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

ԽՈՒԹԼԻԿ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Գեղարքունիքում, ամուսինն է Լիպարիտը:

1451 թվականին ամուսինները՝ Խութլիկն ու Լիպարիտը, Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղում մեծ խաչքար են կանգնեցրել իրենց վաղամեռիկ որդու՝ Սևանա լճում խեղդված Ստեփանոս քահանայի հիշատակին:

Խաչքարի քիվին, շրջանակների և ներքին հատվածում փորագրված է. «Կամս[ք]ն Աստուծոյ, ես՝ Լիպարիտ, ամուսին իմ Խաթլիկ, կանգնեցաք զսուրբ խաչս փրկութիւն հոգոց մերոց եւ որդոյ մեր ըՍտեփանոս քահանայի, որ երիտասարդ ամօք, ուժ ընդ սկա մարմնով ի Ծովամէջն ընկղմեցօ՝ սուգ եթող անմխիթարք մինչի օրս հաւիտեան: Յիշեցէք: Թվին Ջ (1451)»:[154]

Խաչը ագուցված է Ս. Աստվածածին եկեղեցու բեմի ճակատին:

Նույն թվականին ամուսինները ևս մեկ մեծ խաչքար են պատվիրել Ստեփանոսի հիշատակին: Երկրորդ խաչքարի արձանագրության մեջ Ստեփանոսի մահվան պատճառը չի նշված: Խաչքարի ճակատին և շրջանակներին փորագրված է. «Աստուծով ես՝ Լիպարիտս, ամուսին իմ Խութլիկս, կանգնեցաք զսուրբ խաչս որդոյ մեր Ստեփանոս քահանո: Յիշեցէք ի Քրիստոս»: Այս խաչքարը ևս ագուցված է Ս. Աստվածածին եկեղեցու բեմի ճակատին:

Հավանաբար ամուսինները սկզբում պատրաստել են տվել երկրորդ խաչքարը, բայց մտածելով, որ դրա փորագրված արձանագրությունից պարզ չի դառնա իրենց որդու մահվան պատճառը, պատվիրել են երկրորդ խաչքարը, որտեղ արդեն հանգամանորեն նշված է վաղամեռիկ Ստեփանոս քահանայի մահվան պատճառը:

ԽՈՆԾԱՏ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Գեղարքունիքում, ամուսինն է մելիք Թանկրիղուլին, հայրը՝ մելիք Խուտայբախշին:

1466 թվականին մելիք Թանկրիղուլը Մարտունու շրջանի Ծովինար գյուղում, եկեղեցու հյուսիսային կողմում, մեծ և գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել Խոնծատի հոգու փրկության համար:

Խաչքարի քիվին և ստորին մասում փորագրված է. «Ես՝ մելիք Թանղրիղուլս, կանկնեցի սուրբ խաչս ի փրկութիւն հոգոյ պարոն Խոնծատին, որ է ամուսին իմ եւ դուստր մելիք Խուտայբախշին: Թվականիս ՋՂԵ (1466)»:[155]

Խոնծատի խաչքարը կանգնած է նույն պատվանդանի վրա, որտեղ դեռևս 1451 թվականին իր հոգու փրկության համար խաչքար է կանգնեցրել ինքը՝ մելիք Թանկրիղուլին:

ԷՄԻՆ ԽԱԹՈՒՆ

Ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում, ամուսինն է Հովհաննեսը:

1471 թվականին Էմին խաթունի որդին՝ Ստեփանոս մահդասին, Հավուց Թառի եկեղեցում, մոր խնդրանքով ու միջոցներով, Ավետարան է ընդօրինակել ու ծաղկել: Ավետարանը գրված է միջին մեծության 337 թղթե թերթերի վրա, երկսյուն բոլորգրով: Ավետարանիչների չորս մանրանկարներից բացի Ստեփանոսը նկարել է 10 խորաններ: Բավական հաջող են կատարված լուսանցազարդերը: Ավետարանի կազմի տակ որպես պահպանակ օգտագործվել են ոտղազգիծ երկաթագրով մագաղաթե երկու թերթեր:

Ստեփանոս գրչի հիշատակարանը գրված է 336ա էջում: Նա գրում է, որ ձեռագիրը գրվել է «ի վշտաշատ ժամանակի, յորում նեղեալք յանարինաց և յանիրաւ պահանջողաց, որ և ապգս մեր Հայոց տառապեալ էին և կեղեքէին»:[156]

Ձեռագրի վերջում թողած հիշատակարանում Ստեփանոս գրիչը հետագա սերունդներից խնդրում է իր մյուս մերձավորների հետ հիշել նաև որդուն՝ Հովհաննես աբեղային: Նույն 1471 թվականին Ստեփանոս գրչի ընդօրինակած ու նկարազարդած մեկ այլ Ավետարանի հիշատակարանից իմացվում

[153] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 580:

[154] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 156:

[155] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 254:

[156] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Բ, էջ 314:

է, որ Հովհաննես աբեղան նույնպես զբաղվել է գրչությամբ:[157]

Էմին խաթունի Ավետարանը ևս կիսել է իր ժողովրդի դառը ճակատագիրը: Այն մնացել է կրակի բոցերում և վերին մասը կիսով չափ այրվել է: Դարեր անց վիրավոր Ավետարանը տարագիր հայի ձեռքով հասել է Վրաստան ու հայտնվել Վրացական ՍՍՀ կենտրոնական պատմական արխիվում և, վերջապես, 1960-ական թվականների սկզբին վերջնականապես հանգրվանել է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում 10154 թվահամարի տակ:

ԽՈՆՏՔԱՐ

Ապրել է 15-րդ դարի վերջերին, ամուսինն է Ղարիպշան:

Խոնտքարն ու Ղարիպշան մարմնավոր զավակ չեն ունեցել և որպեսզի մահից հետո հիշվեն, 1490 թվականին Խոնտքարը Խորոտկա վանքում գրիչ Ալեքսիանոսին պատվիրում է Ավետարան-հոգևորդի ընդօրինակել:

Գրիչը կատարում է Խոնտքարի պատվերը, կարճ ժամանակում ավարտում է Ավետարանի ընդօրինակությունը:

Ավետարանը գրված է միջին մեծության 324 թղթե թերթերի վրա, նկարապարդ է: Կազմի տակ որպես պահպանակ օգտագործվել են ուղղագիծ երկաթագրով 4 մագաղաթե թերթեր, իսկ որպես աստառ՝ դրոշմապարդ կտավ: Կազմի Ա փեղկի վրա ամրացված է խաչ:

Ձեռագրի 319բ և 320ա էջերում գրիչը շարադրել է Ավետարանի գրվելու հանգամանքները: Վերջում նա հետագա սերունդներին ուղղելով խոսքը գրել է. «աղաչեմ զամենեսեան, որք հանդիպիք տեսութեան սորա, սխալութեան և խոշորութեան գրոցս թողութիւն շնորհեցէք զանարժան գրչիս»:[158]

Խոնտքարի Ավետարան-հոգեզավակը անցել է դարերի երկար ճանապարհ: Փոքր Շահ Աբասի օրոք, 1647 թվականին, ձեռագիրը Սոթք գավառում նորոգվել է: Շուրջ 80 տարի անց Ավետարան-հոգեզավակը դարձել է «Խաչինու երկրի տէր» Թարխան յուզբաշու սեփականությունը:

Այժմ Խոնտքարի Ավետարան-հոգեզավակը գտնվում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

[157] Նույն տեղում, էջ 315: Ստեփանոս գրչի երկրորդ Ավետարանը Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է 215 թվահամարի տակ:

[158] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 161:

ՎԱԽԱԽ

Ապրել է 15-րդ դարի վերջերին Գեղարքունիքում:

1495 թվականին Վախախի որդին՝ Ստեփանոս քահանան, ներկայիս Մարտունու շրջանի Վարդենիկ գյուղի տարածքում, Իշխանավանքի գերեզմանոցում, մոր հիշատակին խաչքար է կանգնեցրել:

Խաչքարը բավականին մեծ է, անպաճույճ: Մեծ խաչի թևամիջի տարածությունում քանդակված են ավելի փոքր չափի չորս խաչեր:

Ստեփանոս քահանայի արձանագրությունը փորագրված է խաչքարի շրջանակներին: Ահա այն. «Ես՝ տէր ըՍտեփանոս կանկնեցի զխաչ ի փրկութիւն հոգոյ մար իմոյ պարոն Վախախին: Թվիս ՋԽԴ (1495)»:[159]

Վախախի խաչքարի կողքին կանգնեցված է մեկ ուրիշ խաչքար, որի քիվին փորագրված է միայն թվականը՝ ՋԽԱ (1492): Հավանաբար այդ խաչքարը ևս վերաբերել է նույն ընտանիքին:

ԽԱԲԻՊ

Ապրել է 15-րդ դարի վերջին Աղբակի Երընկանի գյուղում, ծնողներն են Ստեփանոսը և Ոսկին, ամուսինը՝ Ատոմը:

1499 թվականին Խաբիպ խաթունը և Ատոմը Երընկան գյուղում գրիչ Մարգարային Ավետարան են պատվիրում: Ու թեև ժամանակները դառն ու դժվարին էին և, ինչպես նշված է ձեռագրի 278ա էջում, «ապգն մարաց աւերեցին և քանդեցին զՅէջատ, զՍալմաստ, զԱխբակ, զՎան, և զՈստան, և զԱխթամար», գրիչ Մարգարեն կատարում է պատվերը:

Ավետարանի համար օգտագործվել է 279 թերթ թուղթ: Ձեռագիրը միջին մեծության է (18×13 սմ), գրված է երկսյուն, գեղեցիկ բոլորգրով: Բացի ավետարանիչների պատկերներից ձեռագրում կան 13 տերունական մանրանկարներ և 10 խորաններ:

Ձեռագրի գրիչը հետագա սերունդներից խնդրում է առավելս հիշել Խաբիպ խաթունին, քանի որ հիմնականում նրա խնդրանքով է ընդօրինակվել Ավետարանը:[160]

Խաբիպ խաթունի պատվիրած Ավետարանն անցել է դարերի արհավիրքների միջով ու այժմ պահվում է Երևանի Ս. Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

[159] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 151:

[160] ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 278:

ՆԱՐԻՆԳՅՈՒԼ

Ապրել է 16-րդ դարի կեսերին, Գեղարքունիքում, ամուսինն է Թադևոսը:

1551 թվականին ներկայիս Մարտունու շրջանի Երանոս գյուղի սահմանում գտնվող Ղուռռ խարաբա կոչվող գյուղատեղում Թադևոսի և Նարինգյուլի որդին՝ Ավանը, խաչքար է կանգնեցրել ծնողների հիշատակին:

Խաչքարը գտնվում է ավերակ եկեղեցու արևմտյան կողմում: Խաչքարի երեսին փորագրված է. «Ես՝ Աւանս, կանգնեցա զխաչս ի փրկութիւն հաւրն իմոյ Թաթէոսին եւ մաւրն Նարինգիւլին: Թվին Ռ (1551)»:[161]

ՔԱՐԱՄ ԽԱԹՈՒՆ

Ապրել է 16-րդ դարի կեսերին Գեղարքունիքում:

1555 թվականին Մարտունու շրջանի Գեղահովիտ գյուղում, եկեղեցու մուտ գտնվող գերեզմանատան եզրին, ոչ մեծ խաչքար է կանգնեցվել Քարամ խաթունի հիշատակին: Խաչքարի ճակատին փորագրված է. «Սուրբ խաչս բարէխաւս Քարամ խաթունին: Թվին ՌԴ (1555)»:[162]

ԽԱԹՈՒՆ

Ապրել է 16-րդ դարի կեսերին Գեղարքունի գավառում:

1557 թվականին Խաթունը Վարդենիսի շրջանի Դաշքենդ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցու բակում կանգնեցրել է միջին մեծության քանդակազարդ խաչքար:

Խաչքարի ճակատին և շրջանակներին փորագրված է. «Ես՝ Խաթունս, կանգնեցի խաչս բարեխաւս առ Աստուած Ղարայգյոզի: Թվին ՌԶ (1557)»:[163]

Դժվար է ասել, թե արձանագրության մեջ հիշատակված Ղարայգյոզը ինչ կապ ունի Խաթունի հետ՝ հա՞յրն է, ամուսի՞նը, եղբա՞յրը, թե՞ որդին:

ԽԱՆԲԵԿ

Ապրել է 16-րդ դարի վերջին և 17-րդ դարի սկզբներին Գեղարքունիքում:

Խանբեկի որդին է Մարտունու շրջանի Զորագյուղ (հնում՝ Շողգա կամ Շաղուագա) գյուղի արևելյան եզրին գտնվող Մասրուց անապատի առաջնորդ Դավիթ եպիսկոպոսը: 1611 թվականին Դավիթ եպիսկոպոսը նորոգել է Մասրուց անապատը և այդ մասին արձանագրություն է փորագրել եկեղեցու գմբեթի, ինչպես նաև արևելյան պատի վրա: Նույն արձանագրությունը փորագրվել է նաև նույն թվականին պատրաստված մեծ ու գեղաքանդակ խաչքարի վրա:

Դավիթ եպիսկոպոսը մի խաչքար էլ պատվիրել է մոր հիշատակին: Խաչքարը փոքր է, բայց արտակարգ կարդանախշված: Խաչքարի քիվին փորագրված է. «Ես՝ Դաւիթ իպիսկոպոս [կանգնեցի] խաչս մաւր իմ Խանբէկին»:[164]

Ականավոր վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանը գտնում է, որ Խանբեկի խաչքարը ևս պատրաստվել է 17-րդ դարի 10-ական թվականներին:

ԱՃԵՓԽԱՆ

Ապրել է 17-րդ դարի առաջին կեսում հավանաբար Էջմիածնում, ամուսինն է Աստվածատուրը:

Փիլիպոս կաթողիկոսի գահակալության տարիներին, 1632—1655 թվականների միջև, Աճեփխանի միջոցներով մի արտակարգ գեղեցիկ ու շքեղ ուրար է պատրաստվել ու նվիրվել կաթողիկոսին:

Ուրարը պատրաստված է կարմիր մետաքսից: Ուրարի ամբողջ երկարությամբ, վերից վար, երկու շարքով, գործված են ութ մարդկային պատկերներ, որոնց գլխի լուսապսակները և կամարները մարգարտաշար են:

Աճեփխանի արձանագրության առաջին տողը ուրարի վերին մասում է, երկրորդը՝ ներքևում: Արձանագրությունը սկսվում է ներքևից. «Յիշատակ է ուրարս Աճէփխանին եւ ծնօղացն Փէրիխանին, կենակցին Աստուածատրին եւ որդոյն Էրէմիային. ի վայելէմն Փիլիպոս կաթողիկոսին»:[165]

Աճեփխանի պատվիրած ուրարն այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

ԽԱՍՄԵԼԻՔ

Ապրել է 17-րդ դարի առաջին կեսում Գեղարքունիքում:

1652 թվականին Խասմելիքի որդին՝ Սարուխանը, Մարտունու շրջանի Գեղահովիտ գյուղում, գերեզմանատան հարավային մասում, մեծ և գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել մոր հիշատակին:

Խաչքարի ճակատին և ներքևի մասում

[161] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 115:
[162] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 217:
[163] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 320:
[164] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 250:
[165] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 92:

փորագրված է. «Ես՝ Սարուխանս, կանկնեցի խաչս բարէխաւս մօրն իմոյ Խասմելիքին: Թվին ՌՃԱ (1652)»:[166]

ՄԱՐԻԱՄ

Ապրել է 17-րդ դարի երկրորդ կեսում Նոր Նախիջևանում, ամուսինն է քահանա Սարգիսը:

1699 թվականին Մարիամը մահացել է և նրա հիշատակին սպիտակ մարմարից խաչքար է պատրաստվել:

Խաչքարի վրա փորագրված է. «Բարէխաւս է Սուրբ նշանս տէր Սարգսին կողագըցին Մարիամին եւ երից կաւակաց հոգոյն: Թվին ՌՃԽԸ (1699)»:[167]

Դարեր անց հայ ժողովրդի այս փոքրիկ վկան հայրենադարձվել է մայր երկիր և առհավետ հաստատվել Հայաստանի պատմության պետական թանգարանում:

ԽՈՐԻՇԱՆ

Ապրել է 18-րդ դարի կեսերին: Զբաղվել է ձեռագործով, իրեն անվանել նկարիչ: Նրա ստեղծագործություններից մեկը՝ արտակարգ գեղեցիկ եկեղեցական խույրը, պահպանվել ու հասել է մեր օրերը:

Խույրը պատրաստված է կարմիր մետաքսից, գործված է կլապիտոնով ու ոսկեթելով, ընդելուզված է կարմիր, կանաչ, կապույտ քարերով ու մարգարիտներով: Խույրի մի կողմում պատկերված է սուրբ կույսի Ավետման, մյուս կողմում՝ Խաչելության տեսարանները: Խույրը պատրաստվել է Հակոբ վարդապետի համար:

Խորիշան-նկարողի արձանագրությունը գործված է խույրի երեսին. «Ի վաելումն Յակոբ վարդապետին: Նկարող Խորիշանին: Թվին ՌՄԴ (1755)»:[168]

Խորիշան նկարողի արձանագրությունը խույրն այժմ պահվում է Հայաստանի պետական թանգարանում:

ԹԱԳՈՒՀԻ

Ապրել է 19-րդ դարի սկզբներին:

1819 թվականին Թագուհին և իր դուստրը՝ Մարիամը, ուրար են պատվիրել և նվիրել Էջմիածնի միաբան Թովմաս վարդապետին:

Ուրարը պատրաստված է կարմիր մետաքսից, վրան ոսկեթելով գործված են հրեշտակների գլուխներ: Շրջանակը խաչաձև վարդերով է ձևավորված:

Թագուհի Առաքելյանի արձանագրությունը գործված է ուրարի ներքևի մասում. «Ուրարս՝ ի վայելումն սրբոյ Էջմիածնի միաբան սրբազան Թովմաս վարդապետին: 1819: Առաքելան Թագուհի, աղախինս Աստուծոյ եւ փոքրիկ օրիորդն իմ Մարիամըն ընծաեցաք»:[169]

Թագուհի Առաքելյանի պատվիրած ուրարը սկզբնապես գտնվել է Էջմիածնի Մայր տաճարի թանգարանում: Այժմ պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում:

ՌՈՒՍՈՒԴԱՆ

Ապրել է 12-րդ դարի երկրորդ կեսում, հայրն է Լոռու Կյուրիկե Բ (1145—1185) թագավորը, ամուսինը՝ վրացի իշխան, վրացական զորքի ամիրսպասալար Իվանե Օրբելյանը:

Իվանեն Վրաստանի ամենանշանավոր իշխանական տոհմերից մեկի՝ Օրբելյանների ընտանիքից էր, Սմբատի որդին: Հետաքրքրական է, որ այս տոհմի ավանդապրույցը ևս, ինչպես մեր Մամիկոնյաններինը, Օրբելյաններին համարում է Ճենաստանից փախած Ճենբակուր թագավորի ազգական, Ճենացի: Քննելով այս աղերսը, պատմաբան Նիկողայոս Ադոնցը կարծիք է հայտնել, որ Մամիկոնյան և Օրբելյան տոհմերի նախնիները ազգակից են:[170]

12-րդ դարի սկզբներից սկսած Օրբելյանները խնամիական կապերի մեջ են մտնում Լոռու Բագրատունի թագավորների հետ, անգամ ժառանգում են նրանց տոհմական Սմբատ անունը: Բագրատունիների հետ հաստատած խնամիական կապերի շնորհիվ Օրբելյանները 12-րդ դարի երկրորդ կեսում սեփականում են Կյուրիկյան թագավորներին պատկանած հողերը:

Իվանե ամիրսպասալարի և Ռուսուդանի ամուսնությունը տեղի է ունեցել 12-րդ դարի 40-ական թվականներին, քանի որ դարի 70-ական թվականներին նրանք հասուն աղջիկ ունեին և ամուսնացրել էին Դավիթ Գ թագավորի փոքր որդու՝ Դեմետրեի հետ:

1174 թվականին վրացական զորքերը շարժվեցին Հայաստան և գրավեցին Անի քաղաքը: Այն հանձնվեց Իվանե Օրբելյանին,

---

[166] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 220:

[167] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 56:

[168] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 101:

[169] Հայերեն արձանագրությամբ առարկաներ, էջ 117:

[170] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, էջ 404.

որը նկատի ունենալով բարեկամությունը Բագրատունիների հետ իրեն համարում է Լոռու, Շիրակի հողերի ժառանգորդը:

Ռուսուդանը և Իվանեն իրենց ստացած հողերում՝ Լոռիում և Շիրակում, շինարարական մեծ ծավալի աշխատանքներ են կատարում, կառուցում են նոր եկեղեցիներ, նորոգում են հները, մեծամեծ նվերներ տալիս եկեղեցիներին: Ամուսինների ժամանակակից գրչագիր մատյաններից մեկի հիշատակարանում ասվում է. «քանվի ամենայն տեղի որ ի նախնեացն սորա (Ռուսուդանի—Վ. Պ.) շինեալ էին և նուապեալ յետոյ, ի սորա աւուրս պայծառանային և նորոգէին վերըստին. եթէ ի մերում գաւառիս (Զորագետում—Վ. Պ.) և եթէ ի գաւառն Անւոյ սեփական քաղաքին իւրեանց, և ի նոյն իսկ յԱնի, և եթէ ի գաւառն Դըլնայ: Քանվի յամենայն տեղի իշխանութիւն և երկիրն մեծի սպասալարին Իւանէի՝ առն սորա հասանէր և սա ջանայր վի վիր նախնեացն շինեալ եկեղեցիսն պայծառացուցէ»:[171]

Հիշատակարանից պարզ երևում է, որ Ռուսուդանը, ստանալով հայրական հողերի մի մասը և Անին, շինարարական աշխատանքներ է կատարել, ծավալել մշակութանպաստ գործունեություն:

1177—1178 թվականներին Վրաստանում տեղի ունեցավ գահակալական մեծ խռովություն: Դավիթ Գ թագավորի մահից հետո գահը նրա որդու՝ Դեմետրեի՝ Իվանե Օրբելյանի փեսայի փոխարեն տիրել էր եղբայրը՝ Գեորգի Գ-ն: Երբ Դեմետրեն հասավ չափահասության, վրաց մեծ իշխանները Իվանե Օրբելյանի գլխավորությամբ խռովություն բարձրացրին՝ կամենալով թագավոր դարձնել Դեմետրեին: Ապստամբության ընթացքում Իվանե Օրբելյանին հարած իշխաններից Սարգիս Զաքարյանը, Գրիգոր Ապիրատյանը խոհեմաբար հեռացան Իվանեից և միացան Գեորգի Գ-ին: Ապստամբները հյուծվեցին, թուլացան և, ի վերջո, պարտվեցին ու հանձնվեցին Գեորգի Գ-ի ողորմածությանը:

Այս խռովության պատճառով, Գեորգի Գ-ի հրամանով, Դեմետրեին և Իվանե Օրբելյանին կուրացրեցին, Օրբելյաններից ետ վերցրեցին նրանց ստացած տիրույթներն ու հարստությունները: Օրբելյանների տոհմը գլխովին ոչնչացվեց:[172]: Այդ պատժից փրկվեցին միայն Իվանեի եղբայր Լիպարիտը և իր որդիներ Ելիկումն ու Իվանեն:

Հավանաբար այդ կոտորածին վոհ է դարձել նաև Ռուսուդան իշխանուհին:

ԽՈՐԻՇԱՀ

Սարգիս ամիրսպասալարի դուստրն է, Զաքարե և Իվանե Զաքարյանների քույրը: Ամուսինն է Խաչենի Վախտանգ-Տանգիկ իշխանը:

Խորիշահը և Վախտանգը ամուսնացել են 12-րդ դարի վերջին, քանի որ 1202 թվականին նրանք արդեն մահացած վավակ ունեին, որի գերեզմանին կանգնեցված խաչքարի վրա փորագրված է. «Ես՝ Վախտանգ, որդի Հասանա կանգնեցի վխաչս ի տապանի որդո իմոյ: Աղաթս յիշեցէք: Թվին ՈԾԱ (1202)»:[173]

Դարասկզբին Վախտանգը և Խորիշահը պատվիրել են մի շքեղ Ավետարան, որը հետագայում դարձել է խոխինաբերդցիների տոհմական սեփականությունը: Պատմաբան Բագրատ Ուլուբաբյանը պարզել է, որ ձեռագիրը ընդօրինակվել է 1212 թվականին ի պատիվ Խորիշահ իշխանուհու կառուցած Մեծառանից եկեղեցու: Ավետարանը գրել և ծաղկել է Թորոսը: Ձեռագրի համար օգտագործվել է 311 մագաղաթյա թերթ (որոշ թերթեր պակասում են): Գրված է երկսյուն բոլորագիծ երկաթագրով: Կիսախորաններից ու լուսանցապարդերից բացի Թորոսը նկարել է տերունական մեկ պատկեր և տասը խորան: Այս հրաշագեղ Ավետարանն այժմ պահվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

Ձեռագրի 208ա էջի հիշատակարանում կարդում ենք. «Հրամանաւ և ծախիւք բարեսէր ու աստուածահաճոյ առն Վախտանգա՝ որդւոյ Հասանա՝ որդւոյ Վախտանգա և քրիստոսասէր ամուսնոյ նորա Խորիշահի՝ դուստր մեծ սպարապետին Սարգսի: Արդ ես Վախտանգ և լծակից իմ Խորիշահ... ծնաք երիս ուստերս և երիս դստերս ժառանկ մարմնատր և յիշատակ հոգևոր: Այս առաւել նախանձախնդիր եղեալ՝ բաղում փափագանաւք և յաւժարութեամբ սրտիս մերոց շինեցաք վեկեղեցին և երևելի սպասիւք զարդարեալ ներքոյ և արտաքոյ և հաստահեղուն հաւրինուածովք»[174] Ավետարանի 9բ թերթի կապույտ ֆոնի վրա ոսկյա խոշոր տառերով գրված է. «Քրիստոս Աստուած, յորժամ գաս հայրական փառաւք, զԽորիշահ եւ զՎախտանգ ընդ սուրբս քո դասեա, ամէն»:

Մեծառանից եկեղեցու կառուցման պատվին ամբողջովին պատկանում է Խորիշահ իշխանուհուն: Եկեղեցու որմին Խորիշահը փորագրել է տվել. «... վերստին շինեցի վե-

---

171 Հ. Ղ. *Ալիշան*, Հայապատում, էջ 382:

172 *Ստեփանոս Օրբելյան*, գլ. ԿԵ, էջ 284—286:

173 *Բ. Ուլուբաբյան*, Խաչենի իշխանությունը, էջ 141:

174 *Գարեգին կաթողիկոս Յովսեփեան*, Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 761:

կեղեցին Մեծառանից և փրկութիւն հոգոց իմոյ, ի բարեխաւս կաւակաց իմոց... կՎախտանգ եւ կիս յաղաթս յիշեցէք»:[175]

Եկեղեցու կառուցումից երկու տարի անց, 1214 թվականին, Վախտանգ իշխանը մահանում է: Իշխանությունը անցնում է Վախտանգ իշխանի ավագ որդուն՝ Հասան-Ջալալին: Մայրը գործակցում է որդուն: Նա ամուսնացնում է որդիներին՝ Հասան-Ջալալին, Զաքարեին և Իվանեին: 1216 թվականից Խորիշահը մասնակցում է Հասան-Ջալալի սկսած Գանձասարի վանքի կառուցմանը: Երբ շինարարներն արդեն հասել էին արևելյան պատուհանին, Խորիշահը երրորդ անգամ ճգնելու է գնում Երուսաղեմ: Պատմիչ Կիրակոս Գանձակեցին գրում է. «և կամս բակումս անդ կացեալ մեծաւ ճգնութեամբ՝ կարմացուցանէր կամենայն գոյս իւր՝ կոր ունէր, յաղքատս և ի կարօտեալս՝ նման Հեղինէի, կնոջն Աբգարու, և ինքն ձեռագործաւ իւրով կերակրէր»:[176] Պատմիչը հաղորդում է, որ Երուսաղեմում էլ Խորիշահը մահացել ու թաղվել է:

Խորիշահ իշխանուհու մահը տեղի է ունեցել մինչև 1240 թվականը: Գանձասարի եկեղեցու 1240 թվականի շինարարական մեծ արձանագրության մեջ Հասան-Ջալալը հայտնում է մոր մահը. «Եւ ի խիել լուսամտին արեւելից մայրն իմ կրաւնատրեալ չոգաւ յԵրուսաղէմ երրորդ անգամ եւ անդէն ի դրան Հարութեան խարակնապգեաց ճգնութեամբ, բակմամեայ ժուժկալութեամբ հանգեաւ ի Քրիստոս լուսո վկաութեամբ եւ անդէն պահեցաւ»:[177]

ԱՎԱԳ ՏԻԿԻՆ

Գորկանի դուստր Ավագ Տիկինը 1207 թվականին միաբանել է Արջոառիճի (Ալաջա) եկեղեցուն և ծնողներից ստացած օժիտ ձիթհանը նվիրել է եկեղեցուն:

Ավագ Տիկինը եկեղեցու պատին փորագրել է տվել. «Ողորմութեամբն Աստուծոյ, ես՝ Ավագ Տիկին, դուստր Գորկան, միաբանեցա սուրբ ուխտիս և կիմ հայրենի կէս ակն ձիթհանքն, որ ի յիմ ծնողացն ի պապակի ներքև ինձ բաժինք էր հասել՝ ետու ի սուրբ Աստուածածինս»:[178]

ՄԼԸՔՍԹ

13-րդ դարի վերջին Մլըքսթը և իր ամուսինը՝ Ղալարի որդի Ալեքսը միաբանում են Հոռոմոսի վանքին և նվիրում են իրենց գընած կուղպակը (կրպակը), որ գտնվել է Անիում «ի Ծռապուկակին»:[179]

Մլըքսթի ամուսինը՝ Ալեքը, 13-րդ դարում հայ իրականության մեջ հանդես եկած առևտրա-վաշխառուական դասի ներկայացուցիչներից էր: Նա 1271 թվականին նվերներ է տվել նաև Բագնայրի վանքին: Եկեղեցու պատին փորագրված է. «Չի (1271): Շնորհիւ Աստուծոյ, ես՝ Ալէքս, վաճառական, որդի Ղալարայ միաբանեցայ սուրբ Աստուածածնին, ետու նուէր ի Բակըվիոդոցին կուղպակ մի»:[180] Թեև արձանագրության մեջ չի հիշատակված Մլըքսթի անունը, բայց ամենայն հավանականությամբ նա ևս մասնակցել է Բագնայրի վանքին նվերներ տալուն:

ԱՐԵՎԻԿ

Ապրել է 13-րդ դարի երկրորդ կեսում Նախիջևանի գավառի Նորս գյուղում:

1274 թվականին Արևիկը խաչքար է կանգնեցրել Խնկիկի հիշատակին: Խաչքարի վրա արձանագրված է. «Թվին ՉԻԳ (1274): Ես՝ Արևիկ, կանգնեցի կսուրբ խաչս վասն հոգւոյ Խնկիկին»:[181]

ՄԱՍՔԱՍ

1280 թվականին՝ Մասքասը՝ Ասղաւին դուստրը, ծնողներից որպես օժիտ ստացած գյուղը նվիրել է Հոռոմոսի վանքին:

Եկեղեցու որմին Մասքասի անունից փորագրված է. «ՉԻԹ (1280): Ես՝ Մասքաս, դուստր Ասղաւին և թոռն Տիգրանայ, ետու կիմ հայրենի բաժինք գեղն կՃոխքագում ի սուրբ Յովաննէս»:[182]

ՏԻԿՆԱՑՏԻԿԻՆ

1321 թվականին Արջուկի ամուսին Տիկնացտիկինը 300 արծաթով այգի է գնել ու նվիրել Աշտարակի Մարիանե եկեղեցուն:

Եկեղեցու պատին փորագրված է. «Ի թվին ՉԿ (1321): Կամաւ ամենակալին Աստուծոյ, ես՝ Տիկնացտիկին, ամուսին Արջուկին, միաբանեցա սուրբ Մարիանէիս և ետու կՓարասանց այգոյն կէսն, ի ՅԳՃ (300) սպիտակի գնեցի և տվի»:[183]

---

175 *Մակար եպիսկոպոս Բարխուտարյանց*, Արցախ, Բաքու, 1895, էջ 171: «Բանասէր», 1901, էջ 142:

176 *Կիրակոս Գանձակեցի*, էջ 268:

177 *Բ. Ուլուբաբյան*, Գանձասար, էջ 88:

178 *Հ. Ղ. Ալիշան*, Շիրակ, էջ 122:

179 Վիմական տարեգիր, էջ 110:

180 *Կ. Հ. Բասմաջեան*, Հայերեն արձանագրություններ Անվո, Բագնայրի և Մարմաշենի, Պարիս, 1931, էջ 179:

181 *Հ. Ղ. Ալիշան*, Սիսական, էջ 485:

182 *Ն. վարդ. Սարգիսեան*, Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծն Հայաստանի, Վենետիկ, 1864, էջ 158:

183 *Հ. Ղ. Ալիշան*, Այրարատ, էջ 186:

ԽԱԹՈՒՆ

Ապրել է Խիվանում: 1336 թվականին օգնել է Հովհաննես գրչին Մարկոս Հայրապետի համար Ավետարան ընդօրինակելու: Խաթունն է աշխատանքի ընթացքում կերակրել Հովհաննես գրչին և հորդորել ավարտելու սկսած ձեռագիրը: Իր հիշատակարանում գրիչը Խաթունին սիրով անվանել է «պառաւիկ» և սերունդներից խնդրել հիշել «և պպառաւիկն մեր պԽաթուն, որ յոյժ աշխատեալ և սնուցեալ էր զմեզ և յորդորիչ է գրելս»:[184]

ՓԱՇԱՅ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Վանում, ամուսինն է տանուտեր Ատոմը:

1440-ական թվականներին Փաշայ տիկնոջ որդին՝ Ջանիբեկը, Խիվանում անօրենների ձեռքով սպանվել է: Հայրը շատ է փնտրել որդուն, բայց չի գտել ոչ կենդանի և ոչ մեռած ու «ի կսկծանաց որդւոյն իւրոյ խասրաթամահ եղև»:

Վաղամեռիկ որդու և ամուսնու հիշատակը հավերժացնելու համար Փաշայ տիկինը գրիչ Կարապետ երեցին պատվիրում է Ավետարան ընդօրինակել: 1451 թվականին Կարապետ գրիչն ավարտում է Ավետարանի ընդօրինակությունը: Ավետարանը գրված է 266 մեծադիր թերթերի վրա (31×21 սմ) երկսյուն բոլորգրով: Ձեռագիրը նկարազարդ է: Կարապետ գրիչը չորս ավետարանիչների նկարներից բացի Ավետարանի սկզբում զետեղել է տասը տերունական նկարներ և նույնքան կիսախորան: Ինքնատիպ ու հետաքրքրական են կիսախորաններն ու լուսանցազարդերը:

Ձեռագրի 265ա էջում Կարապետ երեցը դիմելով Ավետարանից օգտվողներին գրել է. «Աղաչեմք զամենեսեան, որք ընթեռնուք կամ ընդաւրինակէք զսուրբ Աւետարանս յիշեսջիք ի մաքրափայլ յաղաւթս ձեր զստացող սուրբ Աւետարանիս զբարեպաշտ կինն զՓաշայն»:[185]

Հիշատակարանից իմացվում է, որ Ավետարանի թուղթը բերել է Փաշայ տիկնոջ եղբայրը՝ խոջա Ֆառուխշեն, գրելուն օգնել են Փաշայ տիկնոջ դուստրը՝ Շարա խաթունը, և փեսան՝ տանուտեր Կարապետը:

Կարապետ գրիչը սրտի ցավով է ընդօրինակել Ավետարանը: Նա լիովի հասկացել է Փաշայ տիկնոջ՝ երիտասարդ որդի կորցրած մոր ցավը, քանի որ ինքն էլ կորցրել էր երիտասարդ որդուն՝ Աբդլմսեխին, որի կինը՝ «զտառապեալ» Խապիպ խաթունն է Ավետարանի թուղթը կոկել:

Դարուկես անց՝ 17-րդ դարի սկզբներին, անօրենները գերի են տանում Փաշայ տիկնոջ Ավետարանը: 1606 թվականին ձեռագիրը անօրեններից ազատում-փրկագնում է ռես Թաբառոնքը և Ավետարանի 14ա էջում իր անունից գրում է. «Ես՝ ռեէս Թաբառոնքս ազատեցի զսուրբ Աւետարանս ի ձեռաց անօրինաց՝ յիշատակ հոգոյ իմոյ և ծնողաց իմոց Աւետիսին, Գուլբահարին, Դարմանին, Գրիգորին, Ասլանին, Պուտախին, Մելքսէթին, Մկրտչին և ամենայն ազգականաց նոցին»:[186] Գիտակցելով իր կատարածի արժեքը Թաբառոնքը ավելացրել է. «Լաւ բան արար Թաբառոնքդ, որ զանցաւորս ետուր և զանանցն առեց ի Քրիստոսէ»:

Փաշայ տիկնոջ Ավետարանը ևս երկու դար շրջել է Հայաստան աշխարհը: 1915—1916 թվականներին Վասպուրական աշխարհի շուրջ 1500 ձեռագրերի հետ այն, վերջապես, փոխադրվել է Էջմիածին և մտել գրապահ Գալուստ Ներսիսյանի կազմած «Գալուստիկյան» ցուցակի մեջ: Այժմ Փաշայ տիկնոջ Ավետարանն առհավետ հանգրվանել է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում՝ 4893 թվահամարի տակ:

ՀԱԼՎԱՅ ԽԱԹՈՒՆ

Ապրել է 15-րդ դարի կեսերին Խլաթում, մայրն է Խաթուն Մելիքը, ամուսինը՝ տանուտեր Հովհաննեսը:

1443 թվականին Հալվայ Խաթունն ու Հովհաննեսը Խլաթի ԺԱ (11) խորանաց Սուրբ Գևորգ եկեղեցու քահանա, գրիչ և մանրանկարիչ Աստվածատուրին պատվիրում են իրենց և մերձավորների հիշատակին Ավետարան ընդօրինակել:

Աստվածատուրը կատարել է պատվերը: Ավետարանի համար օգտագործվել է 301 թղթե թերթ: Տեքստը գրված է երկսյուն բոլորգրով: Ձեռագիրը մանրանկարված է: Աստվածատուրը նկարել է 14 տերունական նկար, 10 խորան, ինչպես նաև չորս ավետարանիչների նկարները և նույնքան կիսախորան: Ձեռագրի համար որպես պահպանակ օգտագործված են մագաղաթյա չորս թերթեր և մեկ թղթե թերթ, որոնք ավելի հին ձեռագրերի պատառիկներ են: Կազմի Ա փեղկին ամրացված են ականակուռ խաչեր:

Ավետարանի 18բ էջում Աստվածատուրը աշխարհիկ թեմայով ուշագրավ նկար է արել: Ձախ կողմում, աթոռի վրա, նստած է քահանայի հագուստով մի մարդ, նրա աջ ձեռքում կա տախտակ, որի վրա գրված է. «Երանեալ է այր, որ ոչ գնա ի խորհուրդս ամբարիշ-

[184] ԺԴ դարի հիշատակարաններ, էջ 290:

[185] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 5—6:

[186] Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԷ դար, հ. Ա, էջ 204:

տաց», իսկ ձախ ձեռքում՝ հարվածելու պատրաստ ճիպոտ: Քահանայի դիմաց կանգնած է դաս պատասխանող աշակերտ՝ ձեռքերը խաչաձև ծալած կրծքին: Պատկերի աջ անկյունում ծալապատիկ նստած է մի այլ աշակերտ, որի ձախ ձեռքում նկարված է երեք թարմ ճիպոտ, որով ուսուցիչը «խելքի է բերել» աշակերտներին: Այս նկարն իր բոլոր մանրամասնություններով կրկնում է Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող Ցպնայի վանքում 1419 թվականին ընդօրինակված ձեռագրի 14բ էջի նկարը: Հավանաբար Աստվածատուրը ձեռքի տակ է ունեցել Ցպնայի ձեռագիրը կամ ծանոթ է եղել այդ պատկերին:

Ձեռագրի 298բ էջի իր հիշատակարանում Աստվածատուր գրիչը հայտնում է, որ Ավետարանի պատվիրատու Հալվայ Խաթունը մահացել է և իր աչքով չի տեսել Ավետարանն ամբողջական վիճակում: Չնայած դրան ձեռագրի 199բ էջում ձեռագրի պատվիրատու ամուսինները՝ Հալվայ Խաթունը և Հովհաննեսը, հիշված են միասին որպես ձեռագրի ստացողներ: Հավանաբար Հալվայ Խաթունն այնքան շատ է ցանկացել տեսնել Ավետարանը, որ ամուսինը՝ Հովհաննեսը, մահացած կնոջ անունը նույնպես գրել է իր անվան հետ և երկուսի անունից Ավետարանը նվիրել Խլաթի ԺԱ (11) խորանի և Սուրբ Գևորգ եկեղեցուն: Ահա Հովհաննեսի հիշատակարանը. «Ես՝ Յոհանէս և Հալւայ Խաթուն տըւինք կսուրբ Աւետարանս Խլաթայ սուրբ եկեղեցեացն՝ ԺԱ (11) խորանին և սուրբ Գէորգ կաւրավարին, որ կենայ ի ձեռըն Աստուածատուր քահանային և Յով[անէս]ին»:[187]

Հալվայ Խաթունի Ավետարանն այժմ գտնվում է Երևանի Սուրբ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում:

ԽԱԹՈՒՆՄԵԼԻՔ

Ապրել է 15-րդ դարի կեսերին, ամուսինն է Ստեփանոսը:

Խաթունմելիքի և Ստեփանոսի որդին՝ Զաքարիան, ընտանեկան հարկի տակ լավ կրթություն է ստացել, սովորել է ժամանակի նշանավոր ուսումնական կենտրոններում և նվիրվել է հոգևոր ծառայության: Դարի կեսերին նա ընտրվել է Աղթամարի կաթողիկոս Զաքարիա Գ անունով:

1444 թվականին Զաքարիա Գ կաթողիկոսը մոր՝ Խաթունմելիքի հիշատակին Աղթամարում գեղեցիկ, վարդաքանդակ խաչքար է կանգնեցրել:[188]

ՍԱԼՉՈՒԿ ԽԱԹՈՒՆ

1466 թվականին Սալչուկ Խաթունը գրիչ Հերապետ քահանայից գնում է նրա ընդօրինակած Մաշտոցը:

Ձեռագրի հիշատակարանում Հերապետը գրել է. «Յիշեցէք զստացող գրոցս զբարեպաշտ և զերկիւղած կինն Սալչուկ Խաթունն ի բարի արմատոյն շառաւեղ...»:

Գրիչը հայտնում է, որ Սալչուկ Խաթունը ձեռագիրը ստացել է ի հիշատակ իր ծնողների, պապի, տատի, քրոջ, ամուսնու՝ Ջանիբեկի, զավակների՝ Գորգի, Մուսեհի, Շամշատինի, Մկրտիչի, Բուսերի, Նուբարի, Ալղունի և իր արյունակից մերձավորների:

Գրիչը միաժամանակ նշում է. «Կրկին յիշեցէք ի Քրիստոս զՍալչուկ Խաթունն, որ կանգնաւ եկեղեցւոյ գլխոյն շինելոյ, ՃԾ (150) թանկայ ուսթին ու քարին ետուր, ու նոր նորոգեցին»:[189] Ցավոք գրչի Հերապետը չի նշել գրչության վայրը և այն եկեղեցու անունը, որի նորոգման համար Սալչուկ Խաթունը 150 թանկա է ընծայել:

Սալչուկ Խաթունի Մաշտոցը 19-րդ դարի վերջին տեսել ու հիշատակարանն արտագրել է Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը:

ԱՏԻՍ

Ապրել է 16-րդ դարի կեսերին ներկայիս Վարդենիսի շրջանի նախկին Ղամշլու գյուղում, ամուսինն է Ավաքը:

Ատիսը երեք տասնամյակ եղել է գյուղի առաջնորդը: Այդ է վկայում գյուղի գերեզմանատան կենտրոնում գտնվող մեծ, գեղաքանդակ խաչքարի արձանագրությունը. «Խաչս բարէխաւս Ատիսին, որ է մայր Մէլքոնին եւ առաջնորդ գեղոյս»: Խաչքարի պատվանդանը մեծ է և երկու խաչքարի տեղ ունի, սակայն հարավայինը տեղում չէ: Ատիսի խաչքարի արձանագրությունն էլ ավարտված չէ և հավանաբար շարունակվել է կից խաչքարին:

Ատիսի խաչքարի դիմաց գտնվում է տափակ տապանաքարը, որի վրա երկու տողով փորագրված է. «Այս է հանգիստ Ատիսին, որ Լ (30) տարի առաջնորդ է կացեալ գեղոյս»:

Մոր տապանաքարին կից է նաև որդու՝

---

[187] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Ա, էջ 555:

[188] Հ. Ն. *Ակինեան*, Գաւազանագիրք կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, 1920, էջ 86, 108:

[189] ԺԵ դարի հիշատակարաններ, մասն Բ, էջ 254:

Մելքոնի տապանաքարը: Այն մեծ է, օրորոցաձև՝ ագուցված պատվանդասի մեջ: Տապանաքարի հյուսիսային կողին հետաքրքիր տեսարան է քանդակված: Մի կողմում պատկերված է թամբած ձի, որի սանձից մի մարդ բռնել է: Նրանցից քիչ հեռու մի կին նստած վիճակում նվագում է երկլարանի սազ: Մարդկանց առաջ դրված են կերակրի պնակ, գինու գավ և հաց: Տապանաքարի հարավային կողին, խորանների մեջ, պատկերված են գեղաքանդակ խաչեր: Արևմտյան ճակատներին փորագրված է. «Թվին ՋՂԹ (1550): Այս է հանգիստ Մելքոնին, որ է որդի Աւաքին, որ տղայ հասակաւ փոխեցաւ ի Քրիստոս էթող սուք մարն Ատիսին»:[190]

Տապանագրում նշված թվականը թույլ է տալիս եզրակացնելու, որ Ատիսը ապրել և գործել է 16-րդ դարի առաջին կեսում:

[190] Դիվան հայ վիմագրության, հ. 4, էջ 372—373:





ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼԵՀ ԳԻՏՆԱԿԱՆԸ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ

Վերջերս Լյուբլինում (Լեհաստան) լույս տեսավ «Հայերը հին Լեհաստանում» ծավալուն մենագրությունը, որի հեղինակն է Մարիա Կյուրի-Սկլադովսկայայի անվան համալսարանի պրոֆեսոր Միրոսլավա Զակշևսկա-Դուբասովան:

Աշխատության մեջ հիմնականում խոսվում է այն մասին, թե հայերը երբ են հաստատվել Լեհաստանում և նրա տիրապետության տակ գտնվող տարածքներում, ինչպես է ընթացել նրանց կյանքը ԺԴ—ԺԸ դարերում:

Գիրքը բաղկացած է վեց գլուխներից կամ բաժիններից:

Մենագրության առաջին գլուխը նվիրված է հայերի արտաղագթի խնդրին: Լեհական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքը հայերի նկատմամբ բացատրվում է նրանով, որ հայերը գործնական մասնակցություն են բերում երկրի տնտեսական և մշակութային վերելքին, իսկ օտար հարձակումների ժամանակ՝ վենքը ձեռքին գնում ընդդեմ թշնամու: Այստեղ հեղինակը մանրամասնորեն կանգ է առնում հայերի ինքնավարությունն իրականացնող մարմինների իրավունքների և պարտականությունների հարցերի վրա: Իրենց նվիրվածության համար հայերն անգամ լեհ թագավորների թույլտվությամբ ունեցել են իրենց ազգային Դատաստանագիրքը, որը հիմնված է եղել Մխիթար Գոշի «Հայոց դատաստանագիրք»-ի վրա:

Մենագրության «Հայերի առևտուրը և արհեստները հին Լեհաստանում» բաժնում խոսվում է Լեհաստանի՝ Արևելքի հետ առևտրի և հայ արհեստավորների այն դերի մասին, որ ունեցել են լեհական քաղաքների տնտեսական վարգացման գործում: Այս բաժնում խոսվում է նաև հայերի կառուցողական անմիջական ազդեցության մասին: Հայերն այնտեղ կառուցել են տներ, եկեղեցիներ, ջրհորներ, կինվորական ամրություններ, որոնց մի մասը պահպանվում է մինչև այսօր:

«Մտավոր մշակույթը» բաժնում հեղինակը խոսում է հայ նշանավոր գիտնականների, գրողների ու արվեստագետների մասին մեկ առ մեկ, գործիչներ, որոնք ծնունդ են լեհահայերի:

Հովհաննես Կամենիցացու «Խոտինի պատերազմի պատմություն»-ը մեծարժեք սկզբնաղբյուր է թուրքերի դեմ սլավոն ժողովուրդների մղած հերոսական պայքարի մասին: Մեծ է լեհահայ գիտնական Ստեփանոս Ռոշքայի ստեղծագործական ժառանգությունը՝ որպես ժամանակագիր, քերականագետ և բառարանագիր:

Գրքի վերջին բաժինը նվիրված է լեհահայերի քաղաքացիական գործունեությանը: Այստեղ հանգամանորեն խոսվում է լեհահայերի՝ հին Լեհաստանի արևելյան դիվանագիտության ասպարեզում խաղացած դերի մասին: Տիրապետելով մի քանի լեզուների, հայերը, ԺԴ դարից սկսած, լեհ թագավորների հանձնարարությամբ, ուղևորություններ էին կատարում դեպի Ղրիմ, Թուրքիա և Իրան:

Միրոսլավա Զակշևսկա-Դուբասովան 1977 թվականին Վրոցլավում տպագրեց «Հայաստանի պատմություն» գիրքը, որի մեջ շարադրված է հայ ժողովրդի պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Գիրքը ջերմ ընդունելություն գտավ ողջ Լեհաստանում:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Մեր ժողովուրդն իր գոյության հազարամյակների ընթացքում, հատկապես վերջին մեկ ու կես դարում, կուտակել է լեզվական միջոցների ու հնարավորությունների մի այնպիսի հարստություն, որ աներևակայելի է: Այդ հարստության մի զգալի բաժինը կազմում է հայոց լեզվի բառագանձը, որը գտնվում է հարափոփոխ շարժման և զարգացման մեջ:

Ահա այս բանի ապացույցն է ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս տեսած ճանաչված լեզվաբան Հմայակ Օհանյանի «Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները» ծավալուն ուսումնասիրությունը:

Հ. Օհանյանն իր ուսումնասիրությունը բաժանել է երեք մասի:

Առաջին մասում հեղինակը արդի հայերենի բառապաշարը դասակարգում է ըստ բառերի գործածության ակտիվության և տարածվածության, համապատասխան որի նա բառապաշարը բաժանում է ակտիվ, պասիվ և սովորական՝ գործածության միջին հաճախականության բառերի:

Ուսումնասիրության երկրորդ մասը նվիրված է մեր լեզվի ներքին բառաստեղծական միջոցներով բառապաշարի հարստացմանը: Այստեղ քննված են մեր նոր լեզվի բառապաշարի հարստացման հնից եկող համադրական ու վերլուծական այնպիսի եղանակներ, ինչպիսիք են բառաբարդացումը, ածանցումը, կրկնությունը և բառակցումը: Բացի այդ, հեղինակը պատշաճ տեղ է հատկացնում նաև բառապաշարի զարգացման ներքին այնպիսի միջոցներին, ինչպիսիք են բառիմաստի ընդլայնումը, նոր, կայուն կապակցությունների առաջացումն ու բառերի կապակցությունների վերաիմաստավորումը:

Աշխատության երրորդ մասում քննության են առնված այլ լեզուներից կատարված փոխառությունները:

Աշխատությունը գրված է ժամանակակից լեզվաբանական գիտության մակարդակին համապատասխան:

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԵՐԵՆ

Վերջերս Ֆրանսիայում լույս տեսավ «Հայոց պատմություն» 700 էջից բաղկացած հատորը, ֆրանսերեն լեզվով: Այն ընդգրկում է հայ ժողովրդի պատմությունը նրա ծագումից մինչև մեր օրերը: Գիրքը ստեղծվել է 16 հայտնի հեղինակների համագործակցությամբ: Մոնպելիեի համալսարանի պրոֆեսոր, պատմաբան Ժերար Տետեյանն այս հատորի պատրաստմանը ձեռնարկել է 1978 թվականին՝ անմիջական գործակցությամբ Մարսելի ակադեմիայի անդամ, պրոֆեսոր Ֆիլիպ Վոլֆի: Հատորին աշխատակցել են ԱՄՆ-ի, Անգլիայի, Մերձավոր Արևելքի և Ֆրանսիայի հայ և օտար մասնագետներ: Հատորի առաջաբանը գրել է պրոֆեսոր Ֆիլիպ Վոլֆը:

Գրքի լույս ընծայման առթիվ Մարսելի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Մշակութային սրահում կազմակերպվում է ընդունելություն, որին ներկա են լինում Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ֆրանսիայի շրջանակային վարչության նախագահ Նապոլեոն Պուլլուքյանը, բազմաթիվ հյուրեր, հայ և օտար մի շարք անվանի դեմքեր:

Ֆրանսերեն նոր լույս տեսած «Հայոց պատմություն» հատորի արժեքի և նշանակության մասին ելույթներով հանդես են գալիս դոկտոր Ռոբեր Սիսակյանը, պրոֆեսորներ Ժերար Տետեյանն ու Ֆիլիպ Վոլֆը, Նապոլեոն Պուլլուքյանը և ուրիշներ:

Ֆրանսիական երկու օրաթերթեր՝ «Մերիդիոնալ»-ը և «Պրովանսալ»-ը, լայնորեն անդրադարձել են «Հայոց պատմություն» հատորի լույս ընծայմանը և այդ առթիվ կազմակերպված ընդունելությանը:

ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Վերջերս Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը լույս ընծայեց Սերիկ Ստեփանի Դավթյանի «Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության» ծավալուն հատորը՝ նվիրված հայ կիրառական արվեստին:

Ժողովրդական ստեղծագործության կարևոր բնագավառներից մեկը, ինչպես այլուր, հայ իրականության մեջ հանդիսացել է կիրառական արվեստը: Ներառնելով իր մեջ գործվածքների, զարդերի, զգեստների, կահույքի և այլ բնագավառները, այն ներքնապես կապված է եղել իրեն ծնող ժամանակաշրջանի ժողովրդա-մշակութային միջավայրի, նյութա-տնտեսական կյանքի, հոգևոր մշակույթի, կենցաղի, ազգային ճաշակի ու հոգեբանության հետ:

Ինչպես ժողովրդական բանահյուսությունը, այնպես էլ կիրառական արվեստը մեկանում սերում է վաղնջական ժամանակներից և աչքի է ընկնում իր ինքնատիպությամբ, դրսևորման ձևերի բազմազանությամբ և հարստությամբ: Եթե ժողովրդական բանահյուսությունը, այնուամենայնիվ, անցյալ դարի սկզբներից արժանացել է հայ և այլազգի

բանահավաքների և բանագետների պատշաճ ուշադրությանը, ապա կիրառական արվեստը համեմատաբար քիչ է ուսումնասիրվել մեզանում: Սերիկ Դավթյանի ուսումնասիրությունը գալիս է լրացնելու այդ բացը:

Աշխատությունը բաղկացած է ութ գլուխներից. ԳՈՐԾՎԱԾՔ, ԴԱՋԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԱՍԵՂՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԺԱՆՅԱԿԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԳՈՐԳԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՈՍԿԵՐՉՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐԾԱԹԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ԿԱՇՈՒ ԵՎ ՓԱՅՏԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ, ԽԵՅԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ, ՀԱԽՃԱՊԱԿԻ ԵՎ ԽՃԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ:

Գիրքն ունի նաև ԱՌԱՋԱԲԱՆ, ՎԵՐՋԱԲԱՆ, ՆԿԱՐՆԵՐԻ ՑԱՆԿ և ռուսերեն ու անգլերեն լեզուներով ամփոփագրեր:

Չնայած անցյալում իր ապրած քաղաքական անբարենպաստ պայմաններին (կոտորած, բռնի տեղահանություն, գաղթ, եղեռն), հայ ժողովուրդը կարողացել է ստեղծել ուլարգացնել իր ազգային բարձր մշակույթը՝ գիտությունը, գրականությունը, արվեստը, ժողովրդական բանահյուսությունն ու կիրառական արվեստը:

Սերիկ Դավթյանի ուսումնասիրությունն աչքի է ընկնում նախ փաստական նյութի հարստությամբ ու բազմազանությամբ: Ուսումնասիրությունն ընդգրկում է Արևելյան, Արևմտյան, պատմական ու ժամանակակից Հայաստանի, ինչպես նաև ի սփյուռս աշխարհի ցրված հայազգի երկսեռ վարպետների ստեղծագործությունները:

Հմուտ արվեստաբանը մասնագիտորեն վերլուծում, բնութագրում, գնահատում և հատկապես ձեռքի տակ եղած փաստական նյութերի հիման վրա ցույց է տալիս, որ հին, միջին, նոր և նորագույն դարերի հայկական կիրառական արվեստը Հայաստանի նախաբնիկ ցեղերի կիրառական արվեստի օրինաչափ շարունակությունն ու զարգացումն է:

ՆՎԻՐԱԿԱՆ ԱՆԻՆ

Վերջերս Երևանի պետական համալսարանի հրատարակչությունը լույս ընծայեց պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Թադևոս Հակոբյանի «Անի» աշխատության երկրորդ գիրքը: Ընթերցողների ուշադրությանն ենք ներկայացնում հեղինակի «Երկու խոսք»-ը:

«Աշխատության սույն գրքում բավական մանրամասնորեն և քննական լույսի տակ շարադրված են ոչ միայն կանգուն Անիի (1045 թվականից մինչև 14-րդ դարի վերջերն ընկած շրջանի) քաղաքական ելևէջներով հարուստ պատմությունը, սոցիալ-տնտեսական, մշակութային կյանքի, բարեկարգման, քաղաքաշինության, քաղաքի անկման և ամայացման հանգամանքներն ու պայմանները, այլև նրա հետագա շրջանի՝ արդեն հնավայրի վերածված երբեմնի հռչակված մայրաքաղաքի ճակատագրի կարևոր պահերի ու անցքերի ընդհանուր տեսությունը՝ հուշարձանների ու հնությունների վիճակը, ժամանակի ընթացքում դրանց մեծ մասի ոչնչացումը բնական տարերքի և մարդկանց կողմից, Կարսի մարզի հետ Անի հնավայրի միացումը Ռուսաստանին, հնագիտական երկարամյա ուսումնասիրություններն ու դրանց արդյունքները, հայ, ռուս և օտարազգի այցելուների դիտումները, հուշերը, կարծիքներն ու ենթադրությունները, Անիի հնադարանն ու նրա գործունեությունը և այլն:

Առանձնակի ուշադրություն է դարձված առ այսօր վիճելի համարվող մի շարք հարցերի՝ քաղաքի անկման, կործանման ու ամայացման ժամանակի և հանգամանքների, հասարակական ու սոցիալական երևույթների, ճարտարապետական ու մշակութային կապերի և փոխադարձ ազդեցությունների, արտագաղթերի, Շադադյանների և Զաքարյանների տիրապետության ժամանակաշրջանի բնութագրման ու գնահատման և այլ խնդիրների վրա:

Գրքի վգալի մասը նվիրված է Անիի բուռն զարգացման երկրորդ ժամանակաշրջանի՝ Զաքարյանների իշխանության շրջանի, հարցերի պատմագիտական համակողմանի լուսաբանմանը, որի համար գրավոր աղբյուրներից բացի փաստական հարուստ և հուսալի հիմք են ծառայել հնագիտական պեղումներով հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները, տարբեր վիճակում մեզ հասած հուշարձաններն ու հնությունները:

Գրքին կցվում է քաղաքի ընդհանուր հատակագիծը, որի վրա նշանակված են հնագույն ժամանակներից մինչև քաղաքի կործանումն ու ամայացումն ընկած բոլոր դարերի՝ մեզ հայտնի, կարևոր հուշարձանները, կառույցները և հնությունները»:



«ЭЧМИАДЗИН»
ОФИЦИАЛЬНЫЙ ЖУРНАЛ ЭЧМИАДЗИНСКОГО КАТОЛИКОСАТА
ИЮЛЬ 1982 Г.

1. Редакционное слово. О письме от 14 июля, направленное Его Святейшеством предстоятелю восточной епархии армян в США архиепископу Торгому Манукяну и епархиальному совету (стр. 3—4).

2. Письмо от 14 июля Его Святейшества, направленное предстоятелю восточной епархии армян в США, архиепископу Торгому Манукяну и почтенному епархиальному совету (стр. 5—8).

3. В этом номере журнала опубликован также план объединении армянской церкви в Америке (стр. 9—11).

4. Письмо Его Святейшества архиепископу Торгому Манукяну от 8 сентября 1982 г. (стр. 12—14).

5. Сообщение (стр. 15).

6. Церквная жизнь: Сведения о совершенных литургиях, проповедей, церковных мероприятиях в Эчмиадзинском Кафедральном Соборе за июль месяц (стр. 16—18).

7. **Иеромонах Затик Аветикян.** Новая детская периодика. Под председательством и редакцией предстоятеля восточной епархии армян в США архиепископа Торгома Манукяна вышла в свет детская газета под заглавием «Проснись», цель которой пробудить и поддерживать любовь в душах армянских детей к родному языку и к истории народа». В газете под рубрикой «Современная Армения» в обобщенном виде дается армянским детям о географическом положении, расстянии, границах, и о столице Родины—Ереване. А также о том, что «В Армении находится первоармянская церковь—Св. Эчмиадзин и католикосат, где пребывает Его Святейшество Католикос всех армян. Вазген I (стр. 19—20).

8. **Диакон Айк Чилингарян:** Посещение группы молодежной организации американских армян. Армении и св. Эчмиадзина с 11 июня по 7 июля (стр. 21—23).

9. Съезд религиозных деятелей СССР в г. Загорске с 6 по 8 июля (стр. 24—26).

10. Паломничество группы французских армян в св. Эчмиадзин с 23 по 30 июля (стр. 27—28).

11. **Старший священник Арамаис Мирзаян:** Открытие армянского центра в Сиднее 27 марта (стр. 29—31).

12. Житие о проповеди апостола Фаддея, его прибытие в Армению и о мученичестве. И житие Сандухта, дочери армянского царя Санатрука. Предисловие **Артуна Атитяна** (стр. 32—34).

13. Житие святого апостола Фаддея и девы Сандухта. Перевод жития с древне-армянского Артуна Атитяна (стр. 35—41).

14. **Архимандрит Анания Арабаджян:** Армянские библиографы Езник Кохбацы, его апологетический труд «опровержение сект» Исследование (стр. 42—47).

15. **Виктор Петросянц:** Армянские женщины—защитницы отечественной культуры в 12—19 вв. (стр. 48—57).

16. **Володя Абрамян:** Арменоведческие издания в Армении и за рубежом (стр. 58—60).



„ETCHMIADZIN"
OFFICIAL JOURNAL OF HOLY ETCHMIADZIN
(JULY 1982)

1. Two words of the editorship about the letter dated 14-th July of His Holiness, addressed to Archbishop Torgom Manookian, the prelate of the eastern diocese of the U.S.A. armenians, and to the Diocesan Council (pages 3—4).

2. The letter of His Holiness, dated 14-th July, addressed to Archbishop Torgom Manookian, the prelate of the eastern diocese of the U.S.A. armenians, and to the honourable Diocesan Council (pages 5—8).

3. In this number of the journal it is published also „the project for the union of the Armenian Church in America" (pages 9 -11).

4. The letter of His Holiness to Arcbbishop Torgom Manookian, dated september 9-th (pages 12—14).

5. Communiqué (page 15)

6. Divine liturgy services and sermons delivered in the Holy Cathedral and description of Church festivities in the Holy See during the month of July (pages 16—18).

7. **Reverend Zatik Avetikian**— It is published in U.S.A. a new journal for children by the name „Zartir" (Awake), by the editorship of Archbishop Torgom Manookian, the prelate of the eastern diocese of U.S.A. armenians. The aim of this journal is to give to the armenian children informations, about the fatherland, the Armenian Church and the history of the people (pages 19—20)

8. **Deacon Haig Tchilingarian**— The visit to the fatherland and the Holy See of St. Etchmiadzin of the Young Armenians' Union of U.S.A., during the days from 11-th June to 7-th July (pages 21—23).

9. The meeting in Zagorsk of the U.S.S.R, clergymen, during the days of 6—8 July (pages 24—26).

10. The group of the Armenian pilgrims of France in the Holy See, during the days of 23—30 July (pages 27—28).

11. **Archpriest . Aramayis Mirzayan**—The inauguration of Sydney's Armenian center, on the 27-th of March (pages 29—31).

12. Martyrology of Thaddeus apostle's mission about his coming to Armenia and his martyrdom. Witnessing about Armenian king Sanatroog's daughter Sandookhd. Introductory word of **Arthoon Hadidian** (pages 32- 34).

13. Witnessing of Saint Thaddeus apostle and martyrology of virgin Sandookhd. The translation of the witnessing to the modern armenian by **Arthoon Hadidian** (pages 35—41).

14. **Reverend Ananya Arabadjian**— Armenian authors: Yeznik Goghbatzi and his apologetic work about the sects. A study (pages 42—47).

15. **Victor Petrossiantz**—Armenian ladies who have been defenders of the Armenian culture, XV—XVIII centuries (pages 48—57).

16. **Volodya Abrahamian**—Armenological publications in Armenia and abroad (pages 58—60)



„ETCHMIADZINE"
ORGANE OFFICIEL DU SAINT-SIEGE D'ETCHMIADZINE
(JUILLET 1982)

1. Annotation de la rédaction sur la lettre du 14 juillet 1982 de Sa Sainteté Vasken Ier adressée à l'archevêque Torgom Manoukian, prélat du diocèse des Arméniens des Etats-Unis (région orientale), et au Conseil diocésain (pages 3—4).

2. Texte de la lettre du 14 juillet 1982 de Sa Sainteté adressée á l'archevêque Torgom Manoukian et au Conseil diocésain (pages 5—8).

3. Texte du projet pour l'union de l'Eglise arménienne aux Etats-Unis (pages 9—11).

4. Lettre du 8 septembre 1982 de sa Sainteté ā Mgr. Torgom Manoukian (pages 12—14).

5. Communiqué (page 15).

6. Brèves informations concernant la célébration des saintes messes, les sermons prononcés à cette occasion et d'autres cérémonies religieuses qui ont eu lieu dans la cathédrale de Saint-Etchmiadzine au cours du mois de juillet 1982 (pages 16—18).

7. **Père Zatik Avétikian**—Compte rendu du nouveau périodique arménien pour enfants intitulé „Zartir" (éveille-toi). Le périodique dont le but est „d'éveiller et de garder vivace dans l'âme de la nouvelle génération arménienne de la Diaspora l'amour envers sa langue maternelle et l'histoire de son peuple" paraît à New York sous les auspices de l'archevêque Torgom Manoukian, prélat du diocèse des Arméniens des Etats-Unis (pages 19—20).

8. **Diacre Haïk Tchilingarian**—„La visite des représentants de l'Union de la Jeunesse Arménienne des U.S.A. en Arménie et au Saint-Siège d'Etchmiadzine du 11 juin au 7 juillet 1982 (pages 21—23).

9. Réunion des représentants du clergé des Eglises de l'U.R.S.S. tenue à Zagorsk du 6 au 8 juillet 1982 (pages 24—26).

10. Visite au Saint-Siège d'Etchmiadzine d'un groupe de pèlerins de la communauté arménienne de France (pages 27—28).

11. **Père Aramaïs Mirzayan**—"Inauguration du Centre culturel arménien de Sydney (pages 29—31).

12. Témoignage sur l'évangélisation, l'arrivée en Arménie et le martyre de l'apôtre Taddée. Martyre de la vierge Sandoukhte, fille de Sanatrouk, roi des Arméniens (introduction de **A. Hatitian**)—(pages 32—34).

13. Texte du témoignage sur l'apôtre Taddée et du martyre de la vierge Sandoukhte (traduit en arménien moderne par **A. Hatitian** (pages 35—41).

14. **Père Anania Arabadjian**—„Ecrivains arméniens: Eznik de Kolb, son ouvrage apologétique intitulé „Réfutation des sectes" (étude)—(pages 42—47).

15. **Victor Pétrossiants**—„Les femmes arméniennes connues en Arménie aux XVe—XVIIe siècles sous le nom de „défenseurs du patrimoine culturel des Arméniens" (pages 48—57).

16. **Volodia Abrahamian**—„Publications des études arménologiques en Arménie et dans la Diaspora" (pages 58—60).



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հուլիս 14 թվակիր նամակը՝ ուղղված ԱՄՆ-ի Հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և պատվարժան թեմական խորհրդին. խմբագրության խոսքը 3
Ամենայն Հայոց Հայրապետի նամակը Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին և թեմական խորհրդին. 5
Ուղեգիծ Ամերիկայի մէջ Հայաստանեայց Եկեղեցւոյ միացման համար . . . 9
Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի երկրորդ նամակը գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանին առաջնորդ արևելյան թեմին Միացյալ Նահանգաց 12
Հաղորդագրություն 15
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16
ԶԱՏԻԿ ԱԲԵՂԱ ԱՎԵՏԻՔՅԱՆ—Մանկական նոր պարբերական 19
ՀԱՅԿ ՍԱՐԿԱՎԱԳ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ—Ամերիկահայ Եկեղեցասեր Երիտասարդաց կազմակերպության խմբի այցելությունը Մայր Հայրենիք և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
ՍՍՀՄ կրոնական գործիչների հավաքը Զագորսկում 24
Ֆրանսահայ ուխտավորների խումբը Մայր Աթոռում 27
ԱՐԱՄԱՅԻՍ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՄԻՐԶԱՅԱՆ—Սիդնեյի Հայ Կեդրոնի բացման հանդիսությունը 29
ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ—Վկայաբանություն Թադեոս առաքյալի քարոզության, նրա Հայաստան գալու և նահատակության մասին և վկայություն Սանատրուկ Հայոց արքայի դուստր Սանդուխտի 32
Վկայություն Սուրբ Թադեոս առաքյալի և վկայաբանություն Սանդուխտ կույսի . . 35
ԱՆԱՆԻԱ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՐԱԲԱՋՅԱՆ—Հայ մատենագիրներ. Եղնիկ Կողբացի . . 42
ՎԻԿՏՈՐ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ—Հայրենական մշակույթի պաշտպան հայ կանայք . . . 48
Հայագիտական հրատարակություններ 58

«Эчмиадзин» официальный журнал Эчмиадзинского Католикосата . . . 61
„Etchmiadzin" official journal of Holy Etchmiadzin 62
„Etchmiadzine" organe officiel du Saint-Siege d'Etchmiadzine 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է տպագրության 28.7.1982 թ.: Ստորագրված է տպագրության 9.9.1982 թ.
Տպագրական 4 մամուլ+3 ներդիր, թուղթ 60×84 1/8, պատվեր 615:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան, 1982 թ.